

Վազգեն Դազարյան

ՀԱՄԱԿՈՎԿԱՍՅԱՆ

ԱՅԲՈՒԲԵՆԻ

ՆԱԽԱԳԻԾ

Вазген Казарян

ПРОЕКТ

ОБЩЕКАВКАЗСКОГО

АЛФАВИТА

Деловое 45 25 7000 Сводный

Сводный Сводный:

14.02.2013 г.


Клиент Клиент

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45 46 47 48 49 50 51 52 53 54 55 56 57 58 59 60 61 62 63 64 65 66 67 68 69 70 71 72 73 74 75 76 77 78 79 80 81 82 83 84 85 86 87 88 89 90 91 92 93 94 95 96 97 98 99 100


Վազգեն Ռաֆայելի Ղազարյան

ՀԱՄԱԿՈՎԿԱՍՅԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՆԱԽԱԳԻԾ

198476



ԵՐԵՎԱՆ
Հեղինակային հրատարակություն
2012



**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագիր՝

*բանասիրական գիտությունների դոկտոր
Մարգարիտ Խաչիկյան*

ՀՏԴ 801.4
ԳՄԴ 81-1
Ղ 158

Ղագարյան Վազգեն Ռաֆայելի

Ղ 158 Համակովկասյան այբուբենի նախագիծ / Վ.Ռ. Ղա-
զարյան. – Երևան: Հեղինակային հրատարակություն,
2012. – 336 էջ:

Հեղինակը, քննելով հյուսիսկովկասյան լեզուների հնցու-
նաբանությունը, վեր է հանում դրանց բացառիկ հարուստ
բաղաձայնական համակարգերի և այդ լեզուների ներկայիս
ռուսատառ այբուբենների միջև կառուցվածքային անհամա-
պատասխանությունը և շեշտում մեծամասամբ վտանգված
այս լեզուների համար սեփական և անկախ գրային համա-
կարգերի ստեղծման անհրաժեշտությունը:

Նա արևմտա- և արևելակովկասյան 37 լեզուների համար
առաջարկում է տառ-հնցուն փոխմիարժեքությամբ օժտված
միանգամայն նոր և ընդհանրական այբբենակարգ՝ հիմնված
Հարավային Կովկասի և Հայկական Լեռնաշխարհի երեք
պատմական այբուբենների նշանակետման սկզբունքների և
գրաֆիկական տարրերի ձևաբանական կիրառության վրա:

Գիրքը բաղկացած է հայերեն և ռուսերեն համարժեք մասե-
րից և ավարտվում է անգլերեն ընդարձակ ամփոփմամբ:

ISBN 978-9939-0-0603-1

ՀՏԴ 801.4
ԳՄԴ 81-1

Տպագրված է «Փրինթինֆո» տպագրատանը

© Ղագարյան Վազգեն, 2012 թ.

Հայրիկս՝

ԶԶ ԳԱԱ ակադեմիկոս

Ռաֆայել Ավետիսի Ղազարյանի (1924-2007)

հիշատակին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	9
Մաս Ա. Կովկասյան լեզուների հնչյունաբանությունը	14
§1. Ներածություն այբուբենի	14
§2. Ներածություն հնչյունաբանության. Միջազգային հնչյունական այբուբեն	18
<i>Բաղաձայներ</i>	20
<i>Չայնավորներ</i>	25
§3. Կովկասյան հնչյունաբանության համառոտ ակնարկ	27
§4. Արևմտակովկասյան լեզուներ	32
§5. Արևելակովկասյան լեզուներ	37
§6. Հնչյունները գրաբանության համատեքստում	42
Մաս Բ. Հարավկովկասյան այբուբենների գրաֆիկական վերլուծությունը	51
§1. Գրի ավանդույթը Կովկասում	51
§2. Հարավկովկասյան ընդհանրացված նշանակարգ	60
<i>Ծնորդներ</i>	61
<i>Ածանցյալ ձևեր</i>	64
<i>Եզրակացություն</i>	71
Մաս Գ. Կովկասյան այբուբեն	73
§1. Հյուսիսկովկասյան լեզուները և հարավկովկասյան («մաշտոցյան») ընդհանրացված նշանակարգը	73
§2. Նոր այբուբեններ	80
§3. Արևմտակովկասյան այբուբեն	82
<i>Տառերի այբբենական հերթակարգը</i>	90
<i>Արխագերեն և արագերեն</i>	93
<i>Աղըղերեն</i>	98
<i>Կաբարդերեն</i>	101
<i>Ուրըխերեն</i>	104

§4. Արևելակովկասյան այբուբեն	106
<i>Արևելակովկասյան այբբենական հերթակարգը</i>	109
<i>Ավար-անդյան ճյուղ. ավարերեն</i>	111
<i>Ավար-անդյան ճյուղ. անդերեն</i>	114
<i>Ավար-անդյան ճյուղ. ախվախերեն</i>	117
<i>Ավար-անդյան ճյուղ. կարատերեն</i>	119
<i>Ցեզյան ճյուղ. ցեզերեն</i>	120
<i>Ցեզյան ճյուղ. խարշերեն</i>	124
<i>Ցեզյան ճյուղ. հինուխերեն, հունզերեն, բեժտերեն</i>	125
<i>Լեզգյան ճյուղ. լեզգերեն</i>	127
<i>Լեզգյան ճյուղ. թաբասարաներեն</i>	129
<i>Լեզգյան ճյուղ. ռութուլերեն և ծախուրերեն</i>	131
<i>Լեզգյան ճյուղ. աղուլերեն</i>	133
<i>Լեզգյան ճյուղ. բըռըծերեն և բուդուլիսերեն</i>	135
<i>Լեզգյան ճյուղ. արշերեն</i>	137
<i>Լակերեն առանձնակ</i>	139
<i>Դարգյան բարբառախումբ. դարգերեն</i>	141
<i>Նախյան ճյուղ. չեչեներեն</i>	144
<i>Նախյան ճյուղ. ինզուլերեն</i>	146
<i>Խինալըզ առանձնակ</i>	147
§5. Ալանաց (օսական) այբուբեն	149
§6. Ուդիերենի «աղվանից» այբուբեն	152
§7. Հաշվարացման սկզբունքները	158

Ամփոփում 161

Проект общекавказского алфавита 163-324

A Proposal for Pan-Caucasian Alphabet (Synopsis) 325-336

Երախտիքս եմ հայտնում ընկերոջս՝
Յրանտ Տեր-Աբրահամյանին, որի հետ
միասին ենք մտահղացել ներկա նա-
խագիծը, ինչպես նաև բոլոր նրանց,
ովքեր մասնակցություն են ունեցել
գրքի մշակման, խմբագրման և հրա-
տարակման գործում:

ՆԱԽԱԲԱՆ

Կովկասյան տարածաշրջանը լեզուների խտությամբ և բազմազանությամբ աշխարհում գրավում է առաջնային դիրքերից մեկը: Այս բազմազանությունը դեռ վաղ միջնադարից իր արտացոլումն է գտել հունա-հռոմեական աղբյուրներում, հայկական «Աշխարհացոյց»-ում, արաբ ճանապարհորդների և աշխարհագիրների տարեգրություններում: Պլինիոսի տեղեկությունների համաձայն՝ օրինակ Դիոսկուրիաս քաղաքում (հուն. Διοσκουριάς, ժամանակակից Սուխումը) հռոմեացիները գործավարությունն իրականացնում էին 130 թարգմանների օգնությամբ, իսկ XIV դ. արաբ մատենագիր Աբու-լ-Ֆիդան Կովկասն անվանում է *Ջարալ ալ-Ալսուն*՝ Լեզուների Լեռ: Ներկայումս այստեղ կողք-կողքի կենտրոնացած են հիսուսից ավելի մեծ ու փոքր ազգեր և էթնիկ խմբեր, ներկայացված են հինգ խոշոր լեզվաընտանիքներ, որոնցից չորսը՝ առկա հնագույն ժամանակներից, երեքը՝ պատմականորեն պարփակված միայն Կովկասում, երկուսը՝ վտանգված, մեկը՝ անհետացման եզրին:

Գտնվելով հնդեվրոպական, սեմական և ալթայյան խոշոր լեզվաընտանիքների տարածման, շփման և վերածածկման ծիրում՝ Կովկասը, ենթադրաբար պայմանավորված ռելիեֆի առանձնահատկություններով և լեռնային շրջանների հարաբերական մեկուսացվածությամբ, կարողացել է պահպանել սեփական երեք բնիկ լեզվաընտանիքների որոշակի ներկայացուցչականություն և բավարար բազմազանություն՝ խուսափելով անհետացումից կամ վերածումից լեզվական առանձնակի (language isolate):

Ծանոթագրություն. Լեզվական առանձնակներ են այն լեզուները, որոնց գենետիկ կապերն այլ՝ հայտնի ծագում ունեցող լեզուների հետ բավարար հիմնավորվածությամբ չեն ուրվագծվում:

Նմանատիպ լեզուներ կամ մեկ լեզվից բաղկացած «լեզվաընտանիքներ» են բասկերենը, այներենը, կորեերենը, Աֆրիկայի, Ամերիկայի և Ասիայի մի շարք ցեղային լեզուներ:

Կան նաև հարաբերական առանձնակ համարվող լեզուներ, որոնք, պատկանելով հանդերձ որևէ լեզվաընտանիքի, ընդգրկված չեն վերջինիս ճյուղերում: Զնդեվրոպական լեզվաընտանիքում նման կարգավիճակ ունեն հայերենը, հունարենը և ալբաներենը, որոնց երբեմն անվանում են «հնդեվրոպական առանձնակներ»:

Ներկայումս հաշվվում են կովկասյան 41 լեզուներ¹, որոնք տվյալ տարածաշրջանում ենթադրվում են որպես բնիկ վերջին առնվազն 4000 տարիների կտրվածքով և, համաձայն առավել տարածված եզրութաբանության, խմբավորվում են ըստ հետևյալ լեզվաընտանիքների².

1. *Հյուսիսարևմտյան կովկասյան (աբխազ-ադղդեական, չերքեզական, արևմտակովկասյան) լեզվաընտանիք*: Այս ընտանիքին են պատկանում աբխազերենը, աբազերենը, չերքեզերենը (արևմտյան՝ ադղդերեն և արևելյան՝ կաբարդերեն տարբերակներով) և այժմ մեռած ուբըխերենը, որի վերջին կրողը՝ Թևֆիկ Էսենչը, վախճանվել է 1992թ. Թուրքիայում: Այս լեզուների կրողների մեծագույն հատվածը 19-րդ դարի կեսերից ի վեր բնակվում է Կովկասի սահմաններից դուրս՝ ռուսական նվաճումների հետևանքով վտարվելով կամ զանգվածաբար գաղթելով Օսմանյան կայսրության տարածք, ինչի արդյունքում բազմալեզու և համասեռ սփռմամբ այս լեզվաընտանիքն այժմ բաժանվել է փոքրաբանակ բնակչությամբ մի քանի մեկուսի անկլավների: Այս իրողությունը մեծապես վտանգում և հարցականի տակ է դնում ինդոդր առարկա լեզուների զարգացման հնարավորությունները և անգամ՝ դրանց ապագան:

2. *Հյուսիսարևելյան կովկասյան (դաղստանյան, նախ-դաղըստանյան, արևելակովկասյան) լեզվաընտանիք*: Ունի ներքին մեծ բազմազանություն: Ազգակից լեզուները բաժանված են նախյան, ավար-անդյան, լեզգյան, ցեզյան (դիդոյան), դարգյան ճյուղերի (որոնք իրենց հերթին բաժանվում են առանձին լեզուների կամ բարբառային խմբերի) և երկու առանձնակների՝ լակերենի և խի-

¹ Կրողների թվաքանակի վերաբերյալ տվյալները մոտավոր են՝ հիմնված ընդհանուր գնահատականների վրա:

² Ս. Ստարոստինը և Ս. Նիկոլանն առաջ են քաշել միասնական հյուսիս-կովկասյան նախալեզվի գաղափարը, ինչը, սակայն, լայն արձագանք չի գտել մասնագետների շրջանում: Старостин С. А., Николаев С. Л. *Севернокавказские языки и их место среди других языковых семей Передней Азии*. Сб. Лингвистическая реконструкция и древнейшая история Востока. М., 1984; Sergei Starostin & Sergei Nikolayev. *A Comparative Dictionary of North Caucasian Languages*, 1994, Preface (<http://starling.rinet.ru/Texts/caucpref.pdf>).

նալրագրերնի: Այս ընտանիքի առանձին լեզուներ այժմ ունեն ընդամենը մի բանի հազար կրող և, պարփակվելով մեկ գյուղի կամ գյուղախմբի սահմաններում (www.unesco.org/culture/languages-atlas/), նվազելով հանգել են *հույժ վտանգված* կամ *մեռնող* լեզվի կարգավիճակի:

3. *Հարավկովկասյան (բարթվելական) լեզվաընտանիք*: Տարածված է կովկասյան լեռնաշղթայից հարավ և ներառում է վրացերեն, մեգրելերեն, սվաներեն և լազերեն լեզուները:

Հյուսիսային և Հարավային Կովկասում պատմականորեն լայն տարածում ունեն նաև հնդեվրոպական և ալթայյան լեզվաընտանիքները. առաջինը՝ ներկայացված հայերեն, պարսկերեն, հունարեն, օսերեն, ռուսերեն, ուկրաիներեն, քրդերեն, թաթերեն և թալիշերեն, իսկ երկրորդը՝ ադրբեջաներեն, թուրքերեն, կալմիկերեն, կոմիկերեն, բալկարերեն, կարաչայերեն և նոդայերեն լեզուներով: Սեմական լեզվաընտանիքը ներկայացնում է ասորերենը (նոր արամեական ասորերեն):

Հյուսիսկովկասյան լեզուների ներկայիս վտանգված վիճակը և դրանց ապագայի անորոշությունը պայմանավորված են ոչ միայն Կովկասի պատմաբաղաբական և կրոնամշակութային իրողություններով, այլև էթնոլեզվային հանրությունների ինքնության ձևավորման կարևորագույն բաղադրիչներից մեկի՝ դարավոր գրային ավանդույթի և ժառանգության բացակայությամբ, ինչը խոցելի է դարձնում տվյալ փոքրաբանակ հանրությունը քաղաքական, կրոնական և մշակութային էթնաանսիայի առջև:

Կովկասյան բնիկ երեք լեզվաընտանիքների լեզուներից միայն վրացերենն է, որ ունի բազմադարյա շարունակական գրավոր մշակույթ՝ սկզբնավորված, ըստ տիրապետող կարծիքի, մ.թ. 5-րդ դարում սեփական այբուբենի ստեղծմամբ: Կովկասյան մնացյալ լեզուներից սեփական գիր և գրականություն (առնվազն՝ թարգմանական) ունեցել է նաև միջնադարյան Աղվանքի պետական լեզուն՝ աղվաներենը (լեզգյան լեզվաճյուղի անդամ), որի ուղղակի ժառանգորդն է համարվում ժամանակակից ուղիերենը: Արևելակովկասյան որոշ լեզուներում իսլամական մշակույթի ազդեցությամբ միջնադարում երբեմն կիրառվել է արաբական

այբուբենի ձևափոխված և հարմարեցված տարբերակը՝ *աջամը*, որը, սակայն, պատմական զանազան գործոնների հետևանքով տիրապետող չի դարձել տվյալ լեզվային միջավայրում:

Հյուսիսկովկասյան լեզուների համար կանոնակարգված գրային համակարգեր ներմուծվել են միայն 20-րդ դարում՝ սկզբնապես՝ լատինագիր, ապա՝ 30-ականների վերջից՝ սլավոնագիր հարմարեցված այբուբենների տեսքով, որոնք, համակարգային իմաստով լինելով բացառիկ թերի, չնայած այս լեզուներից մի քանիսի գրական զարգացումը խթանելու գործում ունեցած դրական դերին՝ մինչ օրս լրջագույն խոչընդոտ են հյուսիսկովկասյան լեզուների գրառության ոչ միայն գեղագրական, ներդաշնակ, այլև պարզագույն կիրառական և գործառական տեսանկյուններից, քանզի ներկայիս ռուսահեն այբուբեններում այն աստիճան են տարածված բազմատառ զուգորդումները, որ հանգեցնում են այբբենականության սկզբունքների համատարած խաթարման:

Բացի գրային համակարգերի անկատարությունից, կովկասյան բնիկ լեզուների գավառայնացման, աստիճանական արտամղման և մոռացության գործում իր դերն ունի նաև ռուսաց լեզվի պետական կարգավիճակն ու գերիշխող էթնումշակութային ազդեցությունը: Մի շարք լեզուներ, որոնցից շատերը համաշխարհային մասշտաբով բացառիկ էին իրենց հնչաբերական կառուցվածքներում, կամ արդեն անհետացել են, ինչպես ուբը - խերենը, կամ հասել մոռացության եզրին և նվազելով հանգել մի քանի հարյուր կամ հազար կրողի, ինչպես օրինակ արշերենը, ուդիերենը, քըռըծերենը, ախվախերենը, հինուխերենը, բուդուխերենը, դոդոբերենը, խւարշերենը³, բեժտերենը, հունգերենը, ցեգերենը, աբազերենը և այլն:

Ստեղծված կացությունից հնարավոր էլքն այս լեզուներին զարգացման նոր ազդակների և հնարավորությունների ընձեռումն է, որի միջոց որպես մեզ պատկերանում է տվյալ լեզուներին հարմարեցված նոր և կատարյալ այբուբենների մշակումը՝

³ Գրքի շարադրանքում «և» մասնիկը կիրառվում է w ձայնեղ շրթնայնացած վեղարային նայի համար:

զերծ քաղաքական և լեզվամշակութային որևէ ենթատեքստից կամ պարտադրող ու ստորադասող ազդեցությունից և օժտված հնչյունային լիարժեք ներկայացուցչականությամբ: Դրա լավագույն օրինակն են ներկայիս Հարավային Կովկասի երկու մեծ ժողովուրդների՝ հայերի և վրացիների (իսկ միջնադարում նաև՝ աղվանների) երկհազարամյա քննություն անցած անխաթար և կատարյալ այբբենական համակարգերն իրենց տառ-հնչյուն փոխմիարժեքության բարձրագույն աստիճանով:

Վերջիններս կովկասյան տարածաշրջանի մշակութային ժառանգության բացառիկ նմուշներից են և իրենց եռաբազմությամբ միավորել են Հարավային Կովկասի և Հայկական Լեռնաշխարհի երեք պետությունները միասնական, սակայն միևնույն ժամանակ փոխադարձաբար անկախ և յուրօրինակ գրավոր մշակույթի ուլորտում: Աղվանից գրի անհետացումից և մոռացումից հետո այդ եռամիասնությունը վերկանգնելու մի փորձ է գրային այս հնագույն արեալից դուրս մնացած հյուսիսկովկասյան լեզվուլորտի անդամ մյուս լեզուների համար հարավկովկասյան⁴ այբուբենների տառաստեղծ հիմքով, ուստիև՝ գրաֆիկորեն նման, բայց և՛ ինքնատիպ, ճանաչելի և ամենակարևորը՝ լիարժեք հնչյունային գրային համակարգերի ներմուծման գաղափարը՝ խարսխված արդի հնչյունաբանության և գրաբանության նվաճումների վրա:

⁴ «Հարավկովկասյան» եզրն ունի երկակի կիրառություն՝ լեզվաբանական (քարթվելական լեզուներ) և աշխարհագրական (Հարավային Կովկաս), որոնք ծագումնային իմաստով կապված չեն միմյանց: Ներկա շարադրանքում այն գործածվում է գերազանցապես աշխարհագրական իմաստով:

ՄԱՍ Ա. ԿՈՎԿԱՍՅԱՆ ԼԵՉՈՒՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

§1. Ներածություն այբուբենի

Քաղաքակրթության պատմության ընթացքում լեզուների պրակտիկ գրառման նպատակով կիրառվել են բազմաթիվ և տրամաբանորեն միանգամայն բազմազան գրային համակարգեր՝ գաղափարագիր, վանկա-գաղափարագիր, վանկագիր, աբուգիդա, աբջադ (բաղաձայնագիր), այբուբեն, սղագիր և այլն, որոնք ըստ ձևաբանության կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի՝ իմաստային և հնչյունային տիպի համակարգերի⁵: Հարկ է նշել, որ գրի նշված երկու խմբերում էլ առավել կամ պակաս չափով օգտագործվում են մյուս խմբին պատկանող նշաններ. օրինակ՝ ճապոնական գիրն օգտագործում է ինչպես չինարենից փոխառված ու ձևափոխված բառային և իմաստային նշաններ՝ գաղափարագրեր (*կանջի*), այնպես էլ սեփական մոդիֆիկացիայի երկու վանկագիր (*հիրագանա* և *կատականա*): Հին եգիպտական «հիերոգլիֆ» (սրբազնագիր) գաղափարագրությունը և միջագետքյան սեպագիրը ևս պարունակում են ինչպես զուտ հնչյունային, այնպես էլ իմաստային նշաններ (բառեր, քերական ածանցներ, որոշիչներ): Տեղի ունի և հակառակը. զուտ հնչյունային համակարգերը (այբուբեն, վանկագիր) կարող են գործածել իմաստային գրի տարրեր՝ թվանշաններ, կապգրություններ, տարբեր նշանակության գաղափարագրեր (օրինակ՝ &, %, \$, §):

Գրի այս բոլոր ձևերում իր առավելագույն պարզությամբ առանձնանում է *այբուբենը*՝ սահմանվող այն սկզբունքով, ըստ որի՝ լեզվի առանձին հնչյուններն արտահայտվում են տառերով կամ դրանց համակցություններով, որոնք *միարժեք* և *կանխատեսելի* հարաբերություն են հաստատում գրված տառերի և արտասանվող բառերի միջև: Լիարժեք կամ զուտ հնչյունային են այն այբուբենները, որոնցում տառ-հնչյուն համապատասխանությունը *փոխմիարժեք* է:

Ընդհանրապես, այբուբեն ասելով նկատի ունեն երկու հիմ-

⁵ I. J. Gelb. *A Study of Writing*. University of Chicago Press, 2nd ed., 1963.

Նական գրային համակարգեր: Առաջինը զուտ բաղաձայնայինն է կամ *աբջաղը* (եզրը՝ արաբական գրի առաջին չորս տառերի անվանումների համադրումից), որը ստեղծվել է մինչ այժմ էլ լայն տարածում ունի սեմական լեզվային միջավայրում: Այս գրատեսակներն ի սկզբանե ձայնավորների համար առանձին տառեր չեն ունեցել և միայն հետագա դարերում են զարգացրել որոշակի կանոններ ու վերնատառ (դիակրիտիկ) նշանների օժանդակ համակարգ, որոնք առավել կամ պակաս ճշգրտությամբ արտացոլում են լեզվի ձայնավորները: Երկրորդը *լիարժեք այբուբենն* է, որն ունի տառանշանների համեմատաբար լրիվ համակարգ բաղաձայների և ձայնավորների գրառման համար⁶: Այս գրի հնագույն տարբերակները մշակվել են Հին Հունաստանում և Փոքր Ասիայում մ.թ.ա. I հազարամյակի սկզբներին և ուղղակիորեն կամ միջնորդավորված կերպով (լատինական և սլավոնական վերածնունդներով) հիմք են հանդիսացել եվրոպական բոլոր հին և ժամանակակից այբուբենների համար:

Բաղաձայնային գիրը երևան է եկել և տարածում գտել դեռևս բրոնզեդարում (մ.թ.ա. II հազարամյակ) Սիրիայի և Պաղեստինի տարածքում բնակվող արևմտասեմական ժողովուրդների միջավայրում: Այբուբենի ի հայտ գալու պատճառները լիովին պարզված չեն, և դրա վերաբերյալ կարծիքները տարամիտում են: Ըստ առավել տարածված տեսության՝ արևմտասեմական այբուբենը ձևավորվել է եգիպտական գաղափարագրության և նրանում դեռ մ.թ.ա. 27-րդ դարում առաջացած զուտ հնչյունային բաղաձայնական համակարգի ազդեցության ներքո⁷: Ուշ բրոնզեդարում կիրառություն է գտել այբբենական գրի երկու տարատեսակ՝ գծային (բոլոր հետագա այբուբենների նախատիպը) և սեպածև (որով գրի է առնվել Ուզարիթ քաղաքի արևմտասեմական լեզուն՝ ուզարիթերենը): Վերջինիս ուրվագիծը սեպածև տեսք է ձեռք բերել միջագետքյան գրամիջոցների գործածման, մասնավորապես՝ տառանշանները հում աղյուսին եղեգնյա գրչածայրով

⁶ Coulmas, Florian. *The Blackwell Encyclopedia of Writing Systems*. 1996.

⁷ Himelfarb, Elizabeth J. *First Alphabet Found in Egypt*, *Archaeology* 53, 1, 2000.

փորագրելու հետևանքով⁸ և ծագումնային կապ չունի բուն միջագետքյան սեպագրի հետ: Գծային գիրը հետագայում բաժանվել է երկու տարբերակի՝ հյուսիսային (փյունիկյան) և հարավային (հին հարավարաբական): Վերջինս իր գոյության ողջ ընթացքում (մինչև մ.թ. 7-րդ դար) մնացել է մաքուր բաղաձայնային արջադի սահմաններում⁹, իսկ առաջինը ժամանակի ընթացքում զարգացրել է ձայնավորների գրառման տարբեր հնարներ (բաղաձայների ձայնավորեցում, վերնատառերի մշակում)՝ նախապատրաստելով հետագայում հույների կողմից փյունիկյան գրի փոխառման և մշակման ընթացքում լեզվի ձայնավոր հնչյունների լիարժեք մուտքը գրային համակարգեր:

Եթե սեմական գրի փյունիկյան տեսակի տարածումը դեպի արևմուտք՝ Հին Հունաստան (որտեղից էլ հետագայում Իտալիա, Եստրուրիա, կենտրոնական Եվրոպա և անդր), գերազանցապես պայմանավորված է եղել Միջերկրականի ողջ ավազանում փյունիկեցիների ծովային բանուկ առևտրով, ապա արևելքում այն գերիշխող է դարձել մ.թ.ա. առաջին հազարամյակի սկզբներին արամեերենի՝ իբրև տարածաշրջանային հաղորդակցության լեզվի սփռմամբ: Արամեերենը ևս, ձևափոխելով և կիրառելով փյունիկյան գիրը, սկիզբ է դրել մերձավորարևելյան մի շարք գրային համակարգերի՝ ասորական, արաբական և եբրայական այբուբեններին, պահլավական գրին, ապա մուտք է գործել հնդկական ենթամայրցամաք որպես *Բրահմի* գիր՝ իր հերթին ծնունդ տալով Հարավարևելյան Ասիայի մի շարք այբուբենների և վանկագրերի (աբուգիդաների):

Եվրոպայում այբուբենը տարածվել է երկու հիմնական ճյուղերով՝ հունական և լատինական, որոնցից վերջինը, սկզբնապես պայմանավորվելով լատիներենի, իսկ ապա ժառանգաբար՝ իսպաներենի, ֆրանսերենի, անգլերենի՝ իբրև միջագային հաղոր-

⁸ J. Friedrich. *Geschichte der Schrift (The History of Writing)*, Heidelberg, 1966.

⁹ Այս գրի հետագա ճյուղավորումն է եթովպական *աբուգիդան* (վանկագրի տեսակ, որում միևնույն բաղաձայնային հիմքով վանկերն արտահայտվում են ծնորդ նշանին մասնիկների հավելմամբ), որը մինչև այժմ էլ կիրառվում է Եթովպիայի և Երիտրեայի լեզուների գրառման համար:

դակցության լեզուների կարգավիճակով, աստիճանաբար ձեռք է բերել համաշխարհային տարածում ու կարևորություն և հիմք ծառայել արդի բազմաթիվ այբուբենների:

Հունական գիրը, առաջնապես հիմք հանդիսանալով լատինական գրի համար, ավելի ուշ՝ բյուզանդական ժամանակաշրջանում քրիստոնեության տարածմանը զուգահեռ, ծնունդ է տվել նաև արևելյան եվրոպայի որոշ լեզուների այբուբեններին՝ ուղղակիորեն փոխառվելով և հարմարեցվելով սեփական հնչյունային համակարգերին ղայտիների, գոթերի, բալկանյան սլավոնների կողմից, կամ մեթոդական հիմք կամ գրաֆիկական մոդել ծառայելով նոր այբուբենների ստեղծման համար, որպիսիք են հայոց, վրաց և ադվանից այբուբենները:

Փոխառյալ այբուբենները, սակայն, ստեղծված և մշակված լինելով աղբյուր լեզվի *հնչյունակարգը* (հնչյունային համակարգը) արտահայտելու համար, ոչ միշտ են լիաձուլվում փոխառող լեզվի հնչակազմին և բազմաթիվ՝ հատկապես միջնադարում հարմարեցված լինելու դեպքերում որոշ մոտավորությամբ են միայն արտահայտում փոխառող լեզուների հնչյունակարգերը: Արդյունքը դրական է՝ ուր փոխառող լեզուն ունի պակաս կամ լավագույն դեպքում հավասար բանակությամբ հնչույթներ: Այս կերպ ստացված այբուբենը լինում է լիարժեք հնչյունային, ինչպիսին են ֆիններենի, էստոներենի, իսպաներենի, իտալերենի լատինատառ այբուբենները, որոնցից առաջին երկու լեզուները պարունակում են լատիներենից պակաս թվով հնչյուններ, իսկ վերջիններն ուղղակիորեն լատիներենի շարունակությունն են՝ համադրելի հնչակազմերով: Սակայն, մեծավ մասամբ, լատինատառ այբուբեններն առավել կամ պակաս անլիարժեքություն, այնուամենայնիվ, կրում են: Ցայտուն օրինակ են ֆրանսերենը, անգլերենը, իռլանդերենը, իսլանդերենը և այլն, որոնց լատինատառ ուղղագրության տրամաբանությունն այն աստիճան է տարբերվում լիարժեք հնչյունային այբուբենի փոխմիարժեքությունից, որ զգալի բարդություններ է հարուցում գրված տառանշանների առանձին հնչյունային արժեքների և իրականում արտաբերվող բառերի հնչողության տրամաբանության տեսանկյունից:

1984



Նմանատիպ իրավիճակի ծայրահեղ օրինակ կարելի է համարել ռուսական գրի հենքով կովկասյան լեզուների համար այբուբենների մշակումը: Եթե լատինական գիրը, իր բոլոր թերություններով հանդերձ, դարերի ընթացքում հարմարեցվելով մեծ քանակությամբ լեզուների կողմից, ձեռք է բերել հավելյալ տառաձևերի և օժանդակ նշանների քիչ թե շատ փոխհամաձայնեցված (կոնվենցիոնալ) համակարգ, ապա ռուսական այբուբենը կովկասյան յուրաքանչյուր լեզվի պարագայում կիրառել է նշանների տարբեր հավաքածուներ՝ հաճախ անտրամաբանական միակցություններով: Լեզուների ուղղագրությունն էլ ավելի է խճճվում բազմատառ անբնական կոմբինացիաներով (xxъlv, klvъ, vlvъ, xxъl, лtvъ, гъlv, kvъ, xvъ, къъ, гъy, xъy, kly, жъy) այն պարզ պատճառով, որ կովկասյան լեզուները, ինչպես կտեսնենք ստորև, իրենց մեծամասնությունում պարունակում են սլավոնական գրի ընձեռած գրաֆիկական հնարավորություններից բազմապատիկ ավելի բաղաձայներ:

Եշտե՞ք սակայն, որ լատինական գիրը ևս, հիմքում լինելով սահմանափակ, 20-րդ դարի սկզբներին կովկասյան տարբեր լեզուների համար լատինատառ գրի ստեղծման փորձերում, միևնույն է, լիովին չի բավարարել դրանց հնչյունային հարստության լիակատար արտահայտման և համաժամանակյա պրակտիկ գրառության պահանջները՝ հետագայում իր դիրքերն արագ զիջելով ռուսայնացման քաղաքականության արդյունքում ներմուծված ոչ պակաս թերի ռուսատառ համակարգերին:

§2. Ներածություն հնչյունաբանության. Միջազգային հնչյունական այբուբեն

Որևէ լեզվի համար այբբենական համակարգի ստեղծման հաջողությունը մեծապես կախված է քննության առարկա լեզվի հնչյունական կառուցվածքի և առանձնահատկությունների հնարավորինս խորը և ճշգրիտ ուսումնասիրությունից¹⁰: Այն իր վերջ-

¹⁰ John Laver. *Principles of Phonetics*. New York, 1994.

Նական արտահայտությունն է ստանում լեզուների հնչակազմերի հստակեցման և բազային նշանային որևէ համակարգի միջոցով ճշգրիտ արտապատկերման արդյունքում:

Լեզուների հնչունաբանության¹¹ գրառման առավել ժամանակակից բազային համակարգը Միջազգային Հնչունական Ալբուբենն է¹² (International Phonetic Alphabet), կրճատ՝ ՄՅԱ կամ IPA¹³: Այն հիմնվում է Միջազգային Հնչունաբանական Անցիացիայի կողմից մշակված հասկացության և եզրութաբանական ժամանակակից հոլովույթի վրա և թույլ է տալիս մեծ ճշգրտությամբ և համեմատական պարզությամբ ներկայացնել աշխարհի լեզուների հնչունային կառուցվածքները: Հիմնված լինելով լատինական գրի նշանային հիմքի վրա՝ այն ունի սիմվոլների հարուստ համակարգ և հնչույթների երանգավորումներն արտահայտելու նպատակով օգտագործում է դիակրիտիկ (օժանդակ) նշաններ:

Ի շրջանցումն կովկասյան լեզուների համար ռուսալեզու գրականության մեջ ներկայացվող հնացած, խառնաշփոթ և իրարամերժ համակարգերի հարուցած բարդությունների՝ ստորև բերվող ողջ շարադրանքը կներկայացվի ՄՅԱ հիմքով: Գիտական գրականության մեջ և համացանցում ՄՅԱ համակարգը և արդի հնչունաբանությունը ներկայացված են ողջ խորությամբ, մանրամասնությամբ և բոլոր հնարավոր մեկնաբանություններով, ուստի տեղի խնայողության նկատառմամբ համակարգի լիակատար նկարագրությունը կթողնենք ընթերցողին, իսկ ստորև միայն համառոտաբար կուրվագծենք կարևորագույն դրույթներն ու եզրերը՝ հետագա շարադրանքում կովկասյան լեզուների հնչունակարգերը դյուրորեն ընկալելի դարձնելու համար:

¹¹ Շարադրանքում տարբերակվում են հնչունաբանություն (phonetics) և հնչաբանություն (phonology) եզրերը: Առաջինն ուսումնասիրում է խոսքի հնչունների ֆիզիկական առաջացման, արտաբերման և ընկալման խնդիրները, իսկ երկրորդը նկարագրում է լեզուներում դրանց դերն ու գործառույթը: Roger Lass. *Phonology: An Introduction to Basic Concepts*. Cambridge University Press, 1984.

¹² International Phonetic Association (1999). *Handbook of the International Phonetic Association: A guide to the use of the International Phonetic Alphabet*.

¹³ http://en.wikipedia.org/wiki/International_Phonetic_Alphabet.


Բաղաձայներ

Բաղաձայները խոսքի այն հնչյուններն են, որոնք առաջանում են բերանի խոռոչի որևէ հատվածում ձայնարտաբերման ուղիների մասնակի կամ լրիվ փակման (վերին և ստորին ծնոտի որոշակի հպման) արդյունքում օդի խտտորվող հոսքում առաջացած ճնշման աճի հետևանքով: Դասակարգվում են ըստ *արտաբերման տեղի, արտասանության միջոցի և ձայնավորման եղանակի*:

Արտաբերման տեղը ցույց է տալիս, թե ձայնարտաբերման ուղիների ո՞ր հատվածում է տեղի ունենում օդի հոսքի խտտորումը: Ստորև բերվող նկարում ուրվագծված է մարդու բերանի խոռոչը, որում թվանշաններով ցույց են տրված արտաբերման տեղերը հայերեն և միջազգային անվանումներով: Բաղաձայներն իրենց անվանումը ստանում են արտաբերման պասիվ և ակտիվ միջոցների՝ *արտաբերիչների* (articulator) անվանումների բաղադիր համակցությամբ. օրինակ, ակտիվ ստորին շրթունքն արտաբերման ընթացքում կարող է հպվել վերին ատամնաշարին՝ առաջացնելով **վ** հնչյունը (որը կսահմանվի որպես *շրթնատամնային*՝ labiodental), կամ վերին շրթունքին՝ առաջացնելով **բ** հնչյունը (որն էլ կսահմանվի որպես *երկշրթնային*՝ bilabial):

Ընդհանուր առմամբ տարբերում են հինգ հիմնական արտաբերիչներ և դրանցով արտահայտվող բաղաձայնային խմբեր.

Բաղաձայների արտաբերման վայրերը



1. Արտաշրթնային (Exo-labial), 2. (Ներ-)շրթնային (Endo-labial), 3. Ատամային (Dental), 4. Կապճային (Alveolar), 5. Ետկապճային (Post-alveolar), 6. Նախաքմային (Pre-palatal), 7. Քմային (Palatal), 8. Վեղարային (Velar), 9. Լեզվակային (Uvular), 10. Ըմպանային (Pharyngeal), 11. Կոկորդային (Glottal), 12. Մակկոկորդային (Epiglottal), 13. Արմատային (Radical), 14. Ետնալեզվային (Postero-dorsal), 15. Միջնալեզվային (Antero-dorsal), 16. Շերքային (Laminal), 17. Կատարային (Apical), 18. Ենթակատարային (Sub-apical):

շրթունքներ՝ *շրթնայիններ* (labial), լեզվի առաջնային հատված՝ *պսակայիններ* (coronal), լեզվի միջին/ետին հատված՝ *ետնալեզվայիններ* (dorsal), լեզվարմատ և մակկոկորդ՝ *արմատայիններ* (radical), հագագ (կոկորդափող)՝ *հագագայիններ* (laryngeal): Պսակայինների դեպքում հնարավոր է երեք տիպի արտաբերում. *կատարային* (apical), երբ լեզվի ծայրն է հպվում պասիվ արտաբերչին (շ, ժ); *շեղբային* (laminal), երբ պասիվ արտաբերչին է հպվում լեզվի շեղբը (ճ, չ, ջ), և *ենթակատարային* (sub-apical) կամ *ետնածալ* (retroflex), երբ պասիվ արտաբերչին հպվելիս լեզուն ծալվում է դեպի ետ (անգլերենի r հնչյունը):

Կան դեպքեր, երբ բաղաձայները կազմվում են երկու կամ մի քանի ակտիվ արտաբերիչների միաժամանակյա գործադրմամբ. այդօրինակ բաղաձայներն անվանվում են *երկրորդային արտաբերման* կամ այլ կերպ՝ *համարտաբերվող* (coarticulated) բաղաձայներ: Դրանց առավել տարածված տեսակներն են. *շրթնայնացում* (labialization), երբ ձայնարտաբերման ժամանակ կլորացվում են շրթունքները (ինչպես անգլերեն quick բառում ի տարբերություն kick բառի); *քնայնացում* (palatalization), երբ լեզվի միջնամասը մոտեցվում է քիմքին (հմմտ. ռուսերեն тьма); *վեղարայնացում* (velarization), երբ լեզվի ետնամասը մոտեցվում է քմուկի վեղարին (ենթադրաբար այդպիսին էր գրաբարյան վեղարային լ հնչյունը՝ դ-ն, որը հետագայում վերածվեց ձայնեղ լեզվակային շփականի¹⁴); *ըմպանայնացում* (pharyngealization), երբ ձայնարտաբերման ընթացքում սեղմվում է կոկորդափողի ըմպանային հատվածը, ինչպես դասական արաբերենի ص (s^h), ض (d^h), ط (t^h), ظ (ð^h) հնչյուններում:

Արտասանության միջոցը կամ **ձևը** ցույց է տալիս, թե խոսքի օրգաններն ինչպես են մասնակցում ձայնարտաբերմանը: Արտաբերման միևնույն տեղում հնարավոր են բազմաթիվ միջոցներով արտասանվող բաղաձայներ: Առաջին հատկանիշը *նեղվածքն* է,

¹⁴ Bert Vaux. *The phonology of Armenian*. Oxford: Clarendon Press, 1998; Benjamin W. Fortson IV. *Indo-European Language and Culture: An Introduction* (Blackwell Textbooks in Linguistics), 2004.

որը ցույց է տալիս, թե որչափ են իրար մոտենում ձայնարտաբերման օրգանները: Դասակարգվում են որպես.

պայթականներ կամ փակվածքի բաղաձայներ (plosive), երբ օդի հոսքը լիովին ընդհատվում է արտաբերիչների կողմից (գրոյական բացվածք), ինչպիսին են օրինակ **պ, տ, կ** բաղաձայները;

շփականներ կամ նեղվածքի բաղաձայներ (fricative)՝ շատ նեղ բացվածքի դեպքում, երբ արտաբերիչները գտնվում են միմյանց հետ ինտենսիվ շփման մեջ, ինչպես **ս, գ, շ, ժ** հնչյուններն են;

կիսաշփականներ (affricate), որոնք գոյանում են սկզբնական փակվածքի ակնթարթային վերածմամբ նեղվածքի: Այդպիսիք են, օրինակ, հայերենի **ծ, ց, ձ** և **ճ, չ, ջ** շարքերը, որոնք հնչյունաբանորեն կարելի է ներկայացնել որպես ակնթարթային **տ>ս, թ>ս, դ>զ** և **տ>շ, թ>շ, դ>ժ** անցումներ;

ձայնորդներ (sonorant)՝ նեղ, բայց արտաբերիչների շփում չառաջացնող բացվածքի դեպքում (**ր, յ**):

և իհարկե սովորական *ձայնավորներ* (vowel), երբ օդի հոսքը չի արգելափակվում (**ա, ե, ի, ո, ու, ը**):

Ձայնորդներն իրենց հերթին բաժանվում են հետևյալ տեսակների. *նկզային* (nasal), երբ օդի հոսքը բերանի փոխարեն արտամղվում է ուղեներից (**մ, ն**); *հպման* (tap), երբ օդուղիների փակվածքը տեղի է ունենում թեթև և ակնթարթային կերպով, ինչպիսին է, օրինակ, իսպաներենի **r** հնչյունը; *թրթռուն* (trill), երբ օդի հոսքն առաջացնում է ակտիվ արտաբերչի թրթռո (**ռ**); *նայ* (approximant), երբ պասիվ և ակտիվ արտաբերիչները մոտ են իրար, բայց ոչ անմիջական շփման աստիճանի. այդպիսին են **լ, ը, յ** հնչյունները:

Արտաբերման ընթացքում օդի հոսքը կարող է շրջիոսել լեզվի կողային մասերով: Այդ կերպ առաջացած բաղաձայները կոչվում են *կողային* (lateral): Կողային է հայերենի **լ** ձայնորդը (ատամնային կամ կապճային կողային նայ):

Ձայնավորումը բնորոշում է արտաբերմանը ձայնալարերի մասնակցության եղանակը: Լինում են բազմաթիվ տարբերակներ, որոնցից ներկա շարադրանքի համար կարևոր են հետև-

յալները. *խուլեր* (voiceless), երբ օդի հոսանքը չի շարժում ձայնալարերը (օրինակ՝ **պ, փ**), և *ձայնեղներ*, երբ ձայնալարերը մասնակցում են՝ առաջացնելով տոնային (մաքուր) ձայն (օրինակ՝ **բ**): Խուլերը լինում են երկու տեսակի՝ *շնչեղ* (aspirated), ինչպիսին են, օրինակ, հայերենի **փ, թ, ք, ց, չ** և անգլերենի *p, t, k* հնչյունները (ՄՀԱ նշանակումներով՝ *p^h, t^h, k^h*), և *շնչազուրկ* (tenuis), ինչպիսին են հայերենի **պ, տ, կ, ծ, ճ** իսպաներենի *p, t, k* և ռուսերենի *п, т, к* հնչյունները (ՄՀԱ՝ *p^o, t^o, k^o*):

ՄՀԱ նշանակումներով՝ բաղաձայների հիմնական համակարգը (առանց երկրորդային տարատեսակ արտաբերումների ողջ բազմազանության ընդգրկման) բերված է հաջորդ էջում. դրանում բաղաձայները գուգորդվում են ըստ ձայնավորման եղանակի (խուլ-ձայնեղ): Եթե հատուկ չի նշվում, ենթադրվում է խուլերի շնչեղ արտասանություն, ինչպիսին անգլերենում է:

Բաղաձայների որոշ առավել տարածված երկրորդային արտաբերումներ և ձայնավորման աստիճաններ գրառվում են հետևյալ օժանդակ նշանների օգնությամբ.

◌ ^w	շրթնայնացում	◌ ^h	շնչեղացում
◌ ^j	բմայնացում	◌ [*]	շնչազրկում
◌ ^v	վեղարայնացում	◌ ^o	խլացում
◌ ^f	ըմպանայնացում	◌ ^o	ռնգայնացում

Արտաբերումների վերոնշյալ բոլոր դեպքերում օդի հոսքն առաջանում է թոքերում և օդուղիներով մղվում է դուրս, ինչի հետևանքով *արտաշնչման* այս բաղաձայները կրում են *թոքային* (pulmonic) անվանումը:

Սակայն հնարավոր են նաև օդամղման այլ մեխանիզմներով պայմանավորվող հնչյուններ, ինչպիսիք են *արտամղման* (ejective), *ներմղման* (implosive) բաղաձայները և *կտտոցները* (click):

Տվյալ շարադրանքի համար կարևոր են արտամղման բաղաձայները, որոնք առաջանում են, երբ օդի հոսքը սկզբնավորվում է ոչ թե թոքերում, այլ կոկորդափողում՝ դրա դեպի վեր ուղղված կտրուկ շարժմամբ: Արտամղման բաղաձայները լինում են միայն

խուլ, քանի որ օդահոսքի՝ թոքերում չձևավորվելու պատճառով ձայնալարերը չեն մասնակցում պրոցեսին:

Արտամղման բաղաձայները պատկերվում են « ' » նշանի կցմամբ՝ p', t', k', q', s', ts', tʃ', kx', kɫ' և այլն:

Վերոբերյալ համակարգից բացի՝ հատուկ նշաններ գոյություն ունեն հաճախ հանդիպող որոշ համարտաբերվող բաղաձայների համար. ɕ (խուլ քմայնացած շեղբային ետկապճային շփական՝ ռուսերենի ալ հնչյունի պես), ʒ (ձայնեղ քմայնացած շեղբային ետկապճային շփական), ʋ (ձայնեղ շրթնայնացած վեղարային նայ՝ ալ^Վ, ինչպես անգլերենի weep բառում), ʏ (շրթնայնացած քմային նայ՝ j^Վ) հնչյունները:



Ձայնավորներ

Ձայնավորները լեզվի հնչյուններ են, որոնք արտասանվում են բաց ձայնափողով այնպես, որ կոկորդից վեր ոչ մի տեղ օդի ճնշման աճ տեղի չի ունենում: Սա ձայնավորների հիմնական տարբերակիչ հատկանիշն է բաղաձայներից, որոնց դեպքում, ինչպես ասացինք, ձայնային ուղիների որևէ կետում անապամանորեն տեղի է ունենում օդի հոսքի ճնշման աճ ձայնարտաբերման ուղիների նեղացման կամ փակման հետևանքով:

Ձայնավորների հիմնական հատկանիշներն են բարձրությունը, դիմայնությունը և կլորությունը:

Դասակարգումն ըստ այս հատկանիշների պատկերված է աջում:

Բարձրությունը բնութագրում է լեզվի ուղղահայաց դիրքը քիմքի համեմատությամբ: Լինում է վերին, միջին կամ ստորին: Ժամանակակից եզրութաբանությամբ նախընտրելի են փակ, փակ-միջին, միջին, բաց-



Դիմնական ձայնավորները


միջին և *բաց* եզրերը (ավելի նուրբ բաժանումը տե՛ս ստորև բերվող աղյուսակում): Փակ է, օրինակ, **ի** ձայնավորը, որի դեպքում լեզուն մոտ է քիմֆին, և օդի հոսքի ճեղքը նեղ է: Բաց է **ա** ձայնավորը, որի դեպքում լեզուն մոտ է ստորին ծնոտին, իսկ օդաճեղքն առավելագույն բացվածքի է:

Դիմայնությունը ցույց է տալիս լեզվի հորիզոնական դիրքը: Լինում են՝ *դիմային*, *կենտրոնական* և *ետին*: Միևնույն բարձրության պարագայում դիմային է **ի** ձայնավորը, որի դեպքում լեզուն ուղղված է դեպի բերանի առաջնամաս, և **ու** ձայնավորը, երբ լեզուն դիրքավորվում է բերանի խոռոչի ետնամասում:

Կլորությունը մատնանշում է ձայնավորի արտաբերման ընթացքում շուրթերի կլորանալը (**օ**, **ու**): Միևնույն բարձրության և դիմայնության դեպքում լինում են *հասարակ* (չկլորացած) և *կլորացած* տեսակի: Օրինակ, փակ դիմային ձայնավորն ունի երկու հիմնական արտասանություն՝ պարզ **ի** (ՄՅԱ՝ *i*) և կլորացած **ի** (ՄՅԱ՝ *y*):

Ձայնավորները կարող են համարտաբերվել *ռնգայնացած*, *ըմպանայնացած*, *մակկոկորդայնացած* և այլն:

Ձայնավորների նկարագրման ՄՅԱ համակարգը (առանց երկրորդային արտաբերումների) բերված է ստորև: Չույզ տարբերակների ձախ կողմում պարզ, իսկ աջում՝ կլորացած ձայնավորներն են:



Ժամանակակից հնչյունաբանության հիմնական հասկացու-
թյունների ներկայացումն այսքանով կհամարենք բավարար կով-
կասյան լեզուների վերլուծությունն արդի և գիտականորեն
ճշգրիտ եզրութաբանությամբ նկարագրելու համար:

§3. Կովկասյան հնչյունաբանության համառոտ ակնարկ

Լեզվաբանների շրջանում ընդհանուր տարածում ունի այն
տեսակետը, ըստ որի՝ կովկասյան լեզուները բնութագրվում են
բաղաձայնային համակարգի բացառիկ հարստությամբ և հակա-
ռակը՝ ձայնավորների սակավությամբ¹⁵:

Այս պնդումը, սակայն, բացարձակ առումով ճշմարտացի է
միայն հյուսիսարևմտյան լեզվաընտանիքի համար, որի լեզու-
ներից մեկը՝ ուբըխերենը, օրինակ, պարունակում է 86 բաղաձայն
2 ձայնավորի առկայությամբ: Աբխազերենի բզըպ բարբառն ունի
68 բաղաձայն և կրկին՝ 2 ձայնավոր, մինչդեռ գրական աբխազե-
րենի համար հիմք է ընդունվել 58 բաղաձայն ունեցող աբժա
բարբառը, որում, որոշ լեզվակայիններին զուգահեռ, բացակայում
է ետկապճային շարքերից մեկը: Գրական աղըղերենում (զար-
գացված ճեմգույ կամ թեմիրգոյան բարբառի հիմքի վրա) առկա
է 56 բաղաձայն, բժեղուղյան բարբառում՝ մոտ 70, գրական կա-
բարդերենում՝ 48 և այլն:

Հյուսիսարևելյան կովկասյան լեզուները, ինչևէ, միջինում բա-
ղաձայների համեմատաբար համեստ քանակություն են պարու-
նակում, սակայն ձայնավորների առումով առավել բազմազան
են: Այս լեզվաընտանիքում ծայրահեղ բացառություն է *արշի*
լեզուն՝ արշերենը (7 գյուղակ, մոտ 1200 կրող), որն ունի 81
բաղաձայն և 26 ձայնավոր: Վերջիններիս բազմազանությամբ
կովկասյան բոլոր լեզուների շարքում առաջնային դիրքում է չե-
չեներենը, որը, համեմատաբար պարզ բաղաձայնային համա-

¹⁵ J. C. Catford. *Mountain of Tongues: The Languages of the Caucasus*, Ann.
Rev. of Anthropol., 6 (1977) (<http://www.jstor.org/stable/2949334>); G. Hewitt,
North West Caucasian, *Lingua* 115 (2005).

կարգին զուգահեռ (40 հիմնական բաղաձայն), պարունակում է 44 ձայնավոր և 5 երկբարբառ: Այսպիսով, հյուսիսարևմտյան լեզուներից ուրբխերենը, իսկ հյուսիսարևելյաններից՝ արշերենը, իրենց հնչյունակարգերի բազմազանությամբ հարստագույն են աշխարհի բոլոր լեզուների շարքում¹⁶:

Բաղաձայների նման հարստությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ կովկասյան լեզուներում հնչյունները տարբերակվում են ոչ միայն ըստ կազմավորման տեղի և միջոցի, այլև՝ երկրորդային արտաբերման (շրթնայնացում, քմայնացում, ըմպանայնացում, ընդ որում վերջինս կարող է հանդես գալ նաև առաջինի հետ զուգորդված՝ շրթնըմպանայնացած):

Բոլոր կովկասյան լեզուներում պայթականներն ու կիսաշփականները հանդես են գալիս ձայնավորման երեք աստիճանով՝ ձայնեղ, խուլ (շնչեղ) և արտամղման (ռուսալեզու գրականության մեջ՝ абрyптивнoй): Առանձին դեպքերում հանդիպում են նաև արտամղման շփականներ շրթնային, կապճային կամ ետկապճային դիրքերում:

Կովկասյան բոլոր լեզուներում թույլ և ուժգին (ռուսալեզու գրականության մեջ՝ нрерyптивнoй), պարզ և բաղադիր (երկրորդային արտաբերմամբ), շնչեղ, ձայնեղ և արտամղման բաղաձայներն *խմաստազատ* են (ֆոնեմիկ)¹⁷: Միևնույն դիրքի բաղաձայները կարող են հանդես գալ նաև կատարային և շեղբային տարբերակներով: Այդպիսին են ուրբխերենի, արբխազերենի բզըպ և ադըղերենի բժեդուոյան բարբառների կիսաշփականների և շփականների շարքերը, որոնցում ետկապճային («շ»-ի գոյացման) տիրույթում առկա է արտաբերման 3 տարբերակ՝ կատարային (թեթև վեղարայնացմամբ), շեղբային (թեթև քմայնացմամբ) և *փակ շեղբային* (թեթև ըմպանայնացմամբ): Վերջինս արևմտակովկասյան լեզուների բացառիկ առանձնա-

¹⁶ Խոսքը վերաբերում է այն լեզուներին, որոնք չեն պարունակում *կտտոցներ* (click):

¹⁷ Օրինակ՝ հայերենի *ծախ* և *ցախ* բառերը, որոնցում, արտաբերման միևնույն դիրքի բաղաձայնի (կապճային կիսաշփական) ձայնավորման եղանակից կախված (ձայնեղ՝ *ձ* և շնչեղ՝ *ց*), փոխվում է բառի իմաստը:

հատկություններից է: Գրականության մեջ¹⁸ այն բնութագրվում է որպես շրշող-սուլող (hissing-hushing) բաղաձայն և արտաբերվում է հետևյալ կերպ. [եզվի ծայրը դիրքավորվում է ստորին ատամնաշարի կապճային հատվածում, իսկ շեղքը, կորանալով, շփվում է վերին ծնոտի ետկապճային հատվածին («շ»-ի տիրույթ)՝ առաջացնելով շփական կամ կիսաշփական հնչյուններ՝ կախված արտաբերման ընթացքում նեղվածքի տրամաչափից և գործողության տեսակից:

Կովկասյան լեզուների այլ տարբերիչ առանձնահատկություններից է կողային շփականների և կիսաշփականների մեծ հոլովույթի առկայությունը: Այսպես, ավար-անդյան լեզուներից ախվախերենը պահպանել է կողային կապճայինների ողջ բազմազանությունը՝ պարունակելով շնչեղ և արտամղման կիսաշփականներ թույլ և ուժգին տարբերակներով՝ ʃ, ʃʰ, ʃh, ʃʰ:, շնչեղ շփականներ թույլ և ուժգին տարբերակներով՝ ʃ, ʃ:, ինչպես նաև սովորական l (լ) ձայնորդը. ընդհանուր առմամբ 7 կողային կապճային: Բազմազանության առումով հետաքրքրազույն օրինակ է արշերենը, որում հանդիպում են աշխարհի լեզուներում բացառիկ հազվագյուտ նախավեղարային կողային շփականներ և կիսաշփականներ՝ ձայնեղ, շնչեղ և արտամղման ձայնավորման աստիճաններով, թույլ և ուժգին, պարզ և շրթնայնացած տարբերակներով (ʃ, ʃʰ, ʃh, ʃʰ:, kʃ, kʃʰ, kʃh, kʃʰ:):

Գրավոր մշակույթի չգոյության հետևանքով հյուսիսկովկասյան լեզուները միայն վերջին հարյուրամյակի ընթացքում են ենթարկվել հնչյունա- և լեզվաբանական քիչ թե շատ բավարար ուսումնասիրության և վերլուծության: Դեռևս մուօ են դրանց պատմական զարգացման օրինաչափությունները, աշխարհի այլ լեզվաընտանիքների հետ հեռավոր ազգակցության հարցերը, բուն կովկասյան լեզուների կապերը միմյանց հետ և ներքին ճյուղավորման բազմաթիվ խնդիրներ: Բավարար ճշգրտություն չունեն անգամ հյուսիսկովկասյան մի շարք առանձին լեզուների հնչակազմերի նկարագրությունները:

¹⁸ Catford, 1977, էջ 290.

Ռուսատառ այբուբենի ներմուծումը ևս ունեցել է իր բացասական ազդեցությունը, քանի որ դրանք, սահմանափակ լինելով բուն տառաբանակում և չունենալով բավարար ճկունություն տառածների տարձևումների (մոդիֆիկացիաների) համար, թույլ չեն տվել միարժեքորեն արտահայտել կովկասյան լեզուների հնչյունային ողջ բազմազանությունը. իրենց բնույթով միանգամայն տարբեր հնչյուններ սլավոնագիր այբուբեններում ստացել են միևնույն նշանակումը՝ լրացուցիչ խառնաշփոթ մտցնելով հնչյունական առանց այդ էլ բարդ համակարգում:

Սակայն ամենամեծ խոչընդոտները, որոնք առաջանում են հյուսիսկովկասյան լեզուների հնչաբանությունն ուսումնասիրելիս, կապված են գրականության մեջ (հատկապես՝ ռուսալեզու) միասնական եզրութաբանության բացակայության և անգամ հնչա- և հնչյունաբանական վերլուծության բացահայտ սխալների հետ: Որպես ակնառու օրինակ կարելի է մատնանշել կովկասյան լեզուների մինչ այժմ գոյություն ունեցող ամենածավալուն նկարագրությունը՝ «Кавказские языки» (1998) ժողովածուն¹⁹, որի առանձին զլուխներում (հեղինակված տարբեր հետազոտողների կողմից), նույն լեզվաընտանիքի և անգամ նույն լեզուների հնչյունային ներկայացման համար հաճախ օգտագործվում են միանգամայն տարբեր նշաններ և եզրեր. երբեմն իրար հետ չեն համընկնում անգամ բուն համակարգերը:

Ռուսալեզու գրականության մեջ շփոթված են հազագայինների՝ «լարինգալների» շարքերը (դրանցում չեն տարբերակվում կոկորդային, մակկոկորդային և ըմպանային բաղաձայները²⁰), ետնալեզվայինները (քմայինների, վեղարայինների և լեզվակայինների խառնաշփոթը համատարած բնույթ է կրում), խճճված և շփոթված են ատամնային և կապճային շարքերը, կապճային են անվանված ետկապճայինները, ետկապճային՝ քմայինները և այսպես շարունակ, խառնված են թույլ և ուժգին ետնալեզվային -

¹⁹ Языки мира: Кавказские языки. (ред. М.Е. Алексеев, Г.А. Климов, С. А. Старостин, Я. Г. Тестелец), М., Academia, 1999.

²⁰ L. Trigo. *On Pharynx-Larynx Interactions*, Phonology, Vol.8, No.1 (1991). (<http://www.jstor.org/stable/4420026>).

ները, աղյուսակներում բաց են թողնված բազմաթիվ հնչյուններ: Երկրորդային արտաբերումները երբեմն չեն տարբերակվում որպես այդպիսին. օրինակ՝ ըմպանայնացած լեզվակայինները երբեմն դասվում են այսպես կոչված «լարինգալների» շարքը: Մինչև վերջ հստակեցված չէ լեզվակային և վեղարային կիսաշփականների գոյության հարցը հյուսիսարևելյան որոշ լեզուներում:

Նման խառնաշփոթի պարագայում չի կարելի միարժեքորեն երաշխավորել որևէ լեզվի ստորև ներկայացվող հնչյունակարգի վերջնական ճշգրտությունը կամ լիակատարությունը: Փորձ ենք արել բազմաթիվ աղբյուրների համադիր քննությամբ հնարավորինս ճշտել խնդրո առարկա լեզուների հնչյունակարգերը, լրացնել տարբեր աղբյուրներից տեղեկություններով, իսկ անհստակության պարագայում նախապատվությունը երբեմն տալ առավել վստահելի գնահատվող աղբյուրին: Ուստի միանգամայն հնարավոր են բացթողումներ ու սխալներ հատկապես սակավաթիվ կրողներ ունեցող և որպես հետևանք՝ պակաս ուսումնասիրված լեզուների հնչյունակարգերի բերվող աղյուսակներում:

Այս դիտարկումը կամ անգամ՝ թերությունը, սակայն, չի հարուցում այն գրաբանական բարդությունները, որոնք առկա են սլավոնագրի կամ լատինագրի դեպքում, քանզի ներկա մոտեցմամբ խնդրին ցուցաբերվել է համակարգային, ընդհանրական և դեղուկտիվ մոտեցում:

Յուրաքանչյուր **լեզվաընտանիքի** համար ի սկզբանե կառուցվել է *համահավաք* և *ընդլայնված բազային նշանակարգ*՝ հնչյունների և տառաձևերի բոլոր հնարավոր տարբերակներով (որոնցից շատերն անգամ կարող են երբևէ չհանդիպել որևէ լեզվում), նշանաստեղծման հստակ տրամաբանությամբ և օրինաչափություններով, ուստի խնդրահարույց հնչյունակարգերում վիճելի կետերը պարզելու դեպքում կարելի է հեշտորեն ուղղել ենթադրական սխալը՝ ընդամենը բազային համակարգից վերցնելով համապատասխան դիրքի ճիշտ տառաձևը, որը տրամաբանական և կանխատեսելի կերպով կապված կլինի ամբողջի հետ և երբևէ նշանների անհարկի խառնաշփոթ, համընկում կամ կրկնություն չի հարուցի:

§4. Արևմտակովկասյան լեզուներ

Հյուսիսկովկասյան լեզուների հնչյունային կազմերի ստորև բերվող նկարագրությունը գերամասամբ ընդհանրական բնույթ կկրի, իսկ անդրադարձ առանձին լեզուների ամբողջական հնչյունակարգերին կկատարվի առաջարկվող այբուբենների գրաֆիկական նկարագրության հատվածում:

Այսպիսով, արևմտակովկասյան լեզվաընտանիքը պարունակում է հինգ լեզու՝ աբխազերեն, աբազերեն, ուբըխերեն և չերքեզերեն²¹ (գրական աղբյուրներ և կաբարդերեն տարբերակներով): Հնչյունային կազմերով այս լեզուները բավականին մոտ են իրար և ենթարկվում են միասնական վերլուծության: Զանի որ այս շարքում առավելագույն բազմազանությամբ և համակարգային լրիվությամբ օժտված է այժմ մեռած ուբըխերենը, որի հնչյունակարգն իր հիմնական գծերում ընդհանրական և ներկայացուցչական բնույթ ունի մնացյալ բոլորի համեմատությամբ, մեր նկարագրությունը կհիմնենք այս լեզվի հնչաբանության վերլուծության վրա:

Ուբըխերենը, արդեն նշվեց, ունի 86 բաղաձայն, ինչը բացառիկ ցուցանիշ է աշխարհի բոլոր լեզուներում: Այս հարստությունը հետևանք է ինչպես արտաբերման գրեթե բոլոր տեղերի և միջոցների բաղաձայների գոյության, այնպես էլ երկրորդային արտաբերումների լայն կիրառման: Գրեթե բոլոր բաղաձայներն ունեն շրթնայնացած, իսկ ետնալեզվայիններում և շրթնայիններում՝ նաև ըմպանայնացած ու քմայնացած տարբերակներ: Ըմպանայնացումը կարող է հանդես գալ ոչ միայն առանձին, այլև շրթնայնացման հետ զուգորդված:

Այսպես, լեզվակային բաղաձայների շարքում հնարավոր է չորս տիպի համարտաբերում՝ շրթնայնացած (^w), քմայնացած (^ʃ), ըմպանայնացած (^ɣ) և շրթնըմպանայնացած (^{wɣ}): Լեզվակային

²¹ Չերքեզների ինքնանվանումն է *Աղդդե*, որը նեղ իմաստով վերաբերում է միայն արևմտյան խմբին, որպիսին էլ արտացոլվում է այստեղ՝ տարբերակելու երկու լեզուներն իրենց ուղղագրությամբ: Ընդհանրական իմաստով գործածում ենք *Չերքեզ* արտանվանումը:

շփականներում, օրինակ, որտեղ հայերենն ունի ընդամենը երկու բաղաձայն՝ շնչեղ **խ** (χ) և ձայնեղ **ղ** (γ), ուրբխներենն ունի տասը՝ հինգ շնչեղ՝ χ , χ^w , χ^j , χ^y , χ^{yw} , և հինգ ձայնեղ՝ γ , γ^w , γ^j , γ^y , γ^{yw} ։

Առանձնահատուկ են ետկապճային շփականների և կիսաշփականների շարքերը, որոնք իրականապես են ակտիվ արտաբերչի (լեզվի) երեք տարբեր դիրքերում արդյունարար տասը շփականներով և տասերկու կիսաշփականներով՝ կատարային շփականներ (\int , $ʒ$) և կիսաշփականներ ($tʃ$, $dʒ$, $tʃ^w$), շեղբային շփականներ ($ç$, $ʒ$; $ç^w$, $ʒ^w$) և կիսաշփականներ ($tç$, $dʒ$, $tç^w$; $tç^w$, $dʒ^w$, $tç^{yw}$), ինչպես նաև փակ շեղբային շփականներ ($ʃ$, $ʒ$; $ʃ^w$, $ʒ^w$) և կիսաշփականներ ($tʃ$, $dʒ$, $tʃ^w$)։

Համեմատության համար նշենք, որ հայերենում կա ետկապճային ընդամենը երկու շփական՝ կատարային արտաբերմամբ՝ **շ** (\int) և **ժ** ($ʒ$), և երեք կիսաշփական՝ շեղբային արտաբերմամբ՝ **ճ** ($tç$), **ջ** ($tç$) և **ջ** ($dʒ$)։ Ռուսերենի պարագան քիչ այլ է. լեզվում առկա է միայն մեկ ետկապճային կիսաշփական՝ շեղբային դիրքի **չ** ($tç$), և երեք շփական՝ ետնածալ **շ** ($ʃ$), **ջ** ($ʒ$) և շեղբային **ժ** ($ç$), այսինքն՝ 22 բաղաձայներում ունենք ընդամենը 1 հնչյունային համապատասխանություն։ Ընդհանուր առմամբ, ուրբխներենի թվով 86 բաղաձայները ռուսական այբուբենում ունեն միայն 21 լրիվ կամ կողմնակի զուգահեռներ, ինչն ակնառու կերպով ի ցույց է դնում արևմտակովկասյան լեզուների գրառության խնդրում սլավոնագրի կիրառական ներուժի սահմանափակությունը։

Պայթականներն ու կիսաշփականները բաշխված են ձայնավորման երեք աստիճաններով՝ շնչեղ, ձայնեղ և արտամղման։ Վերջինս որոշ բացառիկ դեպքերում հանդիպում է նաև շփականներում. այսպես, արևմտակովկասյան գրեթե բոլոր լեզուների կապճային կողային շփականների շարքում առկա է արտամղման անդամը (t , t^j , $tʃ$)։ Աղըղերենում այն ի հայտ է գալիս նաև ետկապճային շփականներում ($ʃ$, $ʃ^w$, $ʒ$, $ʒ^w$, $ʃ^{yw}$, $ʒ^{yw}$), իսկ արագերենում և կաբարդերենում՝ շրթնատամային շփականներում (f , f^w , v)՝ դարձնելով դրանք եռաստիճան։

Ըմպանային շփականների ամենամեծ հարստությունն ունի

աբազերենը, որում նրանք հանդիպում են շնչեղ և ձայնեղ, սովորական և շրթնայնացած տարբերակներով՝ հ, հ', հ^w, հ^{w'}:

Այլ յուրահատուկ հատկանիշ է բաղաձայների թուլությունը (lenis, lax) և ուժգնությունը (fortis, tense), ինչը ցույց է տալիս, թե արտասանության ժամանակ ինչպիսի լարվածությամբ է գործադրվում ակտիվ արտաբերիչը: Ուժգնությունը երբեմն ընկալվում է իբրև կրկնակություն (gemination), ինչն այնքան էլ ճիշտ չէ, քանի որ վերջինս ունի միայն տևողության, այլ ոչ՝ արտաբերչի ուժգնության իմաստ: Ուժգին բաղաձայները կրկնակ արտաբերում կարող են ձեռք բերել միայն միջձայնավորային դիրքերում: Բաղաձայների ուժգնությունն արևմտակովկասյան լեզուներին բնորոշ ընդհանրական հատկանիշ չէ և հանդիպում է միայն ադրդերենի շափսուղյան և բժեղուղյան բարբառներում, որոնցում, ըստ դրա, տարբերակվում են պայթականների և կիսաշփականների միայն խուլ անդամները՝ [p, p:], [t, t:], [k, k:], [ts, ts:], [tʃ, tʃ:] և այլն, որոնցում ուժգնացումն ուղեկցվում է համաժամանակյա շնչազրկմամբ: Այս արտաբերումը ռուսալեզու գրականության մեջ ստացել է *прерывчивый* անվանումը, ինչից, սակայն, մենք կիրառարվենք՝ հոգուտ միջազգայնորեն ընդունված *ուժգին* (fortis) տերմինի, քանի որ, ի տարբերություն արևմտակովկասյան լեզվաընտանիքի, արևելակովկասյան լեզուներում այն մեծի մասամբ ընդհանրական բնույթ ունի և իմաստազատ է ձայնավորման ոչ միայն շնչեղ, այլև արտամղման աստիճաններում:

Ի տարբերություն բաղաձայնային այսօրինակ բացառիկ հարստության՝ արևմտակովկասյան լեզուների ձայնավորային համակարգը, ըստ առավել տարածված կարծիքի, «երկաստի-ճան» է՝ կա երկու ձայնավոր միայն՝ *a* (ա) և *i* (փակ ը): Հարկ է նշել, որ գիտական գրականության մեջ արևմտակովկասյան լեզուներում ձայնավորների քանակի վերաբերյալ կան բազմաթիվ տեսակետներ: Որոշ հետազոտողներ գտնում են, որ գործ ունենք միաստիճան ձայնավորային համակարգի հետ (մեկ բազային ձայնավոր, որը «երանգավորվում» է նախորդող բաղաձայնի ազդեցությամբ), այլ՝ երկ-, եռաստիճան և անգամ ավելի:

Չիևելով հարցի մասնագետ՝ մենք կշրջանցենք գիտական այս

վեճը՝ ցուցաբերելով ինդիին ընդհանրական մոտեցում. կառա-
ջարկենք նշանների գրաֆիկական համակարգ ձայնավորների
լրիվ համախմբի համար՝ բոլոր հիմնական (իսկ ավելի ճիշտ՝
անհրաժեշտ) տարբերակներով և դրանց երանգավորումներով:

Նման մոտեցումն արդարացված է այլ լեզուներից փոխառյալ
բառերում ձայնավորների բազմազանությունն անփոփոխ ար-
տահայտելու կարևորության տեսանկյունից, քանի որ, եթե արև-
մըտակովկասյան լեզուների բաղաձայնական համակարգերի
հարստությունը թույլ է տալիս բառեր փոխառել գրեթե ցանկա-
ցած լեզվից՝ առանց սկզբնական բաղաձայների նշանակալի խո-
տորման, ապա ձայնավորների սակավության պատճառով նման
առավելությունը կորչում է: Այս հիմքով բոլոր կանոնական այբու-
բեններում լռելայն ներառվում են a, e, i, ի, o, u ձայնավորները:

Ամբողջացնելու համար արևմտակովկասյան լեզուների հնչյու-
նային համակարգերի նկարագրությունը՝ հաջորդ էջին ներկա-
յացնում ենք ուբըխտերենի բաղաձայնական համակարգը, որում
արտաբերման յուրաքանչյուր տեղի դեպքում սյունակները բա-
ժանված են ըստ շրթնայնացման, քմայնացման, ըմպանայնաց-
ման և շրթնըմպանայնացման հատկանիշների:

Աղյուսակում տեղի ինայոդության նկատառումով բաց ենք
թողել քմային շարքը, իսկ ձայնեղ քմային նայը (j) ներառել ենք
շեղբային («քմայնացած») ետկապճային սյունակում: Վեղարային
պարզ պայթականները (k, k', g) ներկայացված են սովորված
բջիջներում, քանի որ դրանք ուբըխտերենի բնիկ բառացանկում
չկան, մինչդեռ առկա են օտարալեզու փոխառություններում:

Ընդհանուր առմամբ նշենք, որ կովկասյան բոլոր լեզուներում
առաջնալեզվային պայթականներն ատամնային են, շփականնե-
րը՝ կապճային և/կամ ետկապճային, կիսաշփականները՝ ատամ-
նային և/կամ ետկապճային: Նմանապես, եթե հատուկ չի նշվում,
շրթնային պայթականները երկշրթնային են, իսկ շփականները՝
շրթնատամնային: Ուստի ստորև ամենուր դրանց միավորումն
ընդհանրական «շրթնային» և «կապճային» սյունակներում ար-
տասանական խառնաշփոթ չի կարող առաջացնել:

§5. Արևելակովկասյան լեզուներ

Յյուսիսարևելակովկասյան լեզվաընտանիքը շատ ավելի լայն է և բազմանդամ: Պարունակում է 7 լեզվաճյուղ 29 լեզուներով, ինչի հետևանքով այն իր ամբողջության մեջ ունի հնչյունային մեծ բազմազանություն ինչպես բաղաձայների, այնպես էլ ձայնավորների պարագայում և ենթակա չէ համասեռ ներկայացման, ինչպես արվեց արևմտակովկասյան լեզուների դեպքում:

Արևելակովկասյան լեզուների փոխադարձ ազգակցությունների աստիճանը չի կարելի համարել միարժեքորեն պարզված, սակայն ժամանակակից գրականության մեջ դրանք ըստ ազգակցության դասակարգվում են հետևյալ լեզվաճյուղերով (անվանումներում բաց է թողնված «-երեն» վերջածանցը)।

Ավար-անդյան ճյուղ

Ավար (9) (790,000)

Անդյան խումբ

Անդի (Կ^աևանաբ) (21,800)

Ախվախ-Տինդի

Ախվախ (6500)

Կարատա-Տինդի

Կարատա (6400)

Բոտլիխ-Տինդի

Բոտլիխ (5500)

Ղոդոբերի (3000)

Ճամալ (5000)

Բաղվալ-Տինդի

Բաղվալ (6500)

Տինդի (5000)

Նախյան ճյուղ

Բաց (3420)

Վայնախ

Չեչեն (9) (1,330,000)

Ինգուշ (9) (413,000)

Լեզգյան ճյուղ

Շայրամասային խումբ

Արշի (1200)

Կենտրոնական (Սամուրի) խումբ

Արևելյան Սամուր

Թաբասարան (9) (128,900)

Լեզգի (9) (450,000)

Աղուլ (17,400)

Ուդի (5700)

Չարավային Սամուր

Զըռըծ (6000)

Բուդուխ (1000)

Արևմտյան Սամուր

Ռութուլ (20,000)

Շախուր (20,000)

Խինալըզ առանձնակ

Խինալըզ (1500)

Լակ առանձնակ

Լակ (9) (150,000)

Ցեղյան (դիդոյան) ճյուղ**Ցեղ-Յինուխ**

Ցեղ (Դիդո) (15,400)

Յինուխ (550)

Բեժտա-Յունզի-Խարշի

Բեժտա (Կապուլա) (6200)

Յունզի (1840)

Խարշի (1870)

Դարգյան բարբառախումբ

Դարգա (Գ) (480,000)

Խայրազ (21,000)

Մուիր (38,000)

Մյուրեղ-Գուրդա (39,000)

Յուրեք (35,000)

և այլն...

* Փակագծերում բերված է կրողների բանակի մոտավոր զնահատականը:

** Գրական տարբերակներ ունեցող լեզուները նշված են որպես (Գ):

Այս լեզուներից յուրաքանչյուրն իր հերթին ճյուղավորվում է մի շարք բարբառների, որոնք իրենց հնչյունային կազմերով կարող են գրական լեզվից տարբերվել նույնքան, որքան խնդրո առարկա լեզուն՝ իր ազգակիցներից: Յիմսական լեզուների հնչյունաբանական պատկերները կտրվեն իրենց տեղում, իսկ այստեղ սահմանափակվենք միայն դրանց ընդհանուր բնութագրությամբ:

Այսպես, արևելակովկասյան լեզուների կարևորագույն տարբերակիչն է արտաբերման գրեթե բոլոր դիրքերում ուժգին (fortis) և թույլ (lenis) բաղաձայների իմաստազատ տարբերակումը՝ հանդես եկող ձայնավորման շնչեղ և արտամղման աստիճաններում: Այս լեզուները հարուստ են կողայիններով, որոնք առկա են կապձային (ավար-անդյան և ցեղյան լեզուներ) և նախավեղարային (արշերեն) դիրքերում:

Յիմսական տարբերությունը հյուսիսարևմտյան լեզվաընտանիքից այն է, որ այստեղ չեն տարբերակված ետկապձայինների արտաբերման դիրքերը. շփականները հիմնականում կատարային են, կիսաշփականները՝ շեղբային (ինչպես և հայերենում, որում **ջ**, **ճ**, **ջ** շարքերը շեղբային են, այսինքն՝ թեթև բմայնացմամբ, իսկ **շ**, **ժ** շարքը՝ կատարային):

Երկրորդային արտաբերման ամենատարածված տեսակը շրթնայնացումն է (կա լեզուների գրեթե կեսում), որը կարող է հանդիպել արտասանության բոլոր դիրքերում՝ բացի շրթնայիններից և բուն կոկորդայիններից: Առանձին լեզուներում հանդի-

պում են նաև ըմպանայնացած բաղաձայներ, իսկ մի քանի առանձնահատուկ դեպքերում, օրինակ՝ ցեզյան, լեզգյան որոշ լեզուներում և արշերենում, կան շրթնըմպանայնացած արտաբերումներ լեզվակայինների շարքում (q^{sw}, G^{sw}, q^{sw}, χ^{sw}, χ^{sw}ː, ɸ^{sw}):

Արմատայինները, ի տարբերություն արևմտակովկասյան լեզուների, արտաբերվում են ոչ թե ըմպանային, այլ մակկոկորդային դիրքում (ʔ, ɥ, ʕ). հավանական բացառություն են ցեզյան լեզուները, որոնք աղբյուրների մի մասում նկարագրվում են ըմպանային շարքերով:

Ձայնավորման աստիճանները ևս նույնն են՝ շնչեղ, ձայնեղ և արտամղման՝ պայթականների և կիսաշփականների համար, և շնչեղ ու ձայնեղ՝ շփականների:

Ճանաթագրություն. *Բացառություն է լեզգերենը, որի նկարագրությունը տրված է բառաստիճան համակարգով՝ խուլ (շնչազուրկ) տարբերակի ավելացմամբ՝ p, p', p'', b (http://peterlin.pl/lezgi/lezgi_sounds.html), որտեղ p՝ անդամը շնչազուրկ խուլն է: Այլ աղբյուրների (Catford, Alekceev և այլն) համադիր բնութայնից, սակայն, պարզ է դառնում, որ շնչազրկությունը շնչեղների ուժգին արտասանության առանձնահատկություններից է, և [p, p'] զույգն իրականում պետք է փոխատեղել որպես [p, p:]:*

Բաղաձայների նկարագրության տեսակետից խնդրահարույց են վեղարային և լեզվակային կիսաշփականների (kx, qχ) վերաբերյալ տեղեկությունները, որոնք, ըստ աղբյուրների, գոյություն ունեն անդյան, ցեզյան և լեզգյան լեզուների մի մասում:

Այսպես, ըստ TITUS-ի՝ (Thesaurus Indogermanischer Text- und Sprachmaterialien՝ <http://titus.fkidg1.uni-frankfurt.de>) կարատերետնում, օրինակ, կան և՛ վեղարային, և՛ լեզվակային կիսաշփականներ, ընդ որում՝ միայն ուժգին տարբերակներով (kxː, kxːː, qχː, qχːː), իսկ ռուբոլերենի նկարագրության մեջ (Alekceev) լեզվակային կիսաշփականները բերվում են ձայնավորման երեք աստիճաններով և շրթնայնացած, ըմպանայնացած ու շրթնըմպանայնացած արտաբերումներով (qχ, Gɸ, qχː; qχ^w, Gɸ^w, qχ^wː; qχ^s, Gɸ^s, qχ^sː; qχ^{sw}):

Այլ աղբյուրներում (Catford) համարվում է, որ կիսաշփական հնչումը պայթականների ուժգնացման ածանցյալ յուրահատկու-

թյուններից է, որն իր հերթին այս լեզվաընտանիքի որոշ լեզուներում ուղեկցվում է շնչագրկմամբ, կիսաշփականացմամբ կամ կրկնակմամբ (միջձայնավոր դիրքում): Այս տեսակետը կարծես հաստատվում է դարգերենի քննությամբ, որում լեզվակայիները, ըստ TITUS-ի, պայթականներ են (q, ɠ, q'), ըստ Ալեքսեևի՝ կիսաշփականներ (qχ, ɠɤ, qχ'):

Ինչևիցե, քանզի այբուբենները մշակելիս ցուցաբերվել է դեղուկտիվ (ընդհանուրից դեպի մասնավոր) մոտեցում և ստեղծվել են տառանշաններ արտաբերման բոլոր դիրքերի և միջոցների հնչյունների համար, տառածների վերջնական ընտրությունը կարելի է կատարել հարցի հստակեցման պարագայում՝ առայժմ ներկայացնելով ետնալեզվային կիսաշփականները պայթականներից անջատ և վերջիններից տարբերվող նշաններով:

Արևելյան լեզվաընտանիքը հարուստ է ձայնավորներով, որի յուրաքանչյուր լեզու միջինում պարունակում է 6-8 պարզ ձայնավոր (a, æ, ə, e, i, y, o, u), որոնք իրենց հերթին կարող են ոճավորվել կարճ, երկար, ռնգային և ըմպանային տարբերակներով, ինչպես նաև՝ դրանց տարբեր համադրություններով:

Այս իմաստով ամենաբազմազանը չեչեներենն է իր 44 ձայնավորներով, որոնք գոյանում են 11 «պարզ» ձայնավորներից՝ երկարացմամբ և ռնգայնացմամբ. վերջինս ազդում է ինչպես կարճ, այնպես էլ երկար ձայնավորների վրա:

Ինչպես բաղաձայների, այնպես էլ ձայնավորների իմաստով բացառիկ է արշերենը, որում, չեչեներենում առկա հատկանիշներին զուգահեռ, ձայնավորները ոճավորվում են նաև ըստ *տոնային բարձրության*: Սա տոների օգտագործման միակ դեպքն է կովկասյան լեզուներում:

Առանձին լեզուների ձայնավորային համակարգերին մանրամասն անդրադարձ կարվի՝ ընդհանրական այբուբենը ներկայացնելիս, իսկ այժմ, ամփոփելով շարադրանքը, հաջորդ էջին պատկերում ենք արևելակովկասյան լեզուների համահավաք բաղաձայնակարգը: Հարկ է նշել, որ այն ընդհանրական է, միջինացված, և չի արտահայտում որևէ ֆիքսված լեզվի հնչակազմ:

Աղյուսակում, պարզության նկատառումներից ելնելով, բաց են թողնված երկրորդային արտաբերման տեսակները (շրթնայնացում, քմայնացում, ըմպանայնացում, շրթնըմպանայնացում) և բացառապես արշերենում հանդիպող նախավեղարային կողային շփականներն ու կիսաշփականները: Ինչպես արևմտակովկասյան լեզուների պարագայում, այստեղ ևս ատամնային կենտրոնական պայթականներն ու կիսաշփականները միացված են կապճային շարքին զուտ տեղի խնայողության նկատառումով:

§6. Հնչյունները գրաբանության համատեքստում

Ինչպես համոզվեցինք, հյուսիսկովկասյան լեզուները պարունակում են մեծ քանակությամբ բաղաձայններ և ձայնավորներ՝ բազմապատիկ ավելի, քան նրանց գրառման համար մինչ օրս առաջարկված և այժմ էլ գործածվող այբբենական համակարգերի ընձեռած հնարավորություններն են, ինչն էլ տվյալ լեզուներին դրանց լիակատար հարմարեցման հիմնական խոչընդոտն է և ներկայացվող նախագծի գլխավոր շարժառիթը:

Այբուբենի ներածության մասում արդեն նշվեց, որ այբբենական գիրը կարող է լինել ինչպես լիարժեք, այնպես էլ թերի հնչյունային: Լատինական և ռուսական գրերը, հիմքում ունենալով մոտ երեսուն տառաձև, բնական է՝ չեն կարող արտահայտել միջինում 50 բաղաձայն ունեցող լեզուների հնչյուններն այնպես, որ լիովին բավարարեն այբբենականության սկզբունքը, այն է՝ գրված տառերի և արտասանվող բառերի միջև միարժեք (առավել ևս՝ փոխմիարժեք) և կանխատեսելի հարաբերության կառուցումը:

Ուստի հասկանալի է, որ նման պարագայում խոսք չի կարող զնալ ոչ միայն լիարժեք, այլ անգամ թերի հնչյունային այբուբենի վերաբերյալ, քանի որ ինչպես ցույց է տալիս կովկասյան լեզուներում օտարածին այբուբենների փոխառության փորձը, տառ-հնչյուն համապատասխանությունը հաճախ է խախտվում, կիրառվում են անբնական և անտրամաբանական զուգակցումներ, որոնք խնդրահարույց են գրի թե՛ *գործնական* կիրառության, թե՛, անգամ, *գեղագիտության* ու *ներդաշնակության* առումներով:

Ծանոթագրություն. Վերջին հատկանիշները գրի հոգեբանության տեսանկյունից բացառիկ դեր ունեն և պայմանավորում են յուրահատուկ լեզվի ներկայացուցչականությունն ու մրցունակությունը պետական և միևնույն գրով արտահայտվող մեկ այլ լեզվի գերակայության պայմաններում: Այս հանգամանքն ակնառու կարելի է ցուցադրել աղըդերեն հետևյալ տեքստի միջոցով.

*УблагІэм щегьэжьагьэу а ГуцыІэр Тхьэм ыдэжь ыыІагь.
Тхьэм а ГуцыІэм зэкІэри кьыригьэгьэхьугь...*

*Тхьэм кьыгьэхьугьэ пстэуми ащыцэу а ГуцыІэм
кьыримыгьэгьэхьугьэ зи ыыІэп.*

Անիմատ է ապացուցելը, որ ռուսաց գրի և ռուսալեզու ինֆորմացիոն միջավայրի էթնոլոգիայի ճնշող ազդեցության ներքո այսօրինակ «գիրը» նպաստում է բացառապես աղըդերենի գավառայնացմանը:

Երկրորդային արտաբերման առանձնահատկություններն իրենց հերթին են բարդացնում դրությունը, քանի որ ձայնավորման աստիճանների և տվյալ համակարգերին խորթ արտաբերման տեղերի անբնական նշանակումների զուգահեռ կիրառումը մեկ հնչյունի պատկերումը հաճախ հանգեցնում է եռա-, քառա- և հնգատառ համակցությունների:

Որպես օրինակ՝ դիտարկենք արևմտակովկասյան լեզուների շարքում սակավագույն բաղաձայնաբանակն ունեցող կաբարդերենի ուղղագրությունը, որում ամկա են լեզվակային պայթականներ (գ, գ^h), շփականներ վեղարային (x, γ) ու լեզվակային (χ, ɣ) դիրքերում և դրանց շրթնայնացած տարբերակները (x^w, χ^w, ɣ^w, գ^w, գ^w), սակայն բացակայում է վեղարային ձայնեղ պայթականը (g): Այս իրողությունը, բաղարկված ռուսական այբուբենում տառերի և արտահայտչամիջոցների պակասի հետ, հանգեցրել է նրան, որ կիրառվում է հետևյալ ուղղագրությունը՝ x (x), γ (γ), xɣ (χ), γɣ (ɣ), xy (x^w), xɣy (χ^w), γɣy (ɣ^w), kxɣ (q), kɣ (q^h), kxɣy (q^w), kɣy (q^w):

Այս պարագայում հարցն այն չէ, որ մեկ հնչյուն արտահայտող տառերի քանակը հասնում է չորսի, այլ այն, որ այս նշանախմբերում կիրառվում են տառաձևեր, որոնք ունեն առանձին հնչյունական իմաստ և կարող են շփոթ առաջացնել. բանն այն է, որ ռուսական y տառն առանձին կիրառվում է հենց u (ու) ձայնավորի համար, ուստիև երկիմաստություն է առաջացնում օրինակ

ԴՅ տառախմբի արտասանության պարագայում, որը կարող է ընթերցվել ինչպես $κ^w$, այնպես էլ $κ + u$:

Բացի այդ, կա նաև տառաստեղծական կանոնի խախտման ինդիք. այն է՝ կաբարդերենում արտամղման բաղաձայների մեծամասնությունը գրառվում է խուլ բաղաձայնին I օժանդակ նշանի հավելմամբ՝ $κ (k) > κI (k')$ և այլն, մինչդեռ բերված խմբերում չի պահպանված տառակազմական այդ օրինաչափությունը, և լեզվակային արտամղման պայթականները գրի են առնված $κ$ նշանի կցման ոչ-կանոնական սկզբունքով՝ $κxκ (q) > κκ (q')$: Ավելին, որոշ բարդ՝ արտամղման հնչյուններ ունեն ավելի պարզ գրություն ($κκ, κκy$), քան նույն դիրքի պարզ՝ շնչեղ հնչյունները ($κκκ, κκκy$), ինչը հնչյունա-գրային վերլուծության ընդունված նորմերի խախտում է:

Ուղղագրության տրամաբանական թերությունն իր վերջնական ամփոփումն է գտնում այն փաստում, որ I կցանշանն ինքնին ունի առանձին հնչյունային իմաստ և գործածվում է կոկորդային պայթականի (?) համար: Եվ այս ամենը՝ տվյալ լեզվաընտանիքում բաղաձայնային համակարգով պարզագույնը հանդիսացող լեզվի պարագայում:

Այլ հետաքրքիր օրինակ է արագերենի հետևյալ շարքը՝ $Γ (g)$, $ΓB (g^w)$, $Γb (g')$, $Γb (γ)$, $ΓbB (γ^w)$, $ΓbB (γ')$, $ΓI (γ)$, $ΓIB (γ^w)$, որում միևնույն տառի միջոցով են արտահայտված արտաբերման միանգամայն տարբեր տեղերի և միջոցների բաղաձայներ: Այստեղ անշուշտ նշմարվում է որոշակի տրամաբանություն զուտ կանոնի պահպանման տեսանկյունից, մինչդեռ, օրինակ, աղբղերենում $κI$ տառի օգտագործումը $κ (t^b)$ հնչյունի արտամղման տարբերակի (t^b) գրառման համար այն դեպքում, երբ այն զուգահեռ կիրառվում է հենց բուն $κI (k')$ իմաստով, արդեն այբբենականության կանոնների լուրջ խախտում է: Կովկասյան լեզուների այբուբեններում «ինսայողության» նման օրինակները բազմաթիվ են:

Դրությունն ավելի է բարդանում աղբղերենի, արխագերենի և արագերենի դեպքում, որոնցում առկա են ետկապձային շփականների և կիսաշփականների բոլոր երեք շարքերը՝ զումարային 19 բաղաձայներով, ինչի դիմաց այդ դիրքի հնչյունների գրառման

համար ռուսերենի արտահայտչամիջոցները սահմանափակվում են ընդամենը 4 տառի առկայությամբ (Կ, ա, ալ, յ), որոնք, իրենց հերթին, չունեն ուղիղ հնչյունային համարժեքներ արևմտակուրկասյան լեզուների ետկապճային շարքերում, քանի որ դրանցից երկուսը (Կ, ալ) ի սկզբանե համարտաբերվում են քմայնացած (tʃʲ, ɕɕ), իսկ մյուս երկուսը (ա, յ) *ետնածալ* դիրքի են (ʂ, z):

Ուստի այբուբեններում գործածվում են անկարգ տառակցումներ, ինչին զուգահեռ ուղղագրությունն էլ ավելի է խճճվում նաև այն պատճառով, որ մի դեպքում հարկավոր է *կատարային* արտաբերում ունեցող կովկասյան կիսաշփականներն արտահայտել ռուսերենի *քմայնացած շեղբային* կիսաշփականի տառածևին օժանդակ հավելումներով՝ օրինակ՝ ռուսերենի tʃʲ հնչյունի Կ տառը կիրառելով կովկասյան tʃʲ հնչյունը ԿԻ ձևով գրառելու համար, ինչը «քմայնացած tʃʲ առանց քմայնացման» տրամաբանական հանում է (երկրորդային արտաբերման կրկնակի տարծևում գրաֆիկայում!), իսկ դրան զուգահեռ՝ նույն *քմայնացած շեղբային* շփականներն արտահայտել *ետնածալ* շփականների տառածևների միջոցով՝ յ (z) > յԵ (zʲ):

Գրեթե նույնն է ձայնավորների պարագան՝ այս անգամ արևելակովկասյան լեզուներում: Հանուն ճշմարտության հարկ է նշել, որ հաճախ նույնիսկ ամենալիարժեք այբբենական համակարգերում հնարավոր են դեպքեր, երբ ձայնավորների նկարագրությունը լինի ոչ ճշգրիտ, քանի որ դրանք լեզվի ամենադյուրորեն փոփոխվող և երանգավորվող հնչյուններն են: Բացի այդ, ձայնավորների դեպքում բերանի բացվածքի, ձայնավորման աստիճանների և երկրորդային արտաբերումների հնարավորություններն այնքան բազմազան են, որ հաճախ դրանցից շատերը խմբավորվում են մեկ ձայնավորի գրաֆիկայում՝ տարատեսակ երանգավորումները որակելով իբրև *այլածայն* կամ *այլահունչ* (allophone): Այդպիսի նկարագրությունը դեռ կարող է համարվել հնչյունային, իսկ ձայնավորների հիմնական խմբերի լրիվության դեպքում՝ լիակատար: Կարող է պատահել և այնպես, որ ձայնավորներն ունենան այնքան երանգներ, որ որևէ այբուբեն ի գորու չլինի դրանք պրակտիկորեն ընդգրկելու իր նշանակարգում:

Այս տեսանկյունից արևելակովկասյան լեզուներում իրադրությունը նույնքան անբավարար է, քանի որ ձայնավորների անզամ հիմնական խմբերի նկարագրությունները գրի մեջ հաճախ չեն տրվում լրիվությամբ: Ավելին, գործածվող այբուբեններում մի կողմից՝ ընդհանրապես չեն տարբերակվում որոշ լեզուների երկար, ըմպանայնացած, ռնգայնացած և այլ ձայնավորները, մյուս կողմից՝ ոչնչով չհիմնավորված կամայականությամբ ներառվում են բացառապես ռուսերենին հատուկ ձայնավորների ու երկբարբառների (ö, io, я) նշաններ՝ փաստացի նախապատվությունը տալով ոչ թե բուն լեզվի ձայնավորների լիարժեք ներկայացմանը, այլ միմիայն ռուսերենից փոխառյալ բառերում ռուսերենի հնչյունների ճիշտ գրառությանը:

Ընդհանրացնելով նշենք, որ գրի պրակտիկ կիրառության տեսանկյունից թույլատրելի է որոշ թվով երկ- կամ եռատառ կոմբինացիաների գործածությունը. օրինակ՝ բուն գերմաներենում կան մեկ եռատառ (sch՝ շ) և մեկ քառատառ (tsch՝ չ) բաղակցություններ, որոնք, ըստ էության, չեն խոչընդոտում կարդալու ընթացքը: Սակայն կա որոշակի սահման, որից անց բազմատառ կոմբինացիաներն արդեն հանգեցնում են այբբենականության սկզբունքի՝ արտասանվող հնչյունների հետ տառերի ու դրանց համակցությունների միարժեք և կանխատեսելի հարաբերության լուրջ խոտորման ու խախտման:

Այդպես է դրությունը կովկասյան գրեթե բոլոր լեզուների այբուբեններում, որոնցում բաղադիր նշանների քանակը երբեմն հատում է ընդհանուր տառաքանակի 50%-ի սահմանագիծը: Ադրդերենի այբուբենի 69 նշաններից 24-ը երկնիշ են, 11-ը՝ եռանիշ. այսինքն՝ բաղադիր նշանակումները կազմում են ընդհանուրի կեսից ավելին 69:35 հարաբերակցությամբ:

Արշերենի համար 2006 թվականին Սյուրրեյի ձևաբանական խմբի մշակած «այբուբենի» 106 նշաններից 76-ը (ընդհանուրի 70%-ը) բազմանիշ են ու դրանցում կա նույնիսկ հնգանիշ անդամ (xxbIb): Մնացյալ լեզուներում վիճակագրությունն այս է. արագերեն՝ 74:40, կաբարդերեն՝ 55:25, արխազերեն՝ 64:24, ախվախերեն՝ 56:30, ադուլերեն՝ 69:32, ավարերեն՝ 53:37, լակերեն՝

59:25, թաքասարաներեն՝ 59:25, ցեզերեն՝ 40:14, չեչեներեն՝ 45:16 և այլն: Միայն չեչեներենի օրինակով, որում կա 45 տառ 44 ձայնավորների առկայությամբ (որոնց մեծ մասը գրում չի էլ տարբերակվում), կարելի է համոզվել, որ անգամ նման անհարկի բարդացումներով և այբբենականության սկզբունքի համատարած խախտմամբ հանդերձ՝ այս այբուբենները, միևնույն է, ի գորու չեն բավարար մոտավորությամբ արտապատկերելու հյուսիսկովկասյան լեզուների հնչակազմը:

Կիրառվող ռուսահեն այբուբենների անհամատեղելիության հիմնական պատճառը, սակայն, ոչ այնքան ռուսական գրի բազային տառաձևերի սակավությունն է, որքան *համակարգային* թերությունը՝ ձայնավորումներում այն եությամբ երկաստիճան է, որոշ դեպքերում անգամ՝ միաստիճան, սակայն կիրառվում է եռաստիճան ձայնավորմամբ լեզուների համար. նկատենք, որ ռուսերենում արտաբերման տարբեր դիրքերի և միջոցների բաղաձայները հակադրվում են ըստ ձայնավորման մեկ կամ երկու տարբերակների. պայթականներում՝ շնչազուրկ-ձայնեղ (ճ-ռ, ճ-տ, ր-կ), շփականներում՝ շնչեղ-ձայնեղ (բ-ֆ, Յ-ց, յ-ա և այլն), իսկ կիսաշփականներում՝ միայն շնչեղ (ս, փ): Եթե ռուսերենի շփականներն իրենց ձայնավորման աստիճանով նման են կովկասյան լեզուներին, ուր դրանք ևս հակադրվում են ըստ շնչեղ-ձայնեղ հատկանիշի, ապա պայթականների համակարգը կովկասյան լեզուների կանոնավոր եռաստիճան համակարգի հետ համընկնում է միայն ձայնեղներում, քանի որ կովկասյան լեզուների խուլերը, ի տարբերություն ռուսերենի *п, т, к* հնչյունների (*р, т, к*), շնչեղ են (*р^h, т^h, к^h, q^h*), իսկ արտամղման բաղաձայներ ռուսերենում առհասարակ գոյություն չունեն: Կիսաշփականների պարագայում կովկասյան եռաստիճան համակարգի (*ts-dz-tʃ* և *tʃ-dʒ-tʃʰ*) դիմաց ունենք միաստիճան այբուբեն՝ բաղկացած միայն շնչեղ անդամներից (*ս, փ*):

Յյուսիսկովկասյան լեզուներին ռուսական գրի հարմարեցման սնանկության մեկ այլ կարևորագույն պատճառ է նաև այն, որ ռուսական այբուբենը, զարգացած լինելով ռուսալեզու միջավայրում, հարմարեցված է բացառապես ռուսերենի արտահայտչա-

ձևերին: Դրանում տարբերակվում է բաղաձայների հնչափոխության ընդամենը երկու միջոց՝ *քմայնացում*, որն արտահայտվում է ε հավելանշանի կցագրմամբ, և *ապաքմայնացում*՝ գրառվող ε նշանի միջոցով: Երկուսն էլ ռուսական այբուբենում չունեն առանձին հնչյունային իմաստ և հանդիպում են միայն կցագրություններում: Հյուսիսկովկասյան լեզուներում, սակայն, ինչպես համոզվեցինք, առկա է 4 տիպի համարտաբերում (շրթնայնացում, քմայնացում, ըմպանայնացում, շրթնըմպանայնացում) և ետկապձայինների 3 երանգավորում (կատարային, շեղբային, փակ շեղբային), որոնցից միայն քմայնացումն է *կանոնավոր* արտացոլված ռուսական գրում: Արդյունքում, երկրորդային արտաբերումների մնացյալ ձևերը կամ պատկերվում են առանձին հնչյունային արժեք ունեցող տառերի կցմամբ (օրինակ՝ ε և y տառերի կիրառումը շրթնայնացման համար), կամ ընդհանրապես չեն արտահայտվում:

Այլ դեպքերում, ինչպես արդեն նշվեց, միևնույն տառանշանը կարող է անկանոն կերպով օգտագործվել և՛ արտաբերման տեղի ու միջոցի, և՛ համարտաբերման ձևի վերափոխման համար:

Որպես օրինակ՝ բերենք աղըղերենում ε նշանի կամայական կիրառության դեպքերը՝ 1) կատարային *երանգավորումից* փակ շեղբայինի անցկացման նպատակով՝ ε (ε) > $\varepsilon\varepsilon$ ($\varepsilon\varepsilon$), ε (ε) > $\varepsilon\varepsilon$ (ε); 2) արտաբերման *տեղի* փոփոխության համար՝ ε (ε) > $\varepsilon\varepsilon$ (ε), ε (ε) > $\varepsilon\varepsilon$ (ε); 3) արտաբերման *միջոցի* այլափոխման՝ ε (ε) > $\varepsilon\varepsilon$ (ε); 4) կողայինների շարք անցման՝ ε (ε) > $\varepsilon\varepsilon$ (ε) և այլն: Իրադրությունը մյուս լեզուներում նկարագրվածից քիչ է տարբերվում:

Ուստի միանգամայն բնական է, որ ռուսական գրի մակաբերումը կովկասյան լրիվ և կանոնավոր հնչյունակարգերի վրա մի շարք գրաբանական անհամատեղությունների պատճառ պետք է հանդիսանար: Դրան գումարվում է նաև այն, որ, ինչպես նշվեց ներածության մեջ, կովկասյան լեզուներին ռուսական այբուբենի հարմարեցման ընթացքում նշանների և դրանց կցագրումների ընտրության մեջ ցուցաբերվել է անկարգ մոտեցում, ինչը թույլ չի տալիս միասնաբար նկարագրել անգամ իրար շատ մոտ հնչակազմերով լեզուների ուղղագրությունները: Տարբերություններն

այնպիսին են, որ մի քանի տարի առաջ նշանավոր չերքեզագետների կողմից նույնիսկ առաջարկվեց միավորել չերքեզերենի երկու գրական՝ աղըղերեն և կաբարդերեն լեզուների ուղղագրությունները: Հարցը քննարկվեց Կաբարդա-Բալկարական Հանրապետության խորհրդարանում, սակայն այդպես էլ ընթացք չստացավ:

Վերոշարադրյալ բոլոր բարդությունները լրջորեն կադապրել են հյուսիսկովկասյան լեզուների գրարտահայտման հնարավորությունները և հանգեցրել մի իրավիճակի, երբ մի շարք լեզուների այբուբեններում չեն ընդգրկվել ոչ միայն բարբառային հազվագյուտ հնչյուններ, այլև բուն գրական լեզուների մի շարք բաղաձայներ: Նույն հանգամանքն անգամ պատճառ է հանդիսացել, որ երբեմն լեզուների գրական տարբերակների մշակման համար հիմք ընտրվեն ոչ թե առավել տարածված կամ հաճախ դեպ, այլ հնչյունակազմում նվազագույն բաղաձայնաքանակ պարունակող բարբառները: Ինչպես այս առթիվ նշում է Զեթֆորդը.

«One of the decisions which had to be made in developing languages in the Caucasus concerned the selection of a particular dialect upon which to base the literary language. ... Among the NWC languages the choice depended partly on phonology. For Adyghe, the Temirgoi (or Chemgui) dialect was selected partly because it had the simplest sound system - only 50 consonants as against the 60 of Shapsugh or the 64 of Bzhedukh.» (Catford. *Mountain of Tongues*, էջ 297).

Ամփոփելով կովկասյան այբուբենների գրաբանական այս համառոտ քննությունը՝ կարող ենք եզրակացնել, որ կովկասյան երկու լեզվաընտանիքների լեզուների համար էլ մինչ օրս փաստորեն գոյություն չունեն լիարժեք այբուբեններ, իսկ ի դեմս ռուսահեն գրի՝ գործ ունենք մի նշանակարգի հետ, որի ներուժը թե՛ տառաձևերի ցանկի լրիվության, թե՛ կառուցվածքային համապատասխանության առումներով միանգամայն թերի է և անբավարար հյուսիսկովկասյան լեզուների պարզ, կիրառական և հնչյունայնորեն լիարժեք գրառման համար:

Ուստի ինդիք է առաջանում ևս մեկ անգամ փորձել ի մի բերել բոլոր այս լեզուների հնչաբանական վստահելի վերլուծությունները և դրանց հիմամբ մշակել նոր, հարմարեցված և ընդհան-

րական գրային համակարգ, որը կլինի պարզ և ընկալելի, իր տառաձևերում և տարձևումներում՝ կանոնավոր, և միևնույն ժամանակ՝ համապատասխան այս լեզուների բարդագույն հնչական առանձնահատկություններին՝ արտապատկերելով դրանք լիակատար հնչունային ներկայացուցչականությամբ և այբբենական փոխմիարժեքությամբ բոլոր մակարդակներում:

Խնդիրն այս ձևակերպմամբ, որքան էլ բարդ թվա, մեծ ջանքեր իրականում չի պահանջում. քաղաքական կամքի առկայության և հարցին ճկուն մոտեցում ցուցաբերելու դեպքում այն կարող էր պատշաճ լուծում գտնել դեռևս 20-րդ դարասկզբին:

Ստորև կփորձենք վերլուծել առավել լիարժեք մի քանի այբուբենների տառակազմական և համակարգաստեղծ սկզբունքները՝ գտնելու կանոնների այն ամբողջությունը, որի հիման վրա հնարավոր կդառնա բազային նշանացանկի մակածումն ու ձևավորումը և գրային *անկախ* համակարգի կառուցումը:

ՄԱՍ Բ. ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԱՅԲՈՒԲԵՆՆԵՐԻ ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

§1. Գրի ավանդույթը Կովկասում

Աշխարհի գրային համակարգերի ցանկում հարավկովկասյան՝ հայոց և վրաց այբուբեններն աչքի են ընկնում հնչյուն-տառ փոխադարձությունների բարձրագույն աստիճանով և ընդգրկվում են աշխարհի ամենակատարյալ հնչյունային այբուբենների շարքում: Լիարժեք հնչյունային գիր ունեցող այլ լեզուներ են ավանդերենը, չեխերենը, էստոներենը, ֆիններենը, ռումիներենը, թուրքերենը, հունարենը, իտալերենը, իսպաներենը, սերբախորվաթերենը և այլն: Բացառությամբ հունարենի, որն ունի սեփական հնագույն այբբենական ավանդույթ, հիշատակված մնացյալ բոլոր լեզուները գործածում են լատինական գրի ձևափոխված տարբերակներ, որոնցում հնչյուններն արտահայտվում են ոչ թե նշանաբարդման միջոցով, այլ, առավելապես, նոր տառերի ներմուծմամբ: Լատինագրից տարբեր սեփական լիարժեք հնչյունային գիր (վանկագիր) ունեցող լեզուներ են ճապոներենը, կորեերենը, չերոկիս, սանսկրիտը, հնդկական ենթամայրցամաքի այլ լեզուներ՝ հինդիս, կաննադան, թելուգուն, մալայալամը, օրիան, բենգալիս և այլն: Մի շարք արիեստական լեզուներ, ինչպիսիք են էսպերանտոն, իդոն և լոյբանը, ևս ունեն հնչյունային ուղղագրություն: Վերոբերյալ տարբերակներում լիարժեք հնչյունային գիր հնարավոր է եղել ստանալ կամ նոր գրային համակարգի մշակմամբ (բրահմի և դուստր համակարգեր, հունարեն, հայերեն, վրացերեն, կորեերեն, ճապոներեն, չերոկի և այլն), կամ փոխառված գրում նոր և օժանդակ նշանների ներմուծմամբ, կամ էլ հակառակը՝ գրի պարզեցմամբ: Տառաբարդումը կիրառվել է հազվադեպ և հիմնականում միջնադարում: Նման գրային համակարգերը բավարարում են լեզուների հնչական բոլոր պահանջները և գրաբանական բարդություններ հաճախ չեն հարուցում:

Դարերի ընթացքում հարավկովկասյան երկու այբուբենների կենսունակությունը, բացի ավանդույթի ուժից և դրանք գործածող ժողովուրդների ինքնության առանձնահատկություններից, պայմանավորված է եղել նաև այն կարևոր հանգամանքով, որ

դրանք առավելագույն կատարելությամբ են ներկայացրել հայոց և վրաց լեզուների հնչյունային կազմերը: Այս այբուբեններին դարերի ընթացքում չեն կարողացել փոխարինել ո՛չ հունատառ, ո՛չ արամեատառ և ո՛չ էլ արաբա-, ռուսա- կամ լատինատառ համակարգերը, քանի որ ի սկզբանե ստեղծված են եղել հենց հայերենի և վրացերենի հնչյունակարգերի գիտական ուսումնասիրության արդյունքում: Կատարյալ էր նաև աղվանից այբուբենը, որի ավանդույթը, սակայն, ընդհատվել է դեռ միջնադարում:

Այս երեք այբուբենների ստեղծումն ինչ-որ իմաստով կարելի է համարել տարածաշրջանի բազմահազարամյա գրավոր մշակույթի զարգացման վերջնակետը, քանի որ գրի ավանդույթ Չարավային Կովկասի և Հայկական լեռնաշխարհի տարածքում գոյություն է ունեցել դեռևս մ.թ.ա. III-II հազարամյակներից:

Այստեղ հնագույն ժամանակներից տարածում և կիրառում են գտել գաղափարագիր, վանկագիր և այբբենական բազմաթիվ գրային համակարգեր՝ Հայկական լեռնաշխարհի դեռևս չվերծանված գծային գիրը (Ցոլակերտի, Արմավիրի, Ապարանի և այլ արձանագրություններ²², Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերներում հանդիպող գիր հիշեցնող առանձին նշաններ, Անձափի, Արտամետի, Բազառիճի և այլ վայրերից հայտնի հսկայանշաններ), լուվիական և բիայնական գաղափարագիրը, միջագետքյան սեպագիրը՝ գաղափարագրի և վանկագրի խառնուրդ՝ իր տարբերակներով (ասուրա-բաբելական, խեթական, խուռիական, բիայնական և աբեմենյան), արամեական գրի մի քանի տեսակներ, պահլավական, հունական, լատինական գրային համակարգերը, արաբագիրը և այլն: Սրանցից որևէ մեկը, սակայն, ի վիճակի չի եղել արտահայտելու ո՛չ հայերենի, ո՛չ

²² Մ.Սմբատեան, *Ցոլակերտի քերդը*, «Արարատ», Էջմիածին, 1910, 2; Մ. Սմբատեան, *Արարատի և Արագածի գագաթներին*, «Արարատ», Էջմիածին, 1913, Ա; Мещанинов И.И., *Закавказские иероглифы*, «Сообщения ГАИМК», 1932, N 3-4; Խանզադյան Է.Վ., Սկրտյան Կ.Գ., Պարսամյան Է.Ս., *Մեծամոր*, Երևան, 1973; Մուրադյան Ֆ.Մ., *Նորահայտ նշանագրեր Ապարանի շրջանից*, Հնագիտական աշխատանքները Հայաստանի Նորակառույցներում (1986-1987թթ. պեղումների արդյունքները), Երևան, 1992.; Ա. Մովսիսյան, *Նախա-մաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը*, Երևան, 2003.

վրացերենի, ո՛չ էլ, առավել ևս, Աղվանքի լեզգյան խմբի լեզուների հնչյունային ողջ բազմազանությունը և դարերի ընթացքում այդպես էլ չի հարմարվել այս լեզուներին և չի դարձել ընդհանրական գրային համակարգ (նախամաշտոցյան հայ և վրաց գրի գոյության վերաբերյալ եղած կարծիքները վերջնական և աներկբա եզրահանգման հնարավորությունն դեռևս չեն ընձեռում):

ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆ			
Ա [a]	Ժ [z]	Ճ [tʃ]	Ռ [r]
Բ [b]	Ի [i]	Մ [m]	Ս [s]
Գ [g]	Լ [l]	Յ [j]	Վ [v]
Դ [d]	Խ [x]	Ն [n]	Տ [t]
Ե [e]	Օ [ts]	Շ [ʃ]	Ր [r]
Զ [z]	Կ [k]	Ո [o]	Ց [tsʰ]
Է [e:]	Հ [h]	Պ [tʃʰ]	Ի [w]
Ը [ə]	Չ [dz]	Պ [p]	Փ [pʰ]
Թ [tʰ]	Ղ [t]	Ճ [dʒ]	Ք [kʰ]

Ստեղծվելով (կամ կանոնակարգվելով) մ.թ. V դարում՝ հայոց, վրաց և աղվանից այբուբենները դարձել են նաև ժամանակի լեզվա- և գրաբանական մտքի զարգացման պսակը: Ի սկզբանե կատարելապես համապատասխանելով երեք լեզուների բոլոր առանձնահատկություններին՝ գործառապես եղել են առաջադեմ (ձայնավորների լիակատար ներկայացում), նորարարական (արտաբերման բոլոր դիրքերի ու միջոցների համար տարբեր և ճանաչելի նշանների գոյություն), գրաֆիկապես ինքնուրույն (չեն պատճենում հայտնի այբուբենների համաչափական ձևերը, անգամ եթե ծագումնաբանորեն կապված են դրանց հետ) և ներդաշնակ («...ընտրությանս նշանագրացն զնրբագոյնն եւ զլայնագոյնն, զկարճն եւ զերկայնն, զառանձինն եւ զկրկնաւորն, միանգամայն յարիւնեալ եւ յանկուցեալ...»²³; «...սպա նշանագիրս ըստ վերնապարգել կորովի սովորութեան իւրում եւ յաջողութեամբ Բրիստոսի շնորհացն կարգեալ եւ հաստատեալ կշռեր»²⁴):

²³ Կորին, *Վարք Մաշտոցի*. քնագիրը ձեռագրական այլ ընթերցուածներով, թարգմանութեամբ, առաջաբանով եւ ծանօթագրութիւններով ի ձեռն պրոֆ. Մանուկ Աբեղեանի, Հայպետհրատ, Երեւան, 1941, գլուխ Ը:

²⁴ Նույնի, գլուխ ԺԶ:

Վերջին մեջբերումները բացատրության բազմաթիվ փորձեր են ունեցել, և խոսել լիակատար մեկնաբանման մասին դեռ վաղ է, սակայն, ինչ էլ դրանք նշանակեն, այնուամենայնիվ մատնանշում են, որ տառանշանների հանդեպ կիրառվել է ընտրողական և գեղագիտական մոտեցում:

Եթե ուսումնասիրողների մեծամասնության շրջանում հայոց այբուբենի հեղինակն ու ստեղծման ժամանակաշրջանը կասկածներ չեն հարուցում, ապա վրաց այբուբենի ի հայտ գալու վերաբերյալ կան տարամետ կարծիքներ:

Ուսումնասիրողների մի մասը գտնում է, որ հայոց, վրաց և աղվանից այբուբենները, որոնց հայտնագործման ընթացքը մանրամասնորեն ներկայացված է համաժամանակյա հայկական պատմագրության մեջ, ստեղծվել են (ըստ այլոց՝ վերաներմուծվել և բարեփոխվել)²⁵ Մեսրոպ Մաշտոցի լուսավորչական գործունեության արդյունքում²⁶, մինչդեռ մյուս մասը և հատկապես վրաստանյան ակադեմիական դպրոցը համարում է, որ իրավացի է վրաց ավանդույթը, որը գրերի գյուտը վերագրում է Վիրքի արքայական հարստության կիսաառասպելական հիմնադիր Փառնավազ թագավորին և թվագրում մ.թ.ա. III դարով, իսկ Մեսրոպ Մաշտոցի մասնակցությունն այդ գործում մերժվում է:

Այդ վարկածների գիտական կորիզը վրաց այբուբենում մ.թ. V դարի գրաբանական իրողությունների շրջանակում անբացատրելի արխայիզմների առկայությունն է, ինչի քննության արդյունքները կարծես մատնանշում են, որ վրաց գրանշանների կանոնական հերթագայությունը պիտի իր նախօրինակն ունենար հունական այբուբենի մ.թ.ա. VI-V դարերի վիճակում²⁷ և կամ փոխառված լինել այդ ժամանակամիջոցում, կամ՝ հետագայում

²⁵ Ի.Յարութիւնեանց, *Հայոց Գիրը*, Թիֆլիս, 1892; Ռ. Յակոբեան, *Սկզբից էր Տառը*, Երևան, 2004.

²⁶ Հ. Աճառյան, *Հայոց Գրերը*, Երևան, 1984; Է. Աղայան, *Նախամաշտոցյան հայ գրի և գրականության, մեսրոպյան այբուբենի և հարակից հարցերի մասին*, Երևան, 1977; Lenore A. Grenoble. *Language policy in the Soviet Union*. Springer, 2003.

²⁷ Т. В. Гамкрелидзе, *Алфавитное письмо и древнегрузинская письменность*. Тбилиси, 1989 (<http://amklib113.ru/bbl/gkr/>).

արհեստականորեն վաղնջացված: Կարծիքներ կան, որ վրաց այբուբենը կարող է ծագած լինել մ.թ. I-II դարերում արամեական գրի տեղական մի տարբերակից²⁸ (Արմագի արձանագրություն):

Եղել են դիրքորոշումներ²⁹, որոնք քննադատել են այս տեսակետները՝ հնագիտորեն բավարար փաստարկված չլինելու հիմքով, իսկ վրաց այբուբենի ստեղծումն աներկբայորեն համարել հետքրիստոնեական իրողություն:

Ինչևէ, վրաց գրի ծագման խնդիրը բարդ է և դուրս ներկա խնդրի շրջանակներից, ուստի այստեղ չենք կենտրոնանա հարցի քննարկման կամ եղած կարծիքների քննադատության վրա: Նշենք ընդամենը, որ ստորև բերվող վերլուծությունը ցույց է տալիս, որ վրաց հնագույն գրատեսակը՝ «զխագիր» *աստվթավրուլին* (կամ *մրզլովանին*)

ՎՐԱՑ (ԱՍՏՎԹԱՎՐՈՒԼԻ) ԱՅԲՈՒԲԵՆ			
ⴐ [a]	ⴑ [i]	ⴒ [ɛ]	ⴓ [tʰ]
ⴔ [b]	ⴕ [kʰ]	ⴖ [s]	ⴗ [tsʰ]
ⴘ [g]	ⴙ [l]	ⴚ [tʰ]	ⴛ [dz]
ⴜ [d]	ⴝ [m]	ⴞ [uj]	ⴟ [tsʰ]
ⴠ [ɛ]	ⴡ [n]	ⴢ [pʰ]	ⴣ [tʰ]
ⴤ [v]	ⴥ [ʃ]	⴦ [kʰ]	ⴧ [z]
⴨ [z]	⴩ [o]	⴪ [x]	⴫ [qʰ]
⴬ [ej]	ⴭ [pʰ]	⴮ [qʰ]	⴯ [dʒ]
ⴱ [tʰ]	ⴲ [z]	ⴳ [ʃ]	ⴴ [h]
			ⴵ [o:]

²⁸ L. Chilashvili. *The Pre-Christian Georgian inscription from Nekresi*. Kartvelology, No 7, Tbilisi, 2000; Г.В. Церетели, *Армазское письмо и проблема происхождения грузинского алфавита*. II, Эпиграфика Востока. М.-Л., Изд-во АН СССР, 1949; Бердзенишвили Н., Джавахишвили И., Джанашиа С., *История Грузии*, ч. 1. С древнейших времен до начала XIX в. Тбилиси: Госиздат ГССР, 1950; Джанашиа С.Н., *К вопросу о языке и истории хеттов*. 1959, Труды: В 3 т. Тбилиси: Изд-во АН ГССР.

²⁹ Donald Rayfield. *The Literature of Georgia: A History* (Caucasus World). RoutledgeCurzon, 2000; Stephen H. Rapp. *Studies in medieval Georgian historiography: early texts and Eurasian contexts*. Peeters Publishers, 2003; P.R. Ackroyd, C.F. Evans, G.W.H. Lampe, S.L. Greenslade. *The Cambridge History of the Bible: From the Beginnings to Jerome*. Cambridge University Press, 1975; V. A. Shnirelman. *The value of the past. Myths, identity and politics in Transcaucasia*. Osaka: National Museum of Ethnology (Senri Ethnological Studies No. 57), 2001.

«բոլորգիրը»), գրաֆիկական իմաստով լիովին ընդգրկվում է հայոց և աղվանից գրերի ընդհանրացված համակարգում և ամբողջացնում դրանց տառաստեղծ ներուժի լիարժեք պատկերը:

Հարավկովկասյան երրորդ՝ աղվանից այբուբենը պատմության ասպարեզից անհետացել է դեռևս միջնադարում Աղվանից մարզպանության (իբրև բազմազգ և անհամասեռ պետական-մշակութային միավորի) ուժացման հետևանքով՝ մի կողմից՝ արաբական արշավանքների արդյունքում տեղում ստեղծված իսլամական պետությունների, մյուս կողմից՝ հայալեզու միջավայրի և հայոց եկեղեցու ուժեղ ազդեցության արդյունքում:

Աղվանից այբուբենի գործածության վերաբերյալ վերջին տեղեկությունները վերաբերում են XIII դարին (Յեթում պատմիչ): Դրանից հետո այս գրի և նրա տառածևների վերաբերյալ գիտելիքները կորչում են, իսկ «գիր աղուանից» եզրը սկսում է օգտագործվել հայկական գանազան գաղտնագրությունների համար³⁰:

Մագաղաթյա և որմնագիր հուշարձանների կորստի հետևանքով աղվաներենի վերաբերյալ տեղեկությունները մինչև վերջերս հիմնված են եղել զուտ ենթադրությունների և հին աղբյուրներից քաղվող հիշատակումների վերլուծման վրա:

Գիտության այս լուսանցքային ճյուղում առաջին ճեղքումը 1937թ. Երևանի Մատենադարանի MS No. 7117 ձեռագրում (գրված 1442թ.), ի շարս այլ այբուբենների գրչանկարների, «Աղուանից գիրն է» խորագրով մի այբուբենի հայտնաբերումն էր Իյա Աբուլաձեի կողմից, որը, ինչպես պարզվեց, իսկապես պատկերում էր անհետացած աղվանից այբուբենը³¹:

Մի քանի տարի անց՝ 1947-53թթ., Մինգեչաուրի ջրամբարի կառուցմանը զուգահեռ Սուդաղըլան հնավայրում տարվող պեղումների ընթացքում Երևան եկած ավերակ մի եկեղեցուց հայտնաբերվեցին աղվանից գրեր կրող որոշ հնագիտական նյութեր:

³⁰ Ա.Գ. Աբրահամյան, *Հայոց Գիր և Գրչություն*, Երևան, 1973.

³¹ И. Абуладзе, *К открытию алфавита кавказских албанцев*, Изв. ИЯИМК, т. 4, Тбилиси, 1938; А. Шанидзе, *Новооткрытый алфавит кавказских албанцев и его значение для науки*, Изв. ИЯИМК, т. 4, Тбилиси, 1938.

Սակայն ո՛չ նորահայտ այբուբենը և նման (բայց ոչ՝ նույնական) գիր կրող հնագիտական գտածոները, ո՛չ էլ հաջորդ տարիների ընթացքում այդ հավաքածուին հավելված այլ պեղածո առարկաները տեքստերի սակավատառության, աղվաներենի անստուգության և հայկական ձեռագրում աղվանից գրի հնչյունների ոչ ճշգրիտ ներկայացման հետևանքով (ինչի պատճառը հայերենի 36 տառի դիմաց աղվաներենում 52 տառի գոյությունն ու հայերենով դրանց տառադարձման անկատարությունն էր) չհանգեցրին այս լեզվի ուսումնասիրության լուրջ տեղաշարժի:

Առաջընթացի համար անհրաժեշտ թափ այն ստացավ Սինայի լեռան սբ. Կատարինեի վանքի հին ձեռագրապահոցում տեղի ունեցած մի բացառիկ հայտնագործության շնորհիվ, երբ հայատառ համարվող, մինչդեռ իրականում վրացատառ մի աղոթագրքի (Sin. Geo. N 55) ուսումնասիրության արդյունքում նկատվեց, որ ձեռագրում վրաց գրի ետևում թաքնված կա միանգամայն այլ՝ հայերենին և վրացերենին շատ նման նշաններ պարունակող, սակայն գրեթե անընթեռնելի մի հին շերտ, որը լվացվել և ջնջվել էր մագաղաթյա թերթերի կրկնօգտագործման համար:

1996թ. 2. Ալեքսիձեն, համեմատելով ենթաշերտի տեքստը հայկական ձեռագրից հայտնի աղվանից գրի հետ, հանգեց այն համոզման, որ ի դեմս վերագյուտ ձեռագրի՝ գործ ունենք աղվաներենով հնագույն և առայժմ միակ լայնածավալ տեքստի հետ: Յետագա մի քանի տարիների ընթացքում լույս տեսան հաշվարային (համակարգչային) և օպտիկական տեխնոլոգիաների զուգարկմամբ կրկնագրի վերականգնվող տեքստի քննության, նորագյուտ այբուբենի և նորահայտ աղվաներենի քերականության վերաբերյալ ուսումնասիրություններ, որոնց բոլորի արդյունքները հետագայում ամփոփվեցին «The Caucasian Albanian Palimpsests of Mount Sinai»³² կոթողային աշխատության մեջ:

Դրանում, ի շարս կարևորագույն արդյունքների, հեղինակները հանգում են նաև այն եզրակացության, որ աղվանից գիրն

³² J. Gippert, W. Schulze, Z. Aleksidze, J.-P. Mahé (eds.), *The Caucasian Albanian Palimpsests of Mount Sinai*. Brepols, 2009.

իսկապես ստեղծվել է հայոց այբուբենի նմանությամբ և հավանաբար անգամ նույն անձի՝ Մեսրոպ Մաշտոցի կողմից: Գրքի ներածության մեջ հեղինակներ Ալեքսիձեն և Մայեն գրում են.

«We know that the 26 additional letters of the Albanian alphabet have similarly been inserted among the 36 letters which have an Armenian equivalent, without changing their relative order. This is a serious reason to conclude that the Albanian alphabet was derived from the Armenian and that it is likely to have been created in the same circle, perhaps by the same person.», էջ xxiv.

Աղվանից գրի ուսումնասիրության արդյունքում պարզվեց նաև, որ աղվանից տառերի թե՛ ձևերի և թե՛ հնչյունային վերականգնվող արժեքների միջև հայկական և սինայական ձեռագրերում նշանակալի տարամիտումներ կան, ինչը փորձ արվեց բացատրելու այն հանգամանքով, որ հայկական ձեռագիրը գրի է առնվել այն ժամանակ, երբ «գրական» աղվաներենն արդեն դուրս էր մղվել գործածությունից, իսկ այբուբենն ու դրա հնչյունային արժեքները՝ գրեթե մոռացվել: Այդուհանդերձ, ճշտված այբուբենում նշանների զգալի մասի ընթերցումները (ուստիև՝ աղվաներենի հնչյունակազմի վերաբերյալ ամփոփիչ եզրակա-

ԱՂՎԱՆԻՑ ԱՅԲՈՒԲԵՆ					
Չ [a]	Լ [teʰ]	Չ [tsʰ]	Ծ [tsʰh]	Ե [f]	Ճ [ʃ]
Ե [b]	Հ [zʰ]	Է [dz]	Զ [m]	Ն [dz]	Մ [y]
Գ [g]	Ի [j]	Ճ [kʰ]	Պ [qʰ]	Յ [tʃʰ]	Գ [tsʰʰ]
Ծ [d]	Կ [i]	Թ [lʰ]	Պ [n]	Գ [pʰ]	Թ [tsʰh]
Ե [ɛ]	Ե [ʏ]	Ծ [h]	Ե [dzʰ]	Տ [s]	Ի [w]
Ճ [z]	Դ [l]	Դ [qʰ]	Ե [ʃ]	Ե [r]	Կ [pʰ]
Ը [ɛ:]	Լ [nʰ]	Ս [v]	Գ [dʒ]	Ի [s]	Կ [kʰ]
Բ [ɜ]	Վ [x]	Մ [teʰh]	Օ [o]	Խ [v]	
Ե [tʰ]	Ի [dʰ]	Զ [tʃʰ]	Հ [vʰ]	Ն [tʰ]	

ցությունները) դեռևս թեական են (52 տառերից միայն 29-ի հնչյունային արժեքներն են համարվում հստակ, 23-ինը՝ պակաս վստահելի), իսկ աղվանական հնագիտական գտածոների մեծ մասը՝ առայժմ դժվարընթեռնելի և խնդրահարույց:

Աղվանից գրի վերոբերյալ տարբերակում տառանշանները գերազանցապես կրկնօրինակում են սինայական, այլ ոչ՝ հայկական ձեռագրի տառաձևերը: Սակայն բնական է ենթադրել, որ ինչպես հայոց և վրաց, այնպես էլ աղվանից գրում ժամանակի ընթացքում պիտի ձևավորված լինեին մեզ դեռևս անհայտ բազմաթիվ գրչատեսակներ, որոնց ուշմիջնադարյան տարբերակներից մեկն էլ հավանաբար եղել է Մատենադարանի 7117 ձեռագրի գրչի տրամադրության տակ, ինչով էլ գուցե կարելի է մասամբ բացատրել երկու ձեռագրերի գրչական տարբերությունները: Այդուհանդերձ, վերոբերյալ այբուբենում մի քանի դեպքերում փոքր-ինչ շեղվել ենք սինայական տառաձևերից՝ հոգուտ հայկական տարբերակի կամ համաչափ տառակերտման: Այս երեք տարբերակների միջև տարամիտումները բերված են ներքևի աղյուսակում: Աստղանիշով նշված տառերը չեն հանդիպում սինայական մաղազաթում, ուստի մենագրության հեղինակները դրանք կրկնօրինակել են հայկական տարբերակից:

MS No. 7117	Ը	Թ	Ճ	Ը	Յ	Ծ	Շ	Չ
Sin.Geo. N 55	Կ	Կ	Կ	Յ	Յ	Յ	Յ	Փ
Տառատեսակ	Չ	Հ	Ն	Գ	Յ	Տ	Յ	Փ
MS No. 7117	Խ	Ց	Հ	Կ	Ն	Զ	Չ	Չ
Sin.Geo. N 55	*Խ	*Ց	Հ	Կ	Ն	Զ	Չ	Չ
Տառատեսակ	Խ	Ց	Հ	Կ	Ն	Զ	Չ	Չ

Նշենք, որ վերոբերյալ գլխագրերն ու ստորև կիրառվող մի քանի այլ տառատեսակներ մեր կողմից ստեղծվել են վերլուծու-թյան մեջ գրային համակարգերի հարանմանությունն ու դրանց

համաչափական (իզոմետրիկ) կանոնների վերհանումը հեշտաց-
նելու հատուկ նպատակով և չեն պատճենված հաշվարային առ-
կա որևէ տառատեսակից: Դրանք, ըստ էության, միջինացված
տառածևեր են, որոնք ճշգրտորեն չեն հետևում պատմական
որևէ ժամանակամիջոցում տարածված գրչատեսակներին, այլ
առավելապես ընդհանրացնում են եղած ձևերը՝ համաչափական
մի քանի կանոնների համաձայն:

Օրինակի համար նշենք, որ հայոց գրի որոշ տառածևեր պատ-
մականորեն ունեցել են մի շարք տարբերակներ, որոնցից մի
քանիսը դրանց մոտեցնում են վրաց և աղվանից գրերի որոշ տա-
ռերի գրչագրություններին. այսպես՝ Ն տառն ունեցել է Ս ձևը,
որը նույնական է աղվաներենի ժ և վրացերենի ք՝ հնչյունների
տառածևերին, Կ տառի համար հայտնի են աղվաներենի i և
վրացերենի q՝ հնչյունների համապատասխան տառածևերը (Կ),
գոյություն ունեն Զ տառի տարբերակներ՝ գրեթե կրկնող աղվա-
նից և վրաց գրերի + ձևերը, Տ-ն հնում գրվել է գերազանցապես
Ճ ձևով և այլն: Այնուհանդերձ, միևնույն տառին վերաբերող այս
բազմապիսի գրչագրերն ընդհանրացվող համակարգում կզա-
նազանվեն միմյանցից, քանի որ դրանք հաճախ ունեն տարբեր
համաչափություններ և կազմվում են բազային մասնիկների տա-
րածև համակցումներով: Վրաց այբուբենում իրենց հերթին կան
տառանշաններ, որոնց *այլագրերը* (allograph) մոտ են հայկական
տառերի կանոնական ձևերին:

§2. Հարավկովկասյան ընդհանրացված նշանակարգ

Այժմ տեսնենք, թե որոնք են հարավկովկասյան երեք այբու-
բենների համաչափական հիմնական տարրերը և որ մասնիկնե-
րից ինչպիսի զուգորդմամբ են դրանք կառուցվում:

Հնարավոր տարակարծություններից խուսափելու համար
անմիջապես նշենք, որ ներկա վերլուծությունն ամենևին չի են-
թադրում, թե համաչափական բերվող օրինաչափությունները
Մաշտոցի կամ հայոց այբուբենի անդրանիկ վայելչագիր Հռոփա-
նոս Սամոսատցու կողմից պիտի ընկալվեին իբրև այդպիսին,

կամ թե հայոց, վրաց և աղվանից գրերի ստեղծման (կամ կանոնակարգման) ընթացքում հեղինակները (Մաշտոցը կամ այլք) կիրառել են ստորև բերվող համակարգը կամ դրա որևէ նմանակ:

Այն ընդամենը փորձ է՝ վերհանելու դարերի ընթացքում ի հայտ եկած և զարգացած գրչատեսակներում կանոնակարգված *փաստացի* տառածևերն ու մասնիկների ամբողջությունը, քանի որ հարավկովկասյան երեք պատմական այբուբենների անգամ հպանցիկ դիտարկման արդյունքում կարելի է անմիջապես նկատել, որ դրանց արտաքին նմանությունները գլխավորապես պայմանավորված են գրաֆիկական նույն կամ նման արտահայտչամիջոցների կիրառմամբ:

Երևան հանելով և ի մի բերելով այս այբուբեններում տառակազմական օրինաչափությունների ատաղծը՝ կարելի է ընդլայնել դրանց կիրառական շրջանակը՝ ստեղծելով ըստ համաչափական հիմնարար կանոնների կառուցվող հնարավոր և թույլատրելի բոլոր զուգակցությունների համահավաք աղյուսակ:

Դա և՛ կընդհանրացնի ինդրո առարկա այբուբենների գրաֆիկական պատկերը, և՛ ի ցույց կդնի համակարգի տառակազմական հնարների ողջ ներուժը, ինչն իր հերթին ազատության բավարար աստիճան կընձեռի մեզ հյուսիսկովկասյան լեզուների այբուբենների ներմուծման գործում *ձևաբանական* մոտեցում զուգաբերելու համար:

Ծնորդներ

Մեր վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ հայոց, վրաց և աղվանից այբուբենների տառերը կազմվում են *գծիկներով, կամարների և շրջանների* (լրիվ կամ հատվող) լծորդումներով: Բացահայտորեն գերակշռում են առաջին երկու նշանատարրերի զուգորդումները:

Հայոց այբուբենում, օրինակ, գծակամար կազմությունների թիվը 22 է (Ա, Բ, Գ, Դ, Ե, Ը, Թ, Ժ, Ի, Խ, Կ, Զ, Ղ, Ս, Ն, Ռ, Պ, Ռ, Ս, Վ, Ր, Զ), գծաշրջանայիններինը՝ 12 (Ձ, Զ, Ջ, Տ, Յ, Տ, Ծ, Զ, Օ, Ծ, Փ, Ֆ), իսկ զուտ գծայինները՝ 4 (Է, Լ, Ծ, Ի):

Այս տվյալներն անշուշտ կախված են գրչա- և տառատեսակների ընտրությունից: Այսպես՝ որոշ գծակամար նշանների այլաբեր կարող են ունենալ զուտ գծային տեսք, ինչպես հայերենի Հ տառի դեպքում է, որը հաճախ ներկայացվում է նաև որպես Հ:

Վրաց և աղվանից այբուբեններում պատկերը գրեթե նույնն է: Հին վրացական գլխագրում առկա է 26 գծակամար (Կ, Ղ, Դ, Դ, Ե, Ի, Գ, Ծ, Բ, Ս, Կ, Ե, Ը, Վ, Ո, Կ, Կ, Ի, Ժ, Զ, Է, Կ, Ն, Ք) և 3 զուտ գծային (Լ, Է, Ծ), իսկ աղվանականում՝ 32 գծակամար (Դ, Դ, Գ, Գ, Գ, Գ, Գ, Ս, Ս, Ս, Ե) և 10 զուտ գծային (Լ, Է, Է, Է, Է, Է, Է, Է, Է, Է) տառանշան: Մնացյալը գծաշրջանային են (վրաց Շ, Ծ, Գ, Օ, Օ, Փ, Գ, Տ, Տ և աղվանից Ջ, Ջ, Օ, Փ, Գ, Զ, Զ, Տ, Տ):

Հարավկովկասյան երեք գրային համակարգերում գծակամար ձևերի գերակշռությունն է, որ գերազանցապես պայմանավորում է այս այբուբենների ուրույն տեսքը՝ ի տարբերություն լատինական, հունական և դրանցից սերած այլ նշանային համակարգերի, որոնցում տառակազմիչ ամենահաճախադեպ տարրը գծիկն է, ապա միայն՝ շրջանը և կամարը:

Դ Դ Դ Դ Ե Ե

Դ Դ Դ Դ Ե Ե

Ս Ս Ս Ս Ս Ս

Ի Ի Ի Ի Ի Ի

այլ ձևեր Դ Ե

Լատինական գրում, օրինակ, գծային կազմությունների քանակը 15 է (A, E, F, H, I, K, L, M, N, T, V, W, X, Y, Z), հունականում՝ 17 (A, Γ, Δ, E, Z, H, I, K, Λ, M, N, Ξ, Π, Σ, T, Y, X), մինչդեռ գծակամար տեսք առաջինում ունի միայն 6 (B, D, J, P, R, U), իսկ երկրորդում՝ ընդամենը 3 տառ (B, P, Ψ): Մնացյալ նշանները բաղկացած են շրջանային տարրերից (լատինական C, G, O, Q, S և հունական Θ, Ο, Φ, Ω):

Ձախում բերված են հայոց այբուբենի գծակամար նշանների հիմնական

ձևորոշիչ զուգորդումները՝ ածանցյալ տառերով հանդերձ:

Ընդհանրացնելով՝ կարելի է փաստել, որ հարավկովկասյան երեք այբուբեններում առկա գծակամար տառաձևերը բաշխվում են ըստ հետևյալ խմբերի:

ա) Եզակի կամ *անկամար* (զուտ գծային) համակցումներ: Այս խումբը բաղկացած է մեկ նշանից՝ I պարզագույն *ուղղածիզից*:

բ) Երկակի կամ *միակամար* համակցումներ՝ կառուցվող I ուղղածիզին *կամարի* կցմամբ կամ բաղկացած պարզապես մեկ կամարից: Ինչպես պատկերված է աջում, դրանք ի հայտ են գալիս լծորդման 3 դիրքերում՝ վերին (Ր-աձև), միջին (Ի-աձև) և ստորին (Ի-աձև), որոնք հանդիպում են ուղղածիզի տողաչափ բարձրության դեպքում, և չորրորդ՝ խառը (Կ-աձև)՝ ոչ լրիվ բարձրության դեպքում:

Ր	վերին լծորդում
Ի	միջին լծորդում
Ի	ստորին լծորդում
Կ	խառը լծորդում

Կամարակցումը լինում է ինչպես աջից (Ր), այնպես էլ ձախից (Կ) կամ կենտրոնից (Կ): Կամարը կարող է գրավել տողի ուղղահայաց ողջ տիրույթը (Ռ, Ս), գծիկը կարող է կցվել ոչ միայն կամարի մի կողմին (Ր, Ի), այլև կենտրոնին (Պ-աձև):

կամար - բոլորակ

Ր	Ր
Ի	Ի
Կ	Կ

Բոլոր տառերում կամարները կարող են փակվել՝ վերածվելով շրջանի: Դրանք տառերի *բոլորակ* ձևերն են (Ղ→Գ, Ե→Ժ, Կ→Գ, Ն→Ն, Ի→Ի, Փ→Փ, Է→Է, Բ→Բ, Ն→Ն և այլն): Վերջիններս չի կարելի խառնել գծաշրջանային տառաձևերի հետ, ինչպիսիք են հայկական Շ, Չ, Յ, Ց, Ձ, Ծ, վրացական Շ, Ծ, Չ, Չ, Ը, Տ, Գ և այլ գրանշանները, որոնց առանձնահատկությունները կբննարկվեն անջատ:

գ) Եռակի կամ *երկկամար* կազմություններ: Բաղկացած են երկու կամարներից (բաց կամ փակ՝ բոլորակ) և մեկ գծիկից (Թ, Կ, Ը, Ք, Ն, Ն, Ժ, Կ, Բ և այլն)՝ ըստ վերոբերյալ բոլոր կանոնների:

Այս երեք խմբերի՝ ներկայացված սկզբունքներով կառուցվող բոլոր *անաճանց* զուգորդությունները բերված են ստորին աղ-

յուսակում՝ որպես պարզ կամ *ծնորդ* նշաններ: Դրանցում թվա-
նշված են հայոց (1), վրաց (2) և աղվանից (3) այբուբեններում
հանդիպող տառաձևերը, իսկ բացատները մատնանշում են
անհնարին գուգորդությունները:

ԵԶՍԿԻ ԵՎ ԵՐԿԱԿԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ												
Մոմբուներ	Լ	Դ ^{2,3}	Ր ¹	Ջ ²	Ե ²	ՈՒ ^{1,2}	Ս ¹	Կ	Չ ³	Չ ³	Մ ¹	Մ ¹
	՝	Ի ^{1,2,3}	Վ ^{2,3}	՝	՝	՝	՝	Վ ³	Ի ³	Փ ³	Փ ³	՝
	՝	Ե ²	Վ ²	՝	Կ ²	Ս ^{2,3}	՝	Ջ ²	Ե ²	Ջ ²	Ջ ²	Ջ ²
	՝	Կ ²	Կ ²	՝	՝	՝	՝	՝	Կ ²	՝	՝	՝

ԵՌԱԿԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ												
Մոմբուներ	Ը	Յ	Ը	Յ	Գ	Ը	Մ	Վ	Մ	Վ	Մ	Վ
	՝	՝	՝	՝	Դ	Վ	Կ	Փ	Դ	Փ	Փ	Փ
	՝	՝	՝	՝	Դ	Վ	Կ	Փ	Դ	Փ	Փ	Փ
	՝	՝	՝	՝	Դ	Վ	Կ	Փ	Դ	Փ	Փ	Փ

Տվյալ համակցություններում կան ապագա գործածման և գրի
բնական ուղղության առումներով, մեր գլահատմամբ, անհար-
մար և աններդաշնակ տարբերակներ, որոնք նշել ենք բաց մոխ-
րագույնով: Հակառակ՝ որ դրանցից որոշները երբեմն հանդիպում
են հարավկովկասյան այբուբեններում, նման կազմությունները
չեն ներառվի նախատեսվող այբուբենի բազային նշանաձևերի
կանոնական համախմբում:

Ածանցյալ ձևեր

Տառերի հիմնական խումբը բարդ
կամ *ածանցյալ* ձևերն են, որոնք կա-
ռուցվում են ծնորդ տառաձևերին ուղ-
ղահայաց տարբեր դիրքերում երեք
հիմնական տեսակի ածական ելուստ-
ների՝ *ածանցների* հավելմամբ:

ծնորդներ	ածանցյալ ձևեր		
Լ	Լ	Լ	Լ
Ր		Ր	Ր
Ե	Ե	Ե	

2. Երկրորդն այն խումբն է, որում դեպի աջ և ներքև կողմնորոշված ածանցը ծնորդին հավելվում է աջից երեք՝ վերին (Մ, Պ), միջին (Բ, Բ, Դ, Ռ, Ե, Ժ, Յ, Ժ, Զ) և ստորին (Լ, Ը, Ղ, Լ, Զ, Վ, Վ) դիրքերում: Այս տիպի ածանցումն ամենատարածվածն է և ծնորդ ձևերի հետ միասին կազմում է երեք այբուբենների տառաձևերի հիմնական մասը:

Կրկին, կամարին հավող ածանցումներով տառանշանները համարվում են աններդաշնակ, թեպետև շատ հազվադեպ հանդիպում են հարավկովկասյան այբուբեններում:

Չուգորդական ընդհանուր համակարգը տրված է ստորև բերվող աղյուսակում, որում, որպես հայերենի Թ տառի նախնական կամ այլազիր տարբերակ, ընդգրկված է երկկամար համակցությունների միջին կցմամբ բլոկի առաջին տողի չորրորդ նշանը՝ Զ:

ԵԶԱԿԻ ԵՎ ԵՐԿԱԿԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ													
Գ	Դ	Դ ₃	Դ	Ե	Ե	Մ	Մ	Մ	Մ	Մ	Մ	Մ	Մ
	◻	Բ	Վ	◻	◻	◻	Վ	Բ	Փ	Փ	◻	◻	Փ
	◻	Ե	Կ	Ը	Կ	Ը	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե
	◻	Կ	Ե	◻	◻	◻	◻	Ե	◻	◻	◻	◻	◻
Դ	Դ	Դ _{1,2}	Դ	Ե	Ե	Մ	Մ	Մ	Մ	Մ	Մ	Մ	Մ
	◻	Ե	Վ	◻	◻	◻	Վ	Բ	Փ	Փ	◻	◻	Փ
	◻	Ե	Կ	Ը	Կ	Ը	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե
	◻	Ե	Կ	◻	◻	◻	Ե	◻	◻	◻	◻	◻	◻
Լ	Լ	Լ _{1,2}	Լ	Լ	Լ	Մ	Մ	Մ	Մ	Մ	Մ	Մ	Մ
	◻	Լ	Վ	◻	◻	◻	Վ	Բ	Փ	Փ	◻	◻	Փ
	◻	Լ	Կ	Ը	Կ	Ը	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ
	◻	Լ	Կ	◻	◻	◻	Լ	◻	◻	◻	◻	◻	◻

Եռակի համակցություններն իրենց հերթին կազմում են հետևյալ նշանակարգերը.

I	†	Գ	Գ	Ճ	Ճ	Ռ	Ռ	Գ	Գ	Պ	Պ	Պ	Պ
	□	□	□	□	□	□	□	□	□	□	□	□	□
	□	Ե	Կ	□	Խ	Կ	Ճ	Ճ	Շ	Շ	Չ	Շ	Շ

I	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ
	□	Ի	Վ	□	□	□	Վ	Ժ	Չ	□	□	□	□
	□	Ղ	Ղ	□	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ

ԵՌԱԿԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I	□	□	□	Ճ	Ճ	□	□	□	□	□	□	□	□
	□	□	□	Շ	Շ	Փ	Շ	Փ	Շ	Փ	Շ	Փ	Շ
	□	□	□	Շ	Շ	Փ	Շ	Փ	Շ	Շ	Շ	Շ	Շ

I	Շ	Շ	Շ	Շ	Շ	Կ	□	Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ
	Փ	Շ	Շ	□	□	□	□	□	□	□	□	□	□
	Փ	Շ	Շ	Փ	Շ	Փ	Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ	Շ

I	□	□	□	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ
	□	□	□	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ
	□	□	□	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ



4. Այսբանով, սակայն, չի սահմանափակվում հարավ-կովկասյան այբուբենների տառաձևերի բազմազանությունը: Բերված աղյուսակներում դիտարկված էին միայն ուղղաձիգի և մեկ կամ երկու կամարի համակցությունների ու տարբեր դիրքերում դրանց հավելվող մեկ ածանցի դեպքերը: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, կան տա-

ռանշաններ, որոնք բաղկացած են բացառապես գծիկներից կամ կորերից (Ճ, Ջ, Ռ, Շ, Չ) և չեն պարունակում կամարներ:

Ստորև բերվում են նման ծնորդների և ածանցյալ ձևերի որոշ գուգորդական խմբեր՝ դրանց մի մասի այլագրերով հանդերձ: Վերջիններս ներկայացվում են ցուցադրելու, թե ինչ ծնորդ ձևերից ինչպիսի սկզբունքով են ստացվում փաստացի կամ մեզ հետազայում անհրաժեշտ նշանները:

ԳԾԱՅԻՆ ՀԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
ԾՆՈՒՆՆԵՐ	↘ ↙ < > Y ʌ X	↘ ↙ < > ʌ X	↘ ↙ < > ʌ X	↘ ↙ < > ʌ X	↘ ↙ < > ʌ X
	↘ ↙ < > Y ʌ X				
	↘ ↙ < > Y ʌ X				
	↘ ↙ < > Y ʌ X				
ԱՅԲՈՒԲԵՐ	< > ʌ ʌ ʌ ʌ	< > ʌ ʌ ʌ ʌ	< > ʌ ʌ ʌ ʌ	< > ʌ ʌ ʌ ʌ	< > ʌ ʌ ʌ ʌ
	< > ʌ ʌ ʌ ʌ				
	< > ʌ ʌ ʌ ʌ				
	< > ʌ ʌ ʌ ʌ				

Այլագրերը, ինչպես նշվեց, երբեմն կարող են միանգամայն տարբեր ծնորդ մասնիկների համակցություններ լինել, ինչպիսին են, օրինակ, վրացերենի Շ և Է տառերը, որոնք երկուսն էլ ա հնչյունի այլագրերն են, սակայն մեկը կազմվում է շրջանի և վերին հատողի միակցմամբ, իսկ մյուսը՝ Լ-ի և հատողի: Կան տարբերակներ, որոնցում այն կազմվում է Ե մասնիկով և վերին հատողով: Մեկ այլ օրինակ են ճ հնչյունի վրաց Տ և Ծ այլագրերը, որոնցից առաջինը երկկամար է (կամ երկշրջան), երկրորդը՝ միակամար՝ վերին աջ ածանցի կցմամբ:

Եղած բոլոր այլագրերը, ամբողջացնելով հանդերձ հարավ-կովկասյան համակարգը, շարադրանքը չբարդացնելու նկատառումով մեկ առ մեկ չեն նշվում:

3

5. Խնդրո առարկա այբուբեններում որոշակի թիվ են կազմում նաև շրջանաձև բաղադրիչներով տառերը (Չ, Ջ, Ղ, Ճ, Շ, Ը, Յ, Տ, Տ, Տ, Տ, Տ, Տ, Տ, Փ, Օ, Ո, Ո, Ծ, Ծ և այլն):

Դրանցում երբեմն հանդիպում են նշաններ, որոնք, հաճախ հանդիսանալով վերոբերյալ միակամար կամ երկկամար նշանների գրչական տարբերակներ (Չ→Ջ, Ղ→Ճ, Ը→Շ, Ծ→Յ), միևնույն է, օժտված են առանձին և կարևոր

Եզրակացություն

Այսբանով ամբողջանում է հայոց, վրաց և աղվանից այբու-բենների գրաֆիկական ներուժի պատկերը: Տեսնում ենք, որ յուրաքանչյուր այբուբենն իր տառաձևերով ընդլայնում, լրացնում և անգամ բացահայտում է տառակազմական հնարների այն ամբողջությունը, որն իր ուրույն, ճանաչելի և շփոթելու չափ միասնական տեսքն ու փոխներթափանցելիությունն է հաղորդում հարավկովկասյան այբուբեններին: Տառաձևերի այս համահավաք և ընդլայնված համակարգն է, որ կանվանենք **հարավկովկասյան** (կամ *մաշտոցյան*) **մակածված համակարգ**:

Եթե չլիներ վրաց գիրը, լիովին պարզ չէր լինի, թե որ խմբերին են պատկանում հայերենի Թ և Տ տառերը, ինչը պարզելուն օժանդակում է զուգահեռ երկկամար համակցությունների առկայությունը վրաց և աղվանից այբուբեններում (Ծ, Ք, Ս, Տ և այլն), որոնցում, ի տարբերություն հայոց գրի, դրանք ավելի բազմազան են և նշանակալի թիվ են կազմում:

Նույնը կարելի է ասել նաև հայոց այբուբենի Խ տառի մասին: Աղվանից գրի անհայտ մնալու դեպքում ներկայացված բոլոր խմբերից այն դուրս կմնար որպես անկանոն կամ եզակի կազմություն (կրկնենք՝ խոսքը չի գնում տառերի ծագումնաբանության վերաբերյալ): Այս բացը, սակայն, գալիս են լրացնելու աղվանական հինգ տառաձևեր (Խ, Խ, Խ, Խ, Ջ), որոնք կազմված են

նույն մասնիկներից՝ ևս մի արդյունարար կանոն հավելելով մակածված համակարգին: Բնական է, որ պատկերված ընդհանրական համակարգում այս հազվագյուտ համակցությունները չենք ընդգրկում իրենց լրիվությամբ, այլ միայն մատնանշում ենք նմանատիպ կանոնի գոյությունը

		ԱՅԼ	
ՄԵՆՎԻՆԵՐ	ԽՄ	ՄՄ	ԽՄ
	ԽՍ	ՍՍ	ԽՍ
	ԽՋ	ՋՋ	ԽՋ
	ՋԹ	ԹԹ	ԽՋ

մի քանի տարբերակներով՝ հիմնական շեշտը դնելով գծակամարային և գծաշրջանային զուգորդությունների (որպես հարավկովկասյան այբուբենների արտաքին ոճավորման հիմնական ձևորոշ կանոնների) լիակատար ներկայացուցչականության վրա:

Հայկական տառաձևերի որոշ միջնադարյան տարբերակներ ի հայտ են բերում տառակազմական այլ սկզբունքներ ևս: Կան



այլազրեր, որոնցում, օրինակ, առկա են տառի ստորին ելուստին դեպի ձախ և ներքև ուղղված ածանցի կցման դեպքեր: Ձախից բերվող նկարում այս սկզբունքը կիրառված է հայերենի Կ տառի գրության մեջ (առաջին և երրորդ տողերի սկզբնատառերը)³³:

Անդյան լեզուները՝ անդերենը, ախվախերենը, ճամալերենը, տինդերենը, կարատերենը, ղողոբերենը և այլն, տարածված են Դաղստանի արևմուտքով հոսող Անդյան Կոյսու գետի վերին ավազանում և ավարերենի հետ միասին ամբողջացնում են արևելակովկասյան լեզուների ավար-անդյան ճյուղը:

Տվյալ ճյուղում անդերենը (ինքնանվանումը՝ *կ^wաննար*) ամենամեծաքանակն է (մոտ 10 հազար կրող) և, որպես հետևանք, ավելի լավ է ուսումնասիրված: Հնչակազմով այն, որոշ տարբերություններով հանդերձ, մոտ է ավարերենին:

Բաղաձայնական համակարգի ընդհանուր տեսքը պատկերված է հաջորդ էջին: Անդերենում վեղարային և լեզվակային շարքերում առկա են շրթնայնացած բաղաձայներ, որոնց ճշգրիտ քանակը, սակայն, հայտնի չէ: Յ (H) և Ե (Ջ) մակկոկորդայինները հանդիպում են միայն ստորինանդյան բարբառներում:

Անդերենի ձայնավորային կազմը զուրկ է երանգավորումներից և համարտաբերումներից: Կան միայն Ս (a), Շ (ε), Ի (i), Ո (u), Օ (o) պարզ ձայնավորները:

Այսպիսով, անդերենի այբբենական հերթակարգը ստանում է հետևյալ տեսքը:

Անդերենի այբուբեն

Ս	Ր	Բ	Դ	Դ	Ղ	Կ	ԿԿ	Կ	Կ	ԿԿ	Կ
a	p	b	t	d	t'	k	k:	g	k'	k':	k ^w
Գ	Գ	Շ	Է	Ի	Ի	Ն	ՆՆ	Չ	Չ	Դ	ԴԴ
g ^w	k ^w	ε	?	i	ts:	ts'	ts':	tš:	tš':	tj	tj:
Ճ	Շ	ՇՇ	Գ	Ը	ԸԸ	Փ	Փ	Ն	ՆՆ	Ճ	Ճ
dʒ	tʃ	tʃ:	qɣ:	qɣ'	qɣ':	qɣ ^w :	qɣ ^w '	s	s:	z	t
ՅՅ	Ո	Յ	ՅՅ	Յ	Ճ	Օ	Ն	ՆՆ	Ե	Ե	Ե
t:	u	ʃ	ʃ:	ʒ	x	o	χ	χ:	ɛ	χ ^w	ɛ ^w
Յ	Դ	Ի	Կ	Ն	Է	Լ	Շ	Լ			
h	f	h	m	n	w	r	l	j			

Անդյան լեզուների կրողների թիվը, ըստ տարբեր հաշվարկների, տատանվում է 15-35 հազարի սահմաններում: Անդյան ճյուղի բոլոր լեզուները, այդ թվում և ինքը՝ անդերենը, զրագուրկ են, իսկ դրա առանձին ներկայացուցիչներ, ինչպիսիք են ճամալերենը, ղոդոբերենը, կարատերենը, ախվախերենը, բոտլիխերենը և այլն, 2010 թվականի մարդահամարի մոտավոր տվյալներով ունեն ոչ ավելի, քան 500-ական կրող: Այս լեզուների պահպանումն, այսպիսով, առաջնահերթ կարևորություն է ձեռք բերում:

Ստորև կներկայացնենք ավար-անդյան ճյուղի երկու այլ լեզուների հնչյունաբանության համառոտ պատկերը և դրանց առանձնահատկությունների բնության հիման վրա ներմուծված նոր այբուբենները:

Ավար-անդյան ճյուղ. ախվախերեն

Ստորև բերված է ավար-անդյան խմբի անդյան ճյուղի մեկ այլ ներկայացուցչի՝ ախվախերենի հնչյունական աղյուսակը:

Դրանում ներառված չեն լեզվի շրթնայնացած բաղաձայները, քանի որ գրականության մեջ այս հարցի անբավարար լուսաբանման հետևանքով դրանց տարատեսակների և քանակության վերաբերյալ ճշգրիտ տեղեկությունները բացակայում են: Ախվախերենի բառացանկում հանդիպում են *ɟw*, *kʷ*, *kʷw*, *gw*, *qɟw*, *qɟʷ*, *ɛw*, *hw* և այլ տիպի գուգորդումներ, որոնց հնչաբանական կարգավիճակը, սակայն, դեռևս պարզված չէ: Ուստի, մինչև հարցի վերջնական հստակեցումը, համարտաբերման այս տեսակը կանոնական այբուբենում չենք ներառի:

Ախվախերեն

Ձև	Տեղ	Շրթնային		Կապճային				Ետկապճային		Քնային	Վեղարային		Լեզվակային		Սավկուկրոտային	Կոկորո.
				Կենտրոն.		Կողային					L	F	L	F		
		L	F	L	F	L	F	L	F		L	F				
Պայթական	շնչել	ɾ	ʀ								ɸ	x2				ɸ
	ծայնել	β	β̣								ɸ					
	արտ.	ɽ	ɽ̣								ɸ	x2				
Կիսաշնչական	շնչել		ɸ	x2	ɸ̣	x2	ɸ̣	x2					ɸ̣	x2		
	ծայնել						ɸ̣									
	արտ.		ɸ̣	x2	ɸ̣̣	x2	ɸ̣̣	x2					ɸ̣̣	x2		
Շիական	շնչել		ɸ̣	x2	ɸ̣̣	x2	ɸ̣̣̣	x2	ɸ̣̣̣̣				ɸ̣̣̣̣	x2	ɸ̣̣̣̣̣	ɸ̣̣̣̣̣̣
	ծայնել		ɸ̣̣̣̣̣				ɸ̣̣̣̣̣						ɸ̣̣̣̣̣		ɸ̣̣̣̣̣̣	
Ռնգային		ɸ̣̣̣̣̣̣	ɸ̣̣̣̣̣̣̣													
Նայ		ɸ̣̣̣̣̣̣̣̣			ɸ̣̣̣̣̣̣̣̣					ɸ̣̣̣̣̣̣̣̣						
Թրթռուն		ɸ̣̣̣̣̣̣̣̣̣̣														

Ախվախերենն առանձնահատուկ է նրանով, որ, ունենալով անդերենին և ավարերենին նման բաղաձայնական կազմ, պահ-

պանել է կապճային կողայինների ողջ բազմազանությունը (7 բաղաձայն)՝ ներառելով թույլ և ուժգին կիսաշփականներ ձայնափորման շնչեղ և արտամղման աստիճաններում՝ Չ (tʃ), Ձ (tʃ'), ՉՉ (tʃ:), ՁՁ (tʃ'): թույլ և ուժգին շփականներ՝ շնչեղ տարբերակով՝ Ճ (tʃ), ՃՃ (tʃ:); ինչպես նաև սովորական Շ (l) կողային նայր:

Այս իմաստով ախվախերենը, որը ներկայումս ունի ընդամենը մոտ 300 կրող, ամենահարուստ լեզուն է արևելակովկասյան ողջ լեզվաընտանիքում:

Այս լեզվի ձայնավորային կազմը ևս, ի տարբերություն ավարերենի և անդերենի, աչքի է ընկնում ներքին մեծ բազմազանությամբ՝ պարունակելով սովորական և ռեզայնացած հնչյուններ՝ կարճ և երկար տևողությամբ: Ռեզայինների ներկայացման համար կարելի է օգտվել ձայնավորների ածանցման՝ 87-րդ էջում բերված տարբերակներից, իսկ տևողության գրառման նպատակով՝ կիրառել տառի կրկնակումը: Ախվախերենի ձայնավորային լիակատար համակագի արյուսակը ներկայացվում է ստորև:

	Դիմային				Կենտրոնական				Ետին կտրացած			
	պարզ		ռեզային		պարզ		ռեզային		պարզ		ռեզային	
	V	V:	V	V:	V	V:	V	V:	V	V:	V	V:
Փակ	ի	x2	ի	x2					ո	x2	ո	x2
Միջին	ց	x2	ց	x2					օ	x2	օ	x2
Բաց					ւ	x2	ւ	x2				

Այսպիսով, ախվախերենի այբուբենն ունի հետևյալ տեսքը:

Ախվախերենի այբուբեն

Ա	Ձ	Ս	ՍՍ	Բ	Բ	Ը	Դ	Դ	Դ	Կ	ԿԿ
a	a:	ā	ā:	p	b	p'	t	d	t'	k	k:
Գ	Կ	ԿԿ	Ը	ԸԸ	Է	ԷԷ	Ի	Ի	Ի	Ե	ԵԵ
g	k'	k':	e	e:	ē	ē:	ʔ	i	i:	ī	ī:

Ձայնավորային կազմում, սակայն, տարբերություններն ավելի նկատելի են: Կարատերենում ձայնավորներն ըստ տևողության չեն հակադրվում: Շրթնայնացման հնչաբանական կարգավիճակի վերաբերյալ ճշգրիտ տվյալները բացակայում են:

Կարատերենի այբուբեն

Ա	Ա	Բ	Բ	Դ	Դ	Զ	Կ	Կ	Կ	Ը	Ը	Գ	Ի
a	ā	p	b	t	d	f	k	g	k'	ε	ē	?	i
Է	Մ	ՄՄ	Ն	ՆՆ	Չ	Չ	ՉՉ	Շ	ՇՇ	Շ	ՇՇ	Պ	Պ
ī	ʃs	ʃs:	ʃs'	ʃs':	tʃ:	tʃ'	tʃ':	tʃ	tʃ:	tʃ'	tʃ':	kx	kx'
Բ	Վ	Ն	ՆՆ	Ճ	Ճ	ՃՃ	Ո	Ո	Ս	ՍՍ	Ս	Յ	Ն
qχ:	qχ':	s	s:	z	t	t:	u	ū	ʃ	ʃ:	ʒ	ç	χ
Ն	Ե	Օ	Օ	Յ	Կ	Կ	Ն	Բ	Լ	Ը	Լ	Ը	Լ
χ:	κ	o	ō	h	ç	h	m	n	w	r	l	j	

Ցեղյան ճյուղ. ցեղերեն

Անցնենք այժմ ցեղերենի (դիդոյերենի) քննությանը, որն արևելակովկասյան լեզուների ցեղյան խմբի ամենաբազմաբանակ ներկայացուցիչն է և ունի մոտավորապես 15 հազար կրող: Ցեղյան բոլոր լեզուներն անգիր են, իսկ դրանցից մի քանիսը խոսվում են ընդամենը մեկ-երկու գյուղերում և ունեն յուրաքանչյուրը 500 կրողից ոչ ավելի (հունզերեն, հիևուխերեն):

Ի տարբերություն ավար-անդյան խմբի, ցեղյան լեզուները հնչունական առումով նախևառաջ բնորոշվում են ձայնավորների եզակի հարստությամբ, ինչն իր արտահայտությունն է գտնում դրանց՝ ըստ տևողության, ռնգայնացման և ըմպանայնացման հակադրության փաստում:

Այս առումով բացառիկ է հունզերենը, որի բոլոր 8 ձայնավորները (a, a, ε, i, i, ə, o, u) ունեն երկար և ռնգակիցներ:

Ցեղյան լեզվախմբի համար այբուբենների ներմուծման հնա-

րավորությունների բնությունը կսկսենք ցեզերենի բաղաձայնական համակարգի վերլուծությամբ:

Ցեզերեն

Ձև	Տեղ	Երբևային	Կապճային				Ետկապճային		Բնային	Վեղառային		Լեզվակային		Մակկորդային		Կոկորդ
			Կենտր.		Կողային		C	C ^w		C	C ^w	C	C ^w	C	C ^w	
			C	C ^w	C	C ^w										
Պայթական	շնչեղ	բ	բ	բ					վ	վ						ժ
	ծայնեղ	բ	բ	բ					վ	վ						
	արտ.	բ	բ	բ					վ	վ	կ	կ				
Կիսաշնչ.	շնչեղ		Գ	Գ	Չ	Չ	ի	ձ			Մ	Մ				
	արտ.		Գ	Գ	Չ	Չ	ի	ձ								
Շփական	շնչեղ		Չ	Ն	Չ	ժ	ժ				Ե	Ե	Յ	Յ	Ի	
	ծայնեղ		Չ	Ն			ժ	ժ			Ե	Ե	Ի			
Ռնգային		յ	հ													
Նայ		ի			Շ			ի								
Թրթուուն		լ														

Վերոբերյալ բոլոր բաղաձայնները, բացառությամբ երկշրթնայինների և ու, ի, յ, չ հնչյունների, ունեն շրթնայնացած տարբերակներ, որոնք առաջարկվող այբուբենում կարելի է պատկերել կա՛մ վերևի աղյուսակում բերված բոլորակ տառածևերով, կա՛մ, համակարգի պարզեցման նպատակով, ձայնեղ շրթնային նայի Ի տառանշանի կցմամբ:

Ցեզերենի լեզվակային բաղաձայնները կարող են «ըմպանայնացվել» (մակկոկորդային երանգավորմամբ), ինչն առաջարկվող այբուբենի ուղղագրությունը չբարդացնելու համար կարելի է արտահայտել մակկոկորդային ձայնեղ շփականի Կ նշանի կցմամբ:

Ձայնավորային համակարգը ներկայանում է 6 հնչյուններով՝ a, æ, e, i, o, u, որոնք ունեն երկար (a:, æ:, e:) և ըմպանայնացած (a^ʷ, æ^ʷ, e^ʷ, i^ʷ, o^ʷ, u^ʷ) հնչակիցներ: Վերջիններս գրում կարելի է արտա-

հայտել կամ ձայնավորների ածանցման համակարգի միջոցներով, կամ էլ համապատասխան տառին ձայնել մակկոկորդային շփականի T նշանի կցագրմամբ: Մենք, սակայն, գերադասում ենք առանձին նշանների ներմուծման տարբերակը, որով էլ կներկայացնենք ցեզերենի այբուբենը, որը ստանում է հետևյալ տեսքը:

Ցեզերենի այբուբեն

Ա	Ա	Ա	ԱԱ	ԱԱ	Բ	Բ	Ը	Դ	Դ	Դ	Գ
a	a:	a ^ʕ	æ	æ:	p	b	p ^ʔ	t	d	t ^ʕ	t ^w
Գ	Գ	Կ	Կ	Կ	Գ	Գ	Գ	Ը	ԸԸ	Է	Կ
d ^w	t ^w	k	g	k ^ʔ	k ^w	g ^w	k ^w	ε	ε:	e ^ʕ	q ^ʔ
Գ	Գ	Ի	Ի	Ի	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ
q ^w	ʔ	i	i ^ʕ	ts	ts ^ʔ	ts ^w	ts ^w	tʃ	tʃ ^ʔ	tʃ ^w	tʃ ^w
Դ	Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
tʃ	tʃ ^ʔ	tʃ ^w	tʃ ^w	qχ	qχ ^w	s	z	s ^w	z ^w	t	t ^w
Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո
u	u ^ʕ	ʃ	ʒ	ʃ ^w	ʒ ^w	o	o ^ʕ	χ	κ	χ ^w	κ ^w
Յ	Թ	Յ	Ի	Կ	Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը	Ը
h	ʔ	h ^w	h	m	n	w	r	l	j		

Խմբի մնացյալ լեզուները հնչյունայնորեն մոտ են ցեզերենին՝ շոշափելի տարբերվելով միայն երկրորդային արտաբերումներում և ձայնավորների երանգավորումներում:

Քանի որ բեժտերենի, հունգերենի և հինուխերենի այբուբենները հեշտությամբ արտածվում են ընդհանուր համակարգից, դրանք կներկայացնենք այբբենական հերթակարգով՝ առանց հնչյունաբանական ակնարկի, և կսահմանափակվենք միայն խւարշերենի՝ տվյալ խմբում ամենահարուստ բաղաձայնակազմն ունեցող լեզվի յուրահատկությունների նկարագրությամբ:

Յեզյան ճյուղ. խւարշերեն

Խւարշերենի արտասանական կարևոր հատկություններից է մեծաքանակ ըմպանայնացած հնչյունների առկայությունը շրթնային, լեզվակային և կոկորդային շարքերում, ինչպես նաև խմբի մյուս լեզուներում բացակա ուժգին բաղաձայների որոշ քանակ, որոնց հնչաբանական կարգավիճակը ճշտված է:

Տվյալներ կան ձայնավորներում տոնային համակարգի առկայության վերաբերյալ, ինչը, սակայն, ևս ճշգրտման կարիք ունի:

Նախորդ էջին պատկերված է խւարշերենի և դրա բարբառների համահավաք բաղաձայնական աղյուսակը, ուր ներառված են խւարշերենի *ինխոբւարյան* բարբառի ըմպանայնացած և շրթնըմպանայնացած հնչյունները, իսկ դրանց գրության համար կիրառվում են նշանակետման ընդունված սկզբունքներից բխող կանոնավոր տառաձևեր: Նշենք, որ ինխոբւարյան բարբառը երբեմն համարվում է առանձին լեզու և միայն պայմանականորեն է միավորվում բուն խւարշերենի հետ³⁵:

Բաց մոխրագույն վանդակներում բերված են բացառապես օտարալեզու փոխառություններում հանդիպող հնչյունները:

Խւարշերենի ձայնավորները վեցն են, որոնք լինում են կարճ (a, ε, i, ı, o, u) և երկար (a:, ε:, i:, ı:, o:, u:)՝ համապատասխան ղնգայնացած որոշ հնչակիցներով (ā, ē, ī, ō, ū, ā:, ē:, ō:, ū:):

Ինչպես ցեզերենում, առաջարկվող այբուբենում ևս գրի ուղղագրությունը չբարդացնելու համար ընպանայնացած բաղաձայները կարելի է գրառել մակկոկորդային ձայնեղ շփականի T տառանշանի կցմամբ, որն իր հերթին հանդիպում է բացառապես օտար փոխառություններում: Մենք, սակայն, ինչպես միշտ գերադասում ենք *առանձին* նշանների՝ որպես համակրվկասյան այբուբենի ներուժի ցուցի ներմուծման տարբերակը:

Խւարշերենի նորամույժ այբուբենի հերթակարգն, այսպիսով, ձեռք է բերում ստորև բերվող տեսքը, որում ուղղանկյուն փակագծերում նշված են լեզվի օտարամուտ հնչյունները:

³⁵ Тестелец Я., *Хваршинский язык / Языки мира. Кавказские языки*. М., 1999.

խւարշերենի այբուբեն

Ա	Բ	Ս	ՍՍ	Դ	Բ	Ը	Բ	Է	Է	Դ	Դ
a	a:	ā	ā:	p	b	p'	p ^ʕ	b ^ʕ	p ^{ʕʷ}	t	d
Ղ	Գ	Գ	Զ	Կ	Կ	Կ	Գ	Գ	Գ	Չ	Չ
t'	t ^w	d ^w	t ^{wʷ}	k	g	k'	k ^w	g ^w	k ^{wʷ}	k ^ʕ	g ^ʕ
Վ	Ը	ԸԸ	Է	ԷԷ	Կ	Կ	Գ	Գ	Չ	Չ	Յ
k ^{ʕʷ}	ε	ε:	ē	ē:	q	q'	q ^w	q ^{wʷ}	q ^ʕ	q ^{ʕʷ}	q ^{ʕʷʷ}
Պ	Ժ	Ժ	Ի	ԻԻ	Է	Պ	Պ	Պ	Պ	Չ	Չ
q ^{ʕʷʷ}	ʔ	ʔ ^ʕ	i	i:	ī	tʂ	tʂ'	tʂ ^w	tʂ ^{wʷ}	tʂ	tʂ'
Ջ	Դ	Զ	Ճ	Ճ	Ի	Լ	Ն	Ճ	Ճ	Չ	Չ
tʂ ^{wʷ}	tʂ	tʂ'	tʂ ^w	tʂ ^{wʷ}	i	i:	s	z	s ^w	z ^w	t
Ո	ՈՈ	Ո	ՈՈ	Յ	Յ	Ճ	Ճ	[Ճ]	Օ	ՕՕ	Օ
u	u:	ū	ū:	ʃ	ʒ	ʃ ^w	ʒ ^w	[x]	o	o:	ō
ՕՕ	Լ	Ե	Ե	Ե	Ե	Ճ	Ճ	Յ	Յ	[Դ]	Ի
ō:	χ	κ	χ ^w	κ ^w	χ ^ʕ	κ ^ʕ	χ ^{ʕʷ}	κ ^{ʕʷ}	h	[ʕ]	h
Բ	Կ	Կ	Ը	Է	Լ	Ճ	Ճ	Լ			
h ^ʕ	m	m ^ʕ	n	w	r	l	l'	j			

Ցեզյան ճյուղ. հիևուխերեն, հուևզերեն, բեժտերեն

Ցեզյան լեզվախմբի ներկայացման ավարտին, առանց հնչու-
նաբանական ակնարկի և տառաձևերի ընտրության հիմնավոր-
ման, ուրվագծենք մնացյալ երեք անգիր և սակավաթիվ կրողներ
ունեցող լեզուների՝ հիևուխերենի, հուևզերենի և բեժտերենի այ-
բուբենների տեսքը: Դրանցում անհրաժեշտության դեպքում կա-
րելի է կիրառել խւարշերենի և ցեզերենի բարդ բաղաձայների
գրառման համար մշակված բոլոր կանոնները:

Այս լեզուներից հիևուխերենը խոսվում է բացառապես Հիևուխ

գյուղի տարածքում և ունի ոչ ավելի, քան 500 կրող: Մնացյալ երկուսը ևս սակավաքանակ են՝ ունեն 1000-6000 խոսող:

Հիևուխերենի այբուբեն

Ա	Վ	Ե	Ը	Բ	Ը	Դ	Դ	Ղ	Կ	Կ	Կ
a	a:	a ^ʕ	p	b	p'	t	d	t'	k	g	k'
Գ	Գ	Գ	Ը	ԸԸ	Է	Կ	Կ	Գ	Գ	Է	Ի
k ^w	g ^w	k ^{wʕ}	ε	ε:	ε ^ʕ	q	q'	q ^w	q ^{wʕ}	?	i
ԻԻ	Բ	ԲԲ	Մ	Մ	Չ	Չ	Շ	Շ	Շ	Շ	
i:	y	y:	ts	ts'	th	th'	tʃ	tʃ'	s	z	t
Ո	ՈՈ	Յ	Յ	[Ճ]	Օ	ՕՕ	Լ	Ե	Ե	Ե	Յ
u	u:	ʃ	ʒ	[x]	o	o:	χ	κ	χ ^w	κ ^w	h
Դ	Ի	Կ	Ն	Բ	Լ	Շ	Լ				
ʕ	h	m	n	w	r	l	j				

Հունգերենի այբուբեն

Ա	Վ	Ե	Մ	ՄՄ	Ե	Ը	Բ	Ը	Դ	Դ	Ղ
a	a:	ā	a	a:	ā	p	b	p'	t	d	t'
Կ	Կ	Կ	Ը	ԸԸ	Է	Կ	Կ	Է	Ի	ԻԻ	Ե
k	g	k'	ε	ε:	ē	q	q'	?	i	i:	ī
Խ	ԽԽ	Շ	Մ	Մ	Չ	Չ	Շ	Շ	Ի	ԻԻ	Է
ə	ə:	ē	ts	ts'	th	th'	tʃ	tʃ'	i	i:	ī
Շ	Շ	Շ	Ո	ՈՈ	Ռ	Յ	Յ	[Ճ]	Օ	ՕՕ	Չ
s	z	t	u	u:	ū	ʃ	ʒ	[x]	o	o:	ō
Լ	Ե	[Յ]	[Մ]	Ի	Կ	Ն	Բ	Լ	Շ	Լ	
χ	κ	[h]	[ʕ]	h	m	n	w	r	l	j	

Բեժտերենի այբուբեն

Ս	Մ	Ս	ՍՍ	Ա	Ա	ԱԱ	Բ	Բ	Ը	Դ	Դ
a	a:	ã	ã:	æ	æ̃	æ̃:	p	b	p'	t	d
Դ	Կ	Կ	Կ	Ը	ԸԸ	Է	Է	Ը	Կ	Կ	Է
t'	k	g	k'	ε	ε:	ē	œ	œ̃	q	q'	ʔ
Ի	ԻԻ	Է	ԷԷ	Ե	Է	Մ	Մ	Չ	Չ	Տ	Շ
i	i:	ī	ī:	y	ȳ	ts	ts'	tʃ	tʃ'	tʃ	tʃ'
Ն	Ճ	Ճ	Ո	ՈՈ	Ռ	Յ	Յ	[Ճ]	Օ	ՕՕ	Չ
s	z	t	u	u:	ū	ʃ	ʒ	[x]	o	o:	õ
Լ	Ե	[Յ]	[Տ]	Ի	Կ	Ռ	Ի	Լ	Շ	Լ	
χ	κ	[ɣ]	[ʃ]	h	m	n	w	r	l	j	

Լեզգյան ճյուղ. լեզգերեն

Անցնենք այժմ արևելակովկասյան հաջորդ՝ լեզգյան ճյուղին:

Լեզգյան լեզուներն առանձնանում են բավականին բարդ բաղաձայնությամբ, որի բազմաթիվ միավորներ հաճախ հակադրվում են ըստ շրթնայնացման, ըմպանայնացման և ուժգնության հատկանիշների: Առանձին լեզուներում արմատայինների շարքում հանդիպում են մակկոկորդային ʔ պայթականը և աշխարհի լեզուներում բացառիկ հազվագյուտ նախավեղարային կողային կիսաշփականներ և շփականներ: Այս ճյուղի լեզուների ձայնավորային կազմը ևս բարդ է:

Հաջորդ էջին պատկերված է լեզգերենի բաղաձայնակարգը, որի մուգ վանդակներում ներկայացված են բարբառային այն հնչյունները, որոնք բացակայում են գրական լեզգերենում:

Նշենք, որ լեզգերենն ունի բազմաթիվ բարբառներ, որոնք կյուրեռի բարբառի գյուրեռի խոսվածքի վրա հիմնված գրական տարբերակից երբեմն լուրջ տարբերություններ են արձանագրում, հատկապես բաղաձայններում:

Լեզգերենում բաղաձայների ուժգնացումը, ինչպես նշվեց արևելակովկասյան լեզուների ներկայացման բաժնում, ուղեկցվում է համաժամանակյա շնչազրկմամբ: Այս հանգամանքը որոշ հեղինակներ արտացոլել են որպես բաղաձայների քառաստիճան հակադրություն՝ ձայնեղ-շնչեղ-շնչազուրկ-արտամղման, ինչն այդքան էլ ճիշտ չէ: Իրականում բոլոր շնչեղ պայթականները և կիսաշփականներն ունեն ուժգին հնչակիցներ, որոնք ներկայացնում ենք տառանշանի կրկնակմամբ (ԴԴ, ԳԳ և այլն):

Ձայնավորների համակարգը պարզ է՝ հանդիպում են միայն a, æ, ε, i, y, u հնչյունները: Գրական լեզգերենում բացակայում է o հնչյունը, որը հանդիպում է միայն փոխառություններում: Գրականության մեջ æ և y ձայնավորները երբեմն ներկայացվում են իբրև թեթև ըմպանայնացած a^ʕ և u^ʕ:

Լեզգերենի այբուբեն

Ա	Ա	Բ	Բ	Ը	Դ	Դ	Դ	Գ	Գ	Զ	Կ	Կ
a	æ~a ^ʕ	p	b	p'	t	d	t'	t' ^w	d' ^w	t' ^w	k	g
Կ	Կ	Գ	Գ	Ը	Կ	Կ	Կ	Գ	Գ	Է	Ի	Բ
k'	k ^w	g ^w	k ^w	ε	q	ɠ	q'	q ^w	q ^w	ʔ	i	y~u ^ʕ
Տ	Բ	Ղ	Փ	Փ	Դ	Դ	Ը	Ը	Փ	Ն	Ճ	
ts	dz	ts'	ts ^w	ts ^w	tʃ	dʒ	tʃ'	tʃ ^w	tʃ ^w	f	s	z
Ճ	Ճ	Ո	Յ	Յ	Ժ	Ժ	Ճ	Ճ	Ճ	[O]	Ն	Ե
s ^w	z ^w	u	ʃ	ʒ	ʃ ^w	ʒ ^w	x	ɣ	x ^w	[o]	χ	ʁ
Ե	Ե	Յ	Դ	Ի	Կ	Ի	Լ	Շ	Լ			
χ ^w	ʁ ^w	h	ɸ	h	m	n	w	r	l	j		

Լեզգյան ճյուղի թաբասարաներեն

Թաբասարաներենի՝ լեզգյան ճյուղի տարածվածությամբ երկրորդ լեզվի բաղաձայնակազմը վերջնականորեն ճշգրտված չէ, սակայն հիմնական գծերում գրեթե չի տարբերվում լեզգերենից:

Լեզվի հնչական հետաքրքիր առանձնահատկություններից է շրթնայնացած ետկապճայինների (յ^{w} , չ^{w} , տյ^{w} , տչ^{w} ; տյ^{w} , տչ^{w}) *ատամնա-շրթնային* (dentolabial) արտասանությունը, ինչը ցույց է տալիս, որ շրթնայնացման ընթացքում *ստորին* ատամնաշարը հպվում է *վերին* շրթունքին:

Ի տարբերություն բաղաձայնական զարգացած համակարգի, թաբասարաներենի ձայնավորակազմը համեմատաբար պարզ է: Լեզվում առկա են պարզ a , æ , ε , ə , i , u ձայնավորներ, որոնցից æ և ə հնչյունները գրականության մեջ նկարագրվում են իբրև a և u ձայնավորների ըմպանայնացած հնչակիցներ: Ինչպես լեզգերենում, թաբասարաներենում ևս բացակայում է o հնչյունը:

Աղբբեջաներենից կատարված փոխառություններում պատահում է p (y) հնչյունը, որը, ինչպես և որոշ բարբառներում հանդիպող երկար ձայնավորները, չունի առանձին հնչաբանական իմաստ, ուստիև չի ներառվում առաջարկվող այբուբենի կազմ:

Բոլոր շնչեղ պայթականները, կիսաշփականներն ու շփականներն իրենց համարտաբերումների հետ միասին ունեն ուժգին հնչակիցներ, որոնք գրի են առնվում տառանշանի կրկնակման օգնությամբ (րր , գգ և այլն):

Թաբասարաներենի այբուբենն, այսպիսով, ձեռք է բերում հետևյալ հերթակարգը:

Թաբասարաներենի այբուբեն

Ա	Ա	Բ	Բ	Ը	Դ	Դ	Զ	Կ	Կ	Կ	Գ	Գ	Գ
a	æ~a ^f	p	b	p ^ʰ	t	d	t ^ʰ	k	g	k ^ʰ	k ^w	g ^w	k ^w
Ը	Կ	Կ	Կ	Գ	Գ	Գ	Չ	Ի	Պ	Ք	Չ	Տ	Ճ
ε	q	g	q ^ʰ	g ^w	q ^w	q ^w	?	i	ts	dz	ts ^ʰ	tʃ	dʒ
Ը	Ճ	Ճ	Ճ	Փ	Փ	Ն	Ց	Ո	Ս	Ս	Ժ	Ժ	Ճ
տյ ^ʰ	տչ ^ʰ	dʒ ^w	tʃ ^w	ə~u ^f	f	s	z	u	ʃ	ʒ	ʃ ^w	ʒ ^w	x
Ե	Լ	Ե	Ե	Յ	Տ	Ի	Կ	Բ	Ի	Լ	Շ	Լ	Ե
ʏ	χ	κ	χ ^w	κ ^w	h	ɸ	h	m	n	w~v	r	l	j

Լեզգյան ճյուղ. ռութուլերեն և ծախուրերեն

Լեզգյան խմբի մյուս լեզուներն ունեն լեզգերենին և թաբասարաներենին մոտ հնչակազմ, ուստի կարող են ներկայացվել այս երկուսի այբուբեններով: Որոշ լեզուներ, ինչպես աղուլերենը, ծախուրերենը և բըռըծերենը, տարբերվում են գերազանցապես ձայնավորներում, մինչդեռ ուրիշները, ինչպես, օրինակ, լեզվակալին շարքում ըմպանայնացած բաղաձայններով առատ ռութուլերենը, երբեմն աչքի են ընկնում ավելի հարուստ հնչակազմով:

Որպես օրինակ՝ ներկայացնենք ռութուլերենի այբուբենը *մըխաղյան* և *սընազյան* բարբառների հնչյունական հիմքով:

Ռութուլերենի այբուբեն

Ա	Ա	Ա	Ր	Բ	Ը	Դ	Դ	Դ	Զ	Կ	Կ	Կ	Գ	Գ
a	a ^ʕ	æ	p	b	p ^ʕ	t	d	t ^ʕ	t ^{ʕw}	k	g	k ^ʕ	k ^{ʕw}	g ^{ʕw}
Գ	Շ	Է	Կ	Կ	Կ	Գ	Գ	Գ	Կ	Կ	Կ	Գ	Գ	Գ
k ^{ʕw}	ε	ε ^ʕ	q	σ	q ^ʕ	q ^{ʕw}	σ ^{ʕw}	q ^ʕ	σ ^ʕ	q ^{ʕʕ}	q ^{ʕw}	σ ^{ʕw}	q ^{ʕʕw}	q ^{ʕʕw}
Բ	Ժ	Ի	Բ	Մ	Մ	Մ	Փ	Փ	Դ	Ո	Շ	Շ	Շ	Շ
ʔ	ʔ	i	y	ts	dʒ	ts ^ʕ	ts ^{ʕw}	ts ^{ʕʕ}	tʃ	dʒ	tʃ ^ʕ	tʃ ^{ʕw}	dʒ ^{ʕw}	tʃ ^{ʕʕ}
Ի	Լ	[Φ]	Շ	Շ	Շ	Ո	Ո	Ս	Տ	Ս	Ս	Ս	[O]	Լ
i	i ^ʕ	[f]	s	s ^{ʕw}	z	u	u ^ʕ	ʃ	ʃ ^{ʕw}	x	ɣ	x ^{ʕw}	[o]	χ
Ե	Ե	Ե	Շ	Շ	Շ	Յ	Ի	Կ	Ի	Լ	Շ	Լ	Շ	Լ
ɛ	χ ^{ʕw}	ɛ ^{ʕw}	χ ^ʕ	ɛ ^ʕ	χ ^{ʕw}	ɛ ^{ʕw}	h	h	m	n	w	r	l	j

Ինչպես նշվել է առաջին մասի §3-ում, տվյալ թեմատիկային առնչվող գրականության գերակշիռ մասի հնչյունական վերլուծությունների մեթոդական սնանկության պատճառով սակավ ուսումնասիրված լեզուների համար ստեղծված այբուբենները կարող են պարունակել որոշ անճշտություններ կամ էլ ոչ լրիվ արտացոլել լեզվի հնչակազմը:

Այս առումով ռութուլերենի վերոբերյալ այբուբենը ևս բացառություն չէ, քանի որ տվյալ լեզվի հնչյունաբանության մեկնաբանումն աղբյուրներում զգալիորեն տարբերվում է: Չխորանալով աղբյուրների վերլուծության մեջ՝ նշենք, որ լեզվի մասին ակնարկներում երբեմն հիշատակվում են քմայնացած t^j , s^j , p^j , g^j , k^j , k^{j*} , x^j բաղաձայներ, որոնք եությամբ հավանաբար դիրքային են, ուստի ռութուլերենի մնացյալ բարբառների մի շարք (z^w , 3 , y^w , t , d , t_s^w , t_j , t_j^j , k , g , g^j , G , G^j , o , ae) հնչյունների հետ մեկտեղ ներկա այբուբենում չեն ներառվում:

Հաճախ այս կամ այն լեզվի համարտաբերվող բաղաձայները կամ առհասարակ բացակայում են հնչյունային աղյուսակներում, կամ լրիվությամբ չեն ներկայացվում: Այսպես, որոշ լեզուների դեպքում երբեմն հնարավոր չի եղել պարզել շրթնայնացած, ըմպանայնացած կամ ուժգին բաղաձայների որշ կազմը, ինչի պատճառով արտասանական տվյալ տարբերակները չեն ներառվել կանոնական այբուբեններում:

Ընդհանուր առմամբ, քմայնացման խնդիրն արևելակովկասյան լեզուների որոշ նկարագրություններում ամենավիճելին է, ուստի մինչ տվյալ համարտաբերման հնչաբանական կարգավիճակի վերջնական հստակեցումը դրա գրաֆիկական ներկայացման համար կգերադասենք Ռ նշանի կցագրումը: Այն դեպքերում, սակայն, երբ աղբյուրի հավաստիությունը կասկածներ չի հարուցում, քմայնացված բաղաձայները կարող են ներմուծվել կանոնական այբուբեն: Հենց այսպիսին է ծախուրերենի դեպքը, որի՝ Շուլցեի³⁶ կողմից տրված հնչյունաբանական նկարագրությունը կասկածներ չի հարուցում: Ըստ այդ նկարագրության՝ բաղաձայնական առումով ծախուրերենը բավականին մոտ է լեզգերենին, սակայն պարունակում է ավելի մեծ թվով ըմպանայնացած լեզվակայիններ: Ծախուրերենի ձայնավորներն իրենց հերթին ևս հակադրվում են ըստ ըմպանայնացման և շրթնայնացման:

Առանց հնչյունաբանության հետագա մանրամասնեցման՝ ստորև ներկայացնում ենք ծախուրերենի այբուբենը:

³⁶ Wolfgang Schulze, *Tsakhur*, Lincom Europa, München, 1997.

Ճախուրդերենի այբուբեն

Ա	Ա	Ա	Ր	ՐՐ	Բ	Ը	Դ	ԴԴ	Դ	Ղ	Գ	ԴԴ
a	a ^ʕ	æ	p	p:	b	pʻ	t	t:	d	tʻ	t ^w	d ^j
Կ	Կ	Կ	ԿԿ	Կ	Կ	Գ	Ը	Ը	Կ	ԿԿ	Կ	
c	j	k	k:	g	kʻ	g ^w	ε	ε ^ʕ	æ	q	q:	ɔ
Կ	Գ	Գ	Կ	Կ	Կ	+	Ի	Ը	Բ	Դ	ԴԴ	Բ
qʻ	q ^w	q ^{wʕ}	q ^ʕ	ɔ ^ʕ	q ^{ʕʕ}	?	i	i ^ʕ	y	ts	ts:	dz
Մ	Դ	Դ	Ը	Ը	Ը	Ը	Փ	Ն	ՆՆ	Ծ	Ո	Ո
tsʻ	tʃ	dʒ	tʃʻ	tʃ ^w	tʃ ^{wʕ}	i	f	s	s:	z	u	u ^ʕ
Ե	ԵԵ	Յ	Ճ	ՃՃ	Ճ	Ե	Օ	Օ	Լ	ԼԼ	Ե	Ե
ʃ	ʃ:	ç	x	x:	ɣ	x ^w	o	o ^ʕ	χ	χ:	ʕ	χ ^w
Ծ	Ե	Ի	Կ	Ը	Ի	Լ	Շ	Շ	Լ			
χ ^ʕ	ʕ ^ʕ	h	m	n	w	r	l	lʲ	j, + ^j			

Լեզգյան ճյուղ. աղույերեն

Գրականության մեջ արևելակովկասյան մի շարք լեզուների հնչյունակազմերի անհստակությունների մասին ասված յուրաքանչյուր միտք կարելի է կրկնել նաև աղույերենի դեպքում, քանի որ, բացառությամբ մի քանի նկարագրությունների³⁷, մնացածը բավականին անհետևողական են և անվստահելի:

Ասվածը հիմնականում վերաբերում է այսպես կոչված «հագագային» բաղաձայներին: Այս եզրի ներքո հաճախ միանգամայն սխալականորեն միավորվում են բազմաթիվ լեզուների ըմպանալին, մակկոկորդային և կոկորդային հնչյունները, իսկ երբեմն, թյուրիմացաբար, նաև ըմպանայնացած լեզվակայինները, ինչի

³⁷ А. К. Кибрик, С. В. Кодзасов. *Сопоставительное изучение дагестанских языков: Глагол*. М., 1988; А. К. Кибрик, С. В. Кодзасов. *Сопоставительное изучение дагестанских языков: Имя, фонетика*. М., 1990.

հետևանքով այդօրինակ աղբյուրներում հաճախ հնարավոր չի լինում ճշգրիտ զանազանել ներկայացվող բաղաձայները:

Արմատայինների (ըմպանային և մակկոկորդային) և բուն կոկորդայինների կազմով բացառիկ են աղուլերենի որոշ բարբառներ, քանի որ դրանցում իմաստազատ են ինչպես ըմպանային, այնպես էլ մակկոկորդային պայթականներն ու շփականները, ինչը «հագագայինների» ընդհանուր թիվն այս լեզվում հասցնում է կովկասյան բոլոր լեզուների շարքում բացառիկ ցուցանիշի՝ 7-ի (հ, ջ, հ, ֆ, շ, ? , հ): Տառադարձումների մեծ մասում, սակայն, ըմպանային և մակկոկորդային շփականները չեն տարբերակվում, և ողջ այս բազմազանությունն ընդհանրապես չի արտացոլվում:

Մենք, այնուամենայնիվ, կփորձենք ներառել այս հնչյուններն առաջարկվող նոր այբուբենում այս լեզվի համար հատուկ տարծևվող հավելանշանների օգնությամբ: Նկատենք, որ արևելակովկասյան ընդհանրացված նշանակարգում հաշվի էր առնվել արմատային հնչյունների միայն մակկոկորդային տեսակը, քանի որ ըմպանային արտասանությամբ բաղաձայներ տվյալ լեզվաընտանիքում, աղուլերենից բացի, չեն հանդիպում:

Մնացյալում աղուլերենն ունի թաբասարաներենին և լեզգերենին բավականին մոտ հնչունակազմ: Ձայնավորների համակարգը բավականին պարզ է. առկա է 4 պարզ (a, ε, i, u) և 2 համարտաբերվող (æ~a^ε, y~u^ε) ձայնավոր:

Շրթնայնացման հնչաբանական կարգավիճակի՝ իմաստազատության հարցը մինչև վերջ չի հստակեցված, ուստի դա մենք չենք քննարկի: Բառարաններում հանդիպում են ինչպես կապձային (ts^w), ետկապձային (tʃ^w, dʒ^w, tʃ^w, ʃ^w, ʒ^w), վեղարային (k^w, g^w, k^w) և լեզվակային (q^w, q^w, q^{εw}, q^{εw}, ɣ^w, ɣ^{εw}), այնպես էլ մակկոկորդային (ʃ^w) շրթնայնացած հնչյուններ. այբուբենում, սակայն, ներառված են միայն նրանք, որոնց հնչաբանական կարգավիճակը կասկածներ չի հարուցում: Մնացյալը կարելի է արտահայտել կամ համապատասխան բոլորակ տառերի միջոցով, կամ երկշրթնային նայի Ի նշանի կցագրմամբ:

Բացի հ, հ, h, շ, ? հնչյուններից, աղուլերենի մնացյալ բոլոր

շնչեղ բաղաձայներն ունեն ուժգին հնչակիցներ. դրանք գրում պատկերվում են պարզ նշանի կրկնակմամբ: Որոշ բարբառներում հանդիպում են նաև քմայնացած համարտաբերումներ, որոնք անհրաժեշտության դեպքում կարելի է գրի առնել քմային նայի լ նշանի կցմամբ:

Ստորև ներկայացնում ենք աղուլերենի այբուբենը:

Աղուլերենի այբուբեն

Ա	Բ	Բ	Բ	Ը	Դ	Դ	Դ	Կ	Կ	Կ
a	æ~a ^ʕ	p	b	p'	t	d	t'	k	g	k'
Ը	Կ	Կ	Կ	Կ	Զ	Զ	Ի	Բ	Մ	Ք
ε	q	q'	q ^ʕ	q ^{ʕ'}	ʔ	ʔ	i	y~u ^ʕ	ts	dz
Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ	Ղ
ts'	tʃ	dʒ	tʃ'	tʃ ^w	dʒ ^w	tʃ ^{w'}	f	s	z	u
Ջ	Ջ	ժ	ժ	Ջ	Օ	Լ	Ե	Ե	Ե	Ե
ʃ	ʒ	ʃ ^w	ʒ ^w	x	o	χ	ɛ	χ ^ʕ	ɛ ^ʕ	h
Ծ	Յ	Թ	Ի	Կ	Ի	Լ	Շ	Լ		
ʕ	h	ʕ	h	m	n	w,+ ^w	r	l	j,+ ^j	

Լեզգյան ճյուղ. քրոջծերեն և բուդուխերեն

Լեզգյան լեզվաճյուղում պարզագույն հնչյունային կազմ ունի բուդուխերենը, որով խոսում են Ադրբեջանի Բուդուխ, Դելի-Քայա, Երգյուլ և մի քանի այլ գյուղերում: Կրողների ընդհանուր թվաքանակը վերջին տարիների տվյալների համաձայն կտրուկ նվազել է՝ հասնելով 200 մարդու:

Այս լեզվի բաղաձայներում բացակայում են համարտաբերումների բոլոր տեսակները, իսկ հնչյունական կազմը հասցված է նվազագույնի: Ձայնավորային համակարգը քիչ ավելի հարուստ է՝ կա 9 ձայնավոր (a, æ, ε, æ, i, i, ə, y, u), որոնք զուրկ են երանգավորումներից: Ստորև ներկայացված է բուդուխերենի այբուբենը:

Բուդուխերենի այբուբեն

Ա	Ա	Բ	Բ	Ը	Դ	Դ	Զ	Կ	Կ	Կ	Ը
a	æ	p	b	p'	t	d	t'	k	g	k'	e
Ե	Կ	Կ	Կ	Ք	Ժ	Ի	Բ	Մ	Ղ	Ղ	Պ
æ	q	g	q'	ʔ	ʔ	i	y	ts	ts'	tʃ	dʒ
Շ	Ի	Խ	Փ	Ն	Ց	Ո	Յ	Յ	Ջ	Յ	Օ
tʃ	i	ə	f	s	z	u	ʃ	ʒ	x	ɣ	o
Ն	Ե	Յ	Տ	Ի	Կ	Ը	Լ	Շ	Լ		
χ	κ	η	ξ	h	m	n	w~v	r	l	j	

Քրոնոթերենի հնչյունաբանությունը շատ ավելի մոտ է լեզգերենին, թաբասարաներենին և աղուլերենին ինչպես բաղաձայների, այնպես էլ ձայնավորների իմաստով: Լեզուն բաժանվում է մի բանի բարբառների՝ բուն քրոնոթերենի, երգյուլերենի, հափուլթերենի, ջեթերենի և էլիթերենի, որոնք, զգալիորեն տարբերվելով ինչպես հնչյունայնորեն, այնպես էլ քերականությամբ, երբեմն առկամ համարվում են առանձին լեզուներ:

Քրոնոթերենի այբուբենն ունի հետևյալ տեսքը:

Քրոնոթերենի այբուբեն

Ա	Ա	Բ	Բ	Ը	Դ	Դ	Զ	Կ	Կ	Կ	Գ	Գ	Գ
a	æ	p	p:	b	p'	t	t:	d	t'	k	k:	g	k'
Ը	Ե	Կ	Կ	Կ	Գ	Գ	Գ	Ժ	Ի	Բ	Մ	Ղ	Ղ
e	æ	q	g	q'	q ^w	g ^w	q ^w	ʔ	i	y	ts	dʒ	ts'
Ղ	Պ	Շ	Ղ	Ի	Փ	Ն	Ց	Ո	Յ	Յ	Ջ	Ջ	Յ
tʃ	dʒ	tʃ	tʃ ^w	i	f	s	z	u	ʃ	ʒ	x	x ^w	ɣ
Օ	Ն	Ե	Ե	Յ	Տ	Ի	Կ	Ը	Լ	Շ	Լ		
o	χ	κ	χ ^w	η	ξ	h	m	n	w~v	r	l	j	

Լեզգյան ճյուղ. արշերեն

Ոչ միայն լեզգյան, այլև արևելակովկասյան բոլոր լեզուների ցանկում հնչյունային հարստությամբ բացառիկ է շարադրանքում բազմիցս հիշատակված արշերենը, որի այբուբենի ներկայացմամբ էլ կավարտենք լեզգյան լեզուների նկարագրությունը:

Հաջորդ էջին ներկայացված է արշերենի հնչյունային աղյուսակը, որի մուգ վանդակներում բերված են արշերենի նախավեղարային կողայինները, որոնց նշանակումները պատճենում են բազային համակարգում կապճային կողայինների համար ներմուծված տառանշանները, քանի որ վերջիններս արշերենում գոյություն չունեն:

Ստորև բերվում է լեզվի ձայնավորային համակարգը, որից կարելի է տեսնել, որ արշերենում դրանք երանգավորվում են ըստ ըմպանայնացման և տոնի: Վերջինս իր հերթին հակադրվում է ըստ երկարության և ըմպանայնացման:

	Դիմային					Կենտրոնական					Ետին կլորացած				
	պարզ		բարձր տոնի			պարզ		բարձր տոնի			պարզ		բարձր տոնի		
	V	V ^Կ	Ṽ	Ṽ:	Ṽ ^Կ	V	V ^Կ	Ṽ	Ṽ:	Ṽ ^Կ	V	V ^Կ	Ṽ	Ṽ:	Ṽ ^Կ
Փակ	Ի	+ ^Կ	Է	x2	+ ^Կ						Ո	+ ^Կ	Ռ	x2	+ ^Կ
Միջին	Ը	+ ^Կ	Զ	x2	+ ^Կ	Լ					Օ	+ ^Կ	Ք	x2	+ ^Կ
Բաց						Ս	+ ^Կ	Ս	x2	+ ^Կ					

Քանի որ մակկոկորդային ձայնեղ շփականն արշերենում չի հանդիպում, դրա T տառանշանը մենք *ապահունչ* (առանձին հնչյունային արժեքից զուրկ) կերպով կկցենք ձայնավորներից դրանց ըմպանայնացումն (+^Կ) արտահայտելու համար՝ միաժամանակ, եթե դա չի արգելվում ածանցման կանոններով, հյուսելով այն տառերին և ձևավորելով կապգրություններ:

Արշերենի այբբենական հերթակարգն այսպիսով ստանում է ստորև բերվող տեսքը, որում ներառված են լեզվի բաղաձայների և ձայնավորների բոլոր համարտաբերումները, ինչպես նաև ձայնավորների ըմպանայնացման գրառման T հավելանշանը:

Արշերենի այբուբեն

Ա	Ա	Ա	ԱԱ	Ա	Ր	ՐՐ	Բ	Ը	Դ	ԴԴ	Դ
a	a ^ʕ	á	á:	á ^ʕ	p	p:	b	p'	t	t:	d
Դ	Գ	Գ	Կ	ԿԿ	Կ	Կ	Կ	ԿԿ	Գ	Գ	Ը
t'	t ^w	d ^w	k	k:	g	k'	k ^w	k ^w :	g ^w	k ^w	ε
ԸԹ	Է	ԷԷ	ԷԹ	Կ	Կ	ԿԿ	Գ	Գ	Կ	Կ	ԿԿ
ε ^ʕ	é	é:	é ^ʕ	q	q'	q:	q ^w	q ^w	q ^ʕ	q ^ʕ	q ^ʕ :
Կ	Կ	Զ	Ի	Ի	Ի	ԻԻ	Է	Դ	ԴԴ	Դ	ԴԴ
q ^{ʕw}	q ^{ʕw}	ʔ	i	i ^ʕ	í	í:	í ^ʕ	ts	ts:	ts'	ts:
Գ	Գ	Դ	Զ	ԶԶ	Ը	Ը	Զ	Զ	Զ	Զ	Ի
ts ^w	ts ^w	tʃ	tʃ	tʃ:	tʃ ^w	tʃ ^w	kɫ	kɫ	kɫ ^w	kɫ ^w	ə
Ն	ՆՆ	Ծ	Ծ	ԾԾ	Ծ	Ո	Ո	Ո	ՈՈ	ՈԹ	Ս
s	s:	z	s ^w	s ^w :	z ^w	u	u ^ʕ	ú	ú:	ú ^ʕ	ʃ
ՍՍ	Ս	Ժ	ԺԺ	Ճ	Ճ	ՃՃ	Տ	Ծ	ԾԾ	Օ	Թ
ʃ:	ʒ	ʃ ^w	ʃ ^w :	ʒ ^w	ɫ	ɫ:	ɫ	ɫ ^w	ɫ ^w :	o	o ^ʕ
Չ	ՉՉ	ՉԹ	Ն	ՆՆ	Ե	Ե	ԵԵ	Ե	Ե	ԵԵ	Ե
ó	ó:	ó ^ʕ	χ	χ:	κ	χ ^w	χ ^w :	κ ^w	χ ^ʕ	χ ^ʕ :	κ ^ʕ
Ե	ԵԵ	Ե	Յ	Ի	Կ	Ի	Լ	Շ	Լ	Թ	
χ ^{ʕw}	χ ^{ʕw} :	κ ^{ʕw}	h	h	m	n	w	r	l	j	+ ^ʕ

Լակերեն առանձնակ

Լակերենն արևելակովկասյան լեզվաընտանիքի առանձին ճյուղ է և ավարերենի, լեզգերենի ու դարգերենի հետ միասին Դաղստանի առավել տարածված լեզուներից է: Ունի գրական տարբերակ՝ ձևավորված *կուճուխյան* բարբառի հիման վրա:

Լակերենում շրթնայնացումը բաղաձայների երանգավորման էական հատկանիշ է, ինչի հետևանքով բավականին հազվադեպ է և հանդիպում է ոչ բոլոր բարբառներում:

Ստորև բերվող հնչյունական աղյուսակում ցույց են տրված լակերենի բաղաձայները: Սոխրագույն վանդակներում ներկա - յացված են կապձային այն հնչյունների շրթնայնացած տարբերակները, որոնց առկայության մասին աղբյուրները հակասական տեղեկություններ են պարունակում: Ինչևէ, ներկա մոտեցմամբ դրանք ներառված են լեզվի այբուբենում:

Լակերեն

Ձև	Տեղ	Շրթնային	Կապձային			Ետկապ - ձային		Զնային	Վերա-րային		Լեզվա-կային		Մակկոր-դային	Կոկորդային
			Կենտրոն.		Կրկն-յին	C	C ^w		C	C ^w	C	C ^w		
			C	C ^w										
Պայթյունական	շնչեղ	բ	բ						վ	վ	կ	կ		ժ
	ծայնեղ	բ	բ						վ	վ				
	արտ.	բ	բ						վ	վ	կ	կ		
Կիսաշփ.	շնչեղ		թ	թ		՛	ճ							
	արտ.		թ	թ		՛	ճ							
Շփական	շնչեղ		շ			յ	յ		ւ	ւ	և	և	Յ	հ
	ծայնեղ		ժ	ե		յ	յ				ե	ե		
Ոնգային		յ	և											
Նայ		ի			Շ			լ						
Թրթռուն		լ												

Բացառությամբ կոկորդային և մակկոկորդային շարքերի, բոլոր շնչեղ պայթյունայինները, կիսաշփականները և շփականները, իրենց պարզ և շրթնայնացած տարբերակներով հանդերձ, ունեն ուժգին տեսակներ, որոնք պատկերվում են նշանի կրկնակմամբ:

Լակերենի ձայնավորային կազմը ներկայանում է 3 պարզ (a, i, u), 3 ըմպանայնացած ($a \sim a^s$, u^s , $\theta \sim \theta^s$) և 3 երկար (a:, i:, u:)

հնչյուններով, որոնցից վերջիններն արդի ռուսառատ այբուբենների ուղղագրությամբ չեն զանազանվում: Որոշ բարբառներում հանդիպում են նաև *ε* և *o* ձայնավորները:

Լակերենի այբուբենը, առանց երկար ձայնավորների և ուժգին բաղաձայների, ունի հետևյալ հերթակարգը:

Լակերենի այբուբեն

Ս	Ա	Բ	Բ	Ը	Դ	Դ	Դ	Վ	Վ	Վ
a	a~a ^ʕ	p	b	pʰ	t	d	tʰ	k	g	kʰ
Գ	Գ	Գ	[C]	Կ	Կ	Գ	Գ	Է	Ի	Ս
k ^w	g ^w	k ^{ww}	[ε]	q	qʰ	q ^w	q ^{ww}	ʔ	i	y~u ^ʕ
Տ	Տ	Փ	Փ	Դ	Զ	Ճ	Ճ	Փ	Ն	Ծ
ts	tsʰ	ts ^w	ts ^{ww}	tʃ	tʃʰ	tʃ ^w	tʃ ^{ww}	θ~o ^ʕ	s	z
Ծ	Ո	Ռ	Յ	Յ	Ժ	Շ	Պ	Պ	[O]	Լ
z ^w	u	u ^ʕ	ʃ	ʒ	ʃ ^w	ʒ ^w	x	x ^w	[o]	χ
Ե	Ե	Ե	Յ	Ի	Կ	Ն	Ի	Լ	Շ	Դ
ɛ	χ ^w	ɛ ^w	h	h	m	n	w	r	l	j

Դարգյան բարբառախումբ. դարգերեն

Դարգյան բարբառախմբի լեզուներն ավանդաբար համարվում են մեկ լեզվի բարբառներ, մինչդեռ իրականում դրանք թվով ավելի քան 15 միմյանցից հեռու և հաճախ փոխադարձաբար անհասկանալի առանձին լեզուներ են, որոնցից շատերը դեռևս գիտականորեն չեն նկարագրված:

Ի տարբերություն հյուսիսկովկասյան այլ լեզուների, դարգյան բարբառների հնչյունաբանությունը բավականին պարզ է: Դարգերենի գրական տարբերակում բացակայում են շրթնայնացած, ըմպանայնացած, քմայնացած և ուժգին բաղաձայները: Չարկ է նշել, սակայն, որ դարգյան մի շարք ենթալեզուներում և խոս-

վածքներում (ծուղախարյան, հուրեբյան, խայդագյան և այլն) երբեմն հանդիպում են շրթնայնացած և ուժգին հնչուններ:

Ատորև բերվում է *հյուսիսային* բարբառախմբի *աբուշայի* խոսվածքի հիման վրա ձևավորված գրական դարգերենի բաղաձայնական աղյուսակը:

Դարգերեն

Ձև	Տեղ	Շրթնային	Կապճային		Ետկապճային	Քմային	Վեղարային	Լեզվակային	Մակկոկորդային	Կոկորդային
			Կենտ.	Կող.						
Պայթական	շնչել	բ	բ				վ	կ		փ
	ծայնել		բ				վ	կ	բ	
	արտ.	բ	բ				վ	կ		
Կիսաշփական	շնչել		թ		ի					
	ծայնել		թ		ի					
	արտ.		թ		ի					
Շփական	շնչել	ֆ	չ		յ	ծ	ժ			հ
	ծայնել		ժ		յ		ժ	ե	ի	
Ռնգային		ց	հ							
Նայ		խ		Շ		լ				
Թրթռուն			լ							

Դարգերենի լեզվակային շարքի փակվածքի բաղաձայների արտասանության մասին աղբյուրների ներկայացրած տվյալները տարամիտում են: Ալեքսենի համաձայն, դրանք կիսաշփականներ են (qχ, ցհ, qχ'), իսկ ըստ TITUS-ի և այնտեղ բերվող գրականության՝ պայթականներ (q, ց, q'), որպիսին և պատկերված են:

Տառաձևերի վերջնական ընտրությունը կարելի է կատարել հարցի հստակեցման պարագայում՝ առայժմ ներկայացնելով ետևալեզվային կիսաշփականները պայթականներից անջատ և վերջիններից տարբերվող նշանախմբով:

Որոշ կասկածներ է հարուցում նաև մակկոկորդային ձայնեղ ? պայթականի առկայության փաստը, քանի որ գրականության մեջ մակկոկորդային և կոկորդային շարքերը միավորված են ընդհանրական «հագագայիններ» եզրույթի ներքո: Գոյություն ունեն լեզվի ակնարկներ, որոնցում համատեղված են մակկոկորդային և լեզվակային շարքերը՝ այս անգամ որպես ըմպանայիններ և այլն: Ինչևէ, այս հնչյունի արտահայտման համար այբուբեն է ներառվել առաձին տառանշան՝ Զ:

Գրական դարգերենի ձայնավորային կազմը լեզվի մշակման ընթացքում զգալիորեն պարզեցվել է: Այժմ դրանում առկա է 4 պարզ (a, ε, i, u) և մեկ ըմպանայնացած (æ~a⁵) ձայնավոր: Չակադրությունն ըստ տևողության գրական լեզվում բացակայում է, սակայն որոշ ենթալեզուներում ըմպանայնացման ավելի լայն ընդգրկման հետ մեկտեղ այն երբեմն ևս առկա է:

Գրական դարգերենի այբբենական հերթակարգն, այսպիսով, ձեռք է բերում հետևյալ տեսքը: Դրանում ներառված է նաև մի շարք բարբառներում հանդիպող օ հնչյունը, որն անհրաժեշտ է նաև օտարալեզու փոխառություններում այս հնչյունի ճշգրիտ արտահայտման համար: Ենթալեզուների գրառության համար ցանկության դեպքում կարելի է օգտվել ընդհանրական այբուբենի ընձեռած հնարավորություններից:

Դարգերենի այբուբեն

Ս	Ա	Ր	Ը	Դ	Դ	Ղ	Կ	Կ	Կ	Շ
a	æ~a ⁵	p	p'	t	d	t'	k	g	k'	ε
Կ	Կ	Կ	Ք	Է	Ի	Մ	Ք	Չ	Տ	Ճ
q	σ	q'	ʔ	ʔ	i	ts	dz	ts'	tʃ	dʒ
Շ	Փ	Ն	Ճ	Ո	Յ	Յ	Յ	Ջ	Ջ	[O]
tʃ'	f	s	z	u	ʃ	ʒ	ç	x	ʎ	[o]
Ե	Դ	Ի	Կ	Ն	Ի	Լ	Շ	Լ		
ɛ	f	h	m	n	w~v	r	l	j		

Նախյան ճյուղ. չեչեներեն

Անդրադառնանք վերջապես չեչեներենին, որը, ինչպես ասվեց, արևելակովկասյան լեզուներում առավելագույն թվով ձայնավորներն է պարունակում, որոնք երանգավորվում են որպես կարճ, երկար և ռնգային (վերջինս իր հերթին՝ կարճ և երկար):

Չեչեներենի ձայնավորների համակարգը համարտաբերումների առանձնահատկությունների հետ մեկտեղ բերված է ստորև:

	Դիմային պարզ				Դիմային կլորացած				Կենտրոնական, Ետին			
	կարճ		երկար		կարճ		երկար		կարճ		երկար	
Փակ	Ի	i	Է	i:	Ի	y	Է	y:	Ո	u	Ո	u:
Միջին	Ի	je	Է	ie	Ի	ye	Է	ye	Ո	wo	Օ	uo
	Ը	e	Ը	e:	Ը	ø	Գ	ø:	Օ	o	Օ	o:
Բաց	Ա	æ	Ա	æ:					Ա	ə	Ա	a:

Ինչպես տեսնում ենք, որոշ դեպքերում երկար ձայնավորների գրառման նպատակով կիրառվել են ոչ-տիպական տառանշաններ (Գ, Օ), ինչը, իհարկե, որոշակի նահանջ է տառակազմական ընդունված սկբունքներից, որոնց շրջանակներում, սակայն, դժվար էր գտնել ավելի հարմար հնարքներ ձայնավորների նման ծավալուն կազմի գրառման համար:

Ելնելով գրի պարզության նկատառումներից՝ ռնգայնացումն արտահայտելու համար չեն ներմուծվում առանձին կանոնավոր նշաններ, այլ *ապահունչ* կերպով կիրառվում է չեչեներենում առանձին չհանդիպող *ɜ* հնչյունի I տառանշանը, որը ռնգայնացման դեպքերում ետնակցվում է ձայնավորին:

Չեչեներենում հանդիպող 5 երկբարբառները (ej, əi, əy, ow, əu) պատկերվում են ոչ թե առանձին կցագրերով, այլ այբուբենի համապատասխան տառերով (e + j, ə + i, ə + y, o + w, ə + u):

Լեզվի բաղաձայնական կազմը համեմատաբար պարզ է: Շրթնայացումը բացակայում է, սակայն շրթնային, կապճային և ետկապճային շարքերում հանդիպում են ըմպանայնացած համ-

արտաբերմամբ հնչակիցներ: Խուսափելով հավելյալ նշաններով գրի ծանրաբեռնումից՝ նման հնչյունների արտահայտման նպատակով կկիրառենք T ապահունչ նշանը, քանի որ դրանով նշվող Գ հնչյունը ևս բացակայում է չեչեներենում:

Լեզվում հանդիպում են որոշակի թվով ուժգին բաղաձայներ, որոնք արտասանվում են որպես կրկնակ (երկարացած): Թեև այս երանգավորումը չեչեներենում համատարած բնույթ է կրում, միայն p:, t:, k:, q:, ts:, s: ուժգիններն են հանդիպում բառարմատներում և, արտահայտվելով նշանի կրկնությամբ, տվյալ այբուբեն չեն ներառվում:

Արևելակովկասյան լեզուների մեծամասնության պես չեչեներենում ևս f և v բաղաձայներն առկա են միայն օտար փոխառություններում: Հնչյունակազմի գլխավոր տարբերությունը թրթռուն բաղաձայներում ձայնեղ r և խուլ ʀ հնչյունների առկայությունն է՝ երկուսն էլ ներառված ստորև ներկայացվող նոր այբուբենում:

Չեչեներենի այբուբեն

U	W	Ա	Ս	Ը	Բ	Ը	Դ	Դ	Ղ
a~ə	ɑ:	æ	æ:	p	b	p'	t	d	f'
Կ	Կ	Կ	Ը	Ե	Ե	Գ	Կ	Կ	Ք
k	g	k'	ɛ	ɛ:	ø	ø:	q	q'	ʔ~ʔ'
Ժ	Ի	Ե	Բ	Ե	Բ	Ե	Ք	Ե	Մ
ʔ	i	i:	y	y:	je	ie	qø	yø	ʃs
Բ	Ղ	Դ	Կ	Ը	[Φ]	[Φ]	Ն	Ծ	Ո
dz	ʃs'	tʃ	dʒ	tʃ'	[f]	[v]	s	z	u
Ռ	Ո	Թ	Յ	Յ	Վ	Օ	Պ	Ե	Յ
u:	wo	uo	ʃ	ʒ	x	o	o:	ɛ	h
Ի	Կ	Ը	Ի	Լ	Ե	Շ	Լ	Դ	Լ
h	m	n	w	r	ʃ	l	j	o ^ʃ	o

Նախյան ճյուղ. ինգուշերեն

Նախյան մյուս լեզուն է ինգուշերենը, որն իր բաղաձայնակարգում նման լինելով չեչեներենին՝ տրամագծորեն տարբերվում է վերջինից ձայնավորներում:

Ինգուշերենի ձայնավորային համակարգը բաղկացած է 8 հնչյուններից՝ a, æ, ε, i, i, ə, o, u, որոնց երկարացումն ուղեկցվում է «երկարաբառացած» արտասանությամբ:

	Դիմային				Կենտրոնական				Ետին			
	կարճ		երկար		կարճ		երկար		կարճ		երկար	
Փակ	ɪ	i	ɛ	ij	ɪ	ɪ			ʊ	u	ɔ	uw
Միջին	ɛ	ε	ɛ	ie	ʊ	ə			o	o	o	uo
Բաց			ɛ	ea	ʊ	a	ʊ	a:			ɔ	oa

Ինգուշերենի այբբենական հերթակարգն, այսպիսով, ընդունում է հետևյալ տեսքը:

Ինգուշերենի այբուբեն

Ա	Վ	Ա	Ե	Ը	Բ	Ը	Դ	Դ	Ղ
a	a:	ə	ea	p	b	p'	t	d	t'
Չ	Չ	Չ	Վ	Կ	Կ	Ը	Ե	Կ	Կ
c	j	c'	k	g	k'	ε	ie	q	q'
Ք	Գ	Ի	Ե	Տ	Տ	Տ	Շ	Ի	Փ
ʔ	ʔ	i	ij	ts	ts'	tʃ	tʃ'	ɪ	f
Ն	Ճ	Ո	Ո	Յ	Յ	Օ	Օ	Ս	Ն
s	z	u	uw	ʃ	ʒ	o	uo	oa	χ
Ե	Յ	Ի	Կ	Ն	Բ	Լ	Է	Շ	Լ
ɛ	h	h	m	n	w	r	ɟ	l	j

Պատկերվածում *ie* և *uo* երկբարբառները վարընթաց են, այսինքն արտաբերման ընթացքում շեշտն ընկնում է առաջին ձայնավորի վրա, իսկ *ea* և *oa* երկբարբառները՝ վերընթաց, որոնցում շեշտվում է զույգի վերջին անդամը: Հնչյունաբանորեն դրանք գրառվում են *i:°*, *u:°* և *°æ:*, *°a:* տեսքով:

Լեզվում առկա են մի շարք այլ երկբարբառներ ևս (*ej*, *əj*, *a:j*, *oj*, *°oj*, *əw*, *a:w*), որոնք բոլորը կարելի է արտահայտել համապատասխան ձայնավորների և նայերի զուգորդմամբ, այլ ոչ թե առանձին նշաններով, ինչպես նախորդ 4 երկբարբառների դեպքում, որոնք ձայնավորների երկարացման ուրույն հետևանք են:

Բաղաձայնական համակարգում բացակայում է շրթնայնացումը, սակայն առկա է 6 ուժգին հնչյուն (*t*, *t':*, *s*, *l*, *k*, *q*), որոնք, ինչպես միշտ, արտահայտվում են նշանի կրկնակմամբ: Ներկայացված այբուբենում, սակայն, դրանք չեն ներառված:

Խինալըզ առանձնակ

Արևելակովկասյան լեզուների այբուբենների ներկայացման ավարտին անդրադառնալով այս լեզվաընտանիքի ամենաուրույն ներկայացուցիչներից մեկին՝ խինալըզերենին, որն Ադրբեջանի հյուսիս-արևելքում՝ բարձրլեռնային խինալըզ գյուղում բնակվող փոքրաբանակ՝ մոտ 2000 ներկայացուցիչ ունեցող մի էթնոսի (ինքնանվանումը՝ *քեթիթուրդուր*, *քեթշ*) լեզուն է:

Նախկինում համարվում էր, որ խինալըզերենը պատկանում է լեզգյան խմբին, և քըռըծերենի ու բուդուխերենի հետ միասին ընդգրկվում էր հարավային՝ *շահդադյան* խմբում: Հետագայում այն սկսեց դիտարկվել որպես առանձնակ՝ առանձին և ինքնուրույն ճյուղ արևելակովկասյան լեզուներում:

Խինալըզերենը հնչյունական առումով մոտ է իր անմիջական հարևաններին՝ քըռըծերենին և բուդուխերենին:

Բաղաձայնական համակարգը բարդ չէ: Ըմպանայնացումն ու շրթնայնացումը բացակայում են, իսկ «բաղաձայն + w» բոլոր միակցություններում երկրորդ բաղադրիչն ինքնուրույն հնչյուն է: Լեզվում առկա են շնչեղների ուժգին հնչակիցներ:

Ձայնավորային կազմը բավականին բազմազան է և հանդես է գալիս 6 պարզ (a, e, i, i, o, u) և 3 շրթնայնացած (æ, œ, y) հնչյուններով: Լեզվում կա նաև մի քանի երկբարբառ, որոնք կգրառվեն բաղադրիչ հնչյունների տառանշանների զուգորդմամբ:

Տեղեկություններ կան խինալըգերենում ձայնավորների ռնգայնացման վերաբերյալ, ինչը սովորաբար առաջանում է փակ վանկերում ետնալեզվային բաղաձայներից առաջ ձայնավորին հաջորդող ո նայի ազդեցության ներքո: Քանի որ տվյալ երանգավորումը հիմնականում դիրքային բնույթ ունի, այդպիսի ձայնավորները կանոնական այբուբենում ներառված չեն:

Անհրաժեշտության դեպքում, սակայն, կարելի է օգտվել ավար-անդյան լեզուներից ախվախերենի և կարատերենի ռնգայնացած ձայնավորների արտահայտման նշանային համակարգից:

Խինալըգերենի այբուբենը ներկայացված է ստորև:

խինալըգերենի այբուբեն

Ա	Ա	Ր	ՐՐ	Բ	Ը	Ղ	ՂՂ	Դ	Ղ	Կ
a	æ	p	p:	b	p'	t	t:	d	t'	k
ԿԿ	Կ	Կ'	Ը	Ե	Կ	Է	Ի	Ե	Մ	ՄՄ
k:	g	k'	e	œ	q:	ʔ	i	y	ts	ts:
Ք	Ղ	Դ	ԴԴ	Ճ	Շ	Պ	Լ	Բ	Փ	
dz	ts'	tʃ	tʃ:	dʒ	tʃ'	kx	i	qx	qx'	f
Փ	Ն	Ճ	Ո	Յ	Յ	Ճ	Յ	Օ	Ն	Ե
v	s	z	u	ʃ	ʒ	x	ɣ	o	χ	ɛ
Յ	Դ	Ի	Կ	Ն	Ի	Լ	Շ	Լ		
h	ɣ	h	m	n	w	r	l	j		

§5. Ալանաց (օսական) այբուբեն

Գրքի ողջ շարադրանքի ընթացքում շեշտելով կովկասյան լեզուների համար լիակատար հնչյունային գրի անհրաժեշտությունը՝ հարկ ենք համարում անդրադառնալ նաև ալաներենին (կամ օսերենին), որը, պատկանելով հանդերձ հնդեվրոպական լեզվաընտանիքին (իսկ ավելի ստույգ՝ հնդիրանական լեզվախմբի իրանական ճյուղի արևմտասլյութական ենթախմբին), երկուսուկես հազարամյակից ավելի կենտրոնացած է Մեծ Կովկասի հյուսիսակողմում և դարերի ընթացքում մեծ ազդեցություն է կրել շրջակա լեզուներից՝ ձեռք բերելով կովկասյան լեզուներին բնորոշ բաղաձայնական հնչակարգ:

Այս լեզվի գիրը ևս, ստեղծված լինելով սլավոնական հենքի վրա, կրում է նույն թերություններն ու անհամատեղելիությունները, որոնք մանրամասն քննարկեցինք գրաբանությանը նվիրված հատվածում և այստեղ այլևս չենք մեկնաբանի:

Չետևելով այդ տրամաբանությանը՝ օսերենի համար ևս կառուցել ենք այբուբեն, որն իր նշանակարգով մոտ է կովկասյան երկու լեզվաընտանիքների այբուբեններին: Միևնույն ժամանակ, օսերենը, գրեթե զուրկ լինելով երկրորդային արտաբերումներից և պարունակելով միայն մի քանի շրթնայնացած հնչյուն, կարիք չունի ածանցումների այն ամբողջ համակարգի, որն այդքան անհրաժեշտ է հյուսիսկովկասյան լեզուների գրառման համար: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ օսերենի այբուբենին տրվել է ավելի մեծ ներքին ազատություն ու բազմազանություն՝ մոտեցնելով այն հարավկովկասյան այբուբենների տիպին:

Հաջորդ էջում առաջարկվող այբուբենի մեծատառ և փոքրատառ նշանների միջոցով բերված է օսերենի հնչյունաբանական նկարագրությունը: Անշուշտ, ցանկության դեպքում օսերենի գրառության համար ևս կարելի է կիրառել արևմտա-կամ արևելակովկասյան բազային համակարգից արտածված մասնավոր այբուբեն, սակայն *տարբեր լեզվաընտանիքների լեզուների համար անկախ այբուբենների ներմուծման գաղափարը* մեզ ավելի գրավիչ է պատկերացել:

Օտերն

	Շրթային	Կապճային	Նականային	Նականային	Քնային	Վերարային		Լեզվակային	
						Կ	Կ ^w	Կ	Կ ^w
Չայրակապ	Նվեր	Դ	դ			Կ	Կ ^w	Կ	Կ ^w
	ճայեր	Դ	դ			Կ	Կ ^w	Կ	Կ ^w
Կիսակապ	Նվեր	Ճ	ճ	Ճ		Կ	Կ ^w	Կ	Կ ^w
	ճայեր	Ճ	ճ	Ճ		Կ	Կ ^w	Կ	Կ ^w
Ուղղակի	Նվեր	Ճ	ճ	Ճ		Կ	Կ ^w	Կ	Կ ^w
	ճայեր	Ճ	ճ	Ճ		Կ	Կ ^w	Կ	Կ ^w
Քրթույն	Նվեր	Ճ	ճ	Ճ		Կ	Կ ^w	Կ	Կ ^w
	ճայեր	Ճ	ճ	Ճ		Կ	Կ ^w	Կ	Կ ^w

	Դիմային	Կենտրոնական	Նախն կիրառած
Փակ	Ի	Է	Ո
Միջին	Ե	Ա	Օ
Բաց		Ա	Ս

Ծանոթագրություն.

Նշեք, որ բուն օտերնում կապճային և նականային չփակաները չեն տարբերակվում (արտասանությունը միջանկյալ դիրք ունի):

Դրանց գրատարածան համար կիրառվեն կապճային չփականների նշանները: Այսուամենայնիվ, փոխառյալ բառերի ճգրիտ ներկայացման նպատակով ներմուծում ենք նաև նականային չփականների տառանշաններ պատկերված նորմադրյալ վանդակներում:

Քանի որ օսերենը հնչյունական իմաստով շատ ավելի մոտ է ներկայիս Հարավային Կովկասի բնիկ լեզուներին՝ հայերենին և վրացերենին, տարբերվելով վերջիններից միայն շրթնայնացած մի քանի բաղաձայների առկայությամբ, դրա տառանշանների այբբենական հերթակարգը սահմանել ենք հարավկովկասյան այբուբենների հենքի վրա, որոնք, իրենց հերթին, հանգում են փյունիկյան և հունական գրային համակարգերի կաղապարներին: Սակայն եթե հայոց այբուբենը հունական բնօրինակում բացակա հնչյուններն ըստ էության միաձուլում է այբբենական հաջորդականությանը, ապա վրացականն իր հավելումները կցում է գերազանցապես այբուբենի վերջնամասին: Աղվանից գիրն այս իմաստով կրկնօրինակում է հայկական հերթակարգը՝ հավասարաչափ տեղաբաշխելով վերջինում բացակա ուրույն հնչյուններն ըստ փոխառված հաջորդականության:

Օսերենի այբուբենի համար որպես հիմք է ընտրվել աղվանից և հայոց այբբենակարգերի համադրությունը. շարվելով ըստ հայկական կարգի՝ օսերենի՝ հայերենում բացակա պարզ հնչյունները դասավորվում են աղվանից գրում դրանց դիրքի համաձայն:

Ալանաց այբուբեն

Ս	Բ	Կ	Գ	Դ	Ե	Ծ	Ա	Ի
a	b	g	g ^w	ɔ	ε	z	æ	i
Դ	[ժ]	Ի	Շ	Լ	Ե	Յ	Վ	Ջ
t	[ʒ]	i	l	χ	χ ^w	tʰ	kʰ	k ^w
Յ	Ե	Ձ	Կ	Լ	Դ	Ք	Ն	[Ղ]
dz	ɛ	tʃ	m	j	q	q ^w	n	[ʃ]
Օ	Ճ	Ը	Ճ	Լ	Տ	Վ	Ղ	Ի
o	tʃ	pʰ	dʒ	r	s	v	tʰ	w
Յ	Ո	Փ	Ը	Կ	Փ			
ts	u	f	p	k	k ^w			

§6. Ուղիերենի «աղվանից» այբուբեն

Նյութի շարադրանքը ցանկանում ենք ամփոփել արևելակովկասյան լեզուների լեզգյան խմբի առանձնահատուկ մի լեզվի՝ ուղիերենի այբուբենի քննարկմամբ, որի խնդիրը գիտակցաբար խուսափել ենք արժարժել այս ճյուղի լեզուները նկարագրելիս:

Ուղիերենը, որով այժմ խոսում է ընդամենը մոտ 8000 հոգի Ադրբեջանի Նիջ և Վարդաշեն (ներկայումս՝ Օղուզ) ու Վրաստանի Չինոբիանի (սախկին Օկտոմբերի) գյուղերում, համարվում է Բուն Աղվանքի տարածքի բնիկ լեզվի արդի վերջին ժառանգորդը՝ սինայական կրկնագիր մագաղաթի վերծանված լեզվի հետ ցուցաբերելով մի շարք ընդհանրություններ ինչպես հնչյունային, այնպես էլ քերական առումներով:

Հաշվի առնելով ուղիերենի այսօրինակ բացառիկ կարգավիճակը՝ այս լեզվի համար որպես պատմական եզակի ժառանգության նմուշ՝ կարելի է առաջարկել աղվանից այբուբենի այն հատվածը, որը համընկնում է ժամանակակից ուղիերենի հնչյունական հոլովույթի հետ: Կիրառելի է, անշուշտ, նաև լեզգյան լեզուների այբբենական կաղապարը, ուստի երկու այբուբենները կներկայացնենք կողք կողքի՝ վերջնական ընտրություն չկատարելով դրանց միջև:

Հաջորդ էջին ներկայացվում է ուղիերենի հնչյունական աղյուսակը երկու՝ արևելակովկասյան և աղվանից այբուբեններով: Դրա մուգ վանդակներում աղվաներենի այն հնչյուններն են, որոնք կորսված են ժամանակակից ուղիերենում՝ Ի (d^j), Շ (t^j), Ծ (ts^j), Կ (dz^j), Գ (ts^b), Լ (n^j), Պ (l^j), Ե (ζ), Է (w): Այս տառերի հնչյունային արժեքները թեականորեն են վերականգնվում անգամ աղվաներենում, քանի որ ձևաբանական համեմատությունների համար բավարար տվյալներ չկան:

Աղվաներենում վերականգնվում է նաև «բմայնացած» ետկապճայինների մի շարք, ներկայացված համապատասխան տառանշաններով՝ Ա (tj^j), Ը (dz^j), Խ (tj^b), Ց (j^j), Ր (z^j), որի ուղղակի համապատասխանությունն արդի ուղիերենի հնչակազմի հետ դժվար է վերջնականորեն ճշտված համարել, քանի որ գրակա-

Ուղիերեն

Ձև	Տեղ	Երթևային	Կազմային		Ետկազմային		Քմային	Վեղարային	Լեզվակային	Ընթացմային	Կոկորդային
			Ը	Օ	Շ	Բ/Օ					
Պայթակալ	շնեղ	Բ	Գ	Ծ				Գ	Կ		
	ձայնեղ	Բ	Գ	Ի				Վ	Օ		
	արտ.	Ը	Ղ	Ն	Շ			Վ	Շ	Գ	
Կիսաշնիկալ	շնեղ		Պ	Ի	Շ	Ճ	Մ				
	ձայնեղ		Ք	Ն	Ե	Ճ	Մ				
	արտ.		Ք	Ձ	Գ	Ճ	Խ				
Ըիակալ	շնեղ	Փ	Ջ	Ե		Ե	Ճ		Ե	Գ	Ե
	ձայնեղ	Փ	Խ	Յ		Ե	Ճ		Ե	Տ	Ե
Ուղային	Կ	Գ	Բ	Կ	Լ						
Նայ		Ի									
Կողային			Օ	Գ	Կ						
Թիթուն			Լ	Ժ							

նության մեջ ուղիերենի ետկապճայինների տվյալ շարքն աղբյուրների մի մասը³⁸ նկարագրում են որպես բնայնացած, մյուսները (TITUS և անդր բերված գրականությունը³⁹)՝ ուժգին: Ինչևէ, արևելակովկասյան բազային համակարգի նշանակումների բազմությունից դրանց կարելի է հատկացնել բոլորակ տառաձևերը, քանի որ շրթնայնացումն ուղիերենում բացակայում է:

Արդի ուղիերենի ձայնավորային համակարգը համեմատաբար պարզ է. առկա է 6 հիմնական ձայնավոր (a, e, i, ə, o, u) իրենց ըմպանայնացած (a^ʷ, e^ʷ, i^ʷ, ə^ʷ, o^ʷ, u^ʷ) և շրթնայնացած հնչակիցներով (æ, œ, y): Ձայնավորակարգերում ուղիերենի և աղվաներենի նմանություններն ավելի քիչ են, քան բաղաձայներում, քանի որ կրկնագիր մաղազաթում հանդիպում է միայն 7 պարզ հնչյուն՝ Ջ (a), Ս (ɑ), Ե (e), Կ (i), Օ (o), ՕԻ (u), ՍԻ (y):

Աղվաներենում բացակայում են ə և œ հնչյունները, որոնք ուղիերենում ըստ երևույթին առաջ են եկել թյուրքական լեզուների ազդեցությամբ, սակայն առկա է Ը նշանով ներկայացված հնչյունը, որը տառադարձվում է որպես երկար e: ձայնավոր կամ ej երկբարբառ: Ուղիերենի ըմպանայնացած ձայնավորների շարքին աղվաներենում կարող են համապատասխանել ձայնեղ ըմպանային շփականի ɔ տառանշանի և պարզ ձայնավորների զուգորդումները: Աղվաներենի Ս (ɑ) և ՍԻ (y) ձայնավորները ևս ենթադրվում են որպես թեթև ըմպանայնացած:

Ինչպես արդեն ասվել է, ուղիերենի համար ներմուծվել է երկու այբուբեն: Առաջինը հյուսիսկովկասյան ընդհանրական այբուբենից հետևող կանոնավոր համակարգն է, երկրորդը՝ արդի ուղիերենի հնչակազմին հարմարեցված աղվանից այբուբենը: Զննարկենք երկու այբուբենները միմյանցից անջատ:

1. *Արևելակովկասյան հիմք*: Ուղիերենի բաղաձայնակարգն ամբողջապես կարելի է արտահայտել արևելակովկասյան այբուբենի նշանային հիմքով: Դրանում ուժգին ետկապճային հնչյուն -

³⁸ W. Schulze. *A Functional Grammar of Udi*, 2005 (lrz.de/~wschulze/FGU.htm)

³⁹ Панчвидзе В. Н., Джейранишвили Е. Ф. *Удинский язык / Языки народов СССР*. М., 1967. Т. 4. Иберийско-кавказские языки.

Ների արտացոլման համար ներմուծվում են բոլորակ նշաններ, իսկ բաղաձայների ըմպանայնացումն արտահայտելու նպատակով՝ ածանցավոր: Երկբարբառները գրառվում են տառակցում-ներով: Արդյունքում ստանում ենք հետևյալ հերթակարգը:

Ուղիերենի այբուբեն (արևելակովկասյան հիմք)

Ա	Ա	Ա	Բ	Բ	Ը	Դ	Դ	Դ	Կ	Կ
a	a ^ʕ	æ	p	b	p'	t	d	t'	k	g
Կ	Ը	Ը	Ե	Ե	Կ	Կ	Ի	Ե	Բ	Մ
k'	ε	ε ^ʕ	œ	q	q'	i	i ^ʕ	y	ts	dz
Մ	Մ	Ն	Շ	Շ	Ջ	Ջ	Խ	Գ	Փ	Փ
ts'	tʃ	dʒ	tʃ'	tʃ:	dʒ:	tʃ:	ə	ə ^ʕ	f	v
Շ	Շ	Ո	Ո	Ս	Ս	Ժ	Ժ	Օ	Ք	Ն
s	z	u	u ^ʕ	ʃ	ʒ	ʃ:	ʒ:	o	o ^ʕ	χ
Ե	Ի	Մ	Ն	Լ	Շ	Լ				
ɛ	h	m	n	r	l	j				

2. *Աղվանական հիմք*: Արդի ուղիերենին աղվանից գրի հարմարաբերումն ուղեկցվում է մի շարք բարդություններով: Եթե այբուբենի այն հատվածը, որն արտահայտում է աղվաներենի բաղաձայնակարգը, որոշակիորեն կարելի է համապատասխանեցնել ուղիերենի բաղաձայներին, ապա ձայնավորային համակարգի պարագայում միարժեք համապատասխանություն գոյություն չունի աղվաներենում անհրաժեշտ նշանակազմի բացակայության պատճառով:

Ուստի, ստիպված ենք կիրառել զուգորդումներ ոչ միայն երանգավորումների արտահայտման, այլև որոշ պարզ բաղաձայների (ə, æ, œ) գրառման համար՝ միևնույն ժամանակ մնալով աղվանից այբուբենի ձևույթի շրջանակներում:

Այսպես, աղվաներենի ձայնեղ ըմպանային շփականն արդի

ուղիներենում չի հանդիպում, հետևաբար դրա Ե տառանշանը կարելի է կիրառել ուղիներենի ձայնավորների ըմպանայնացումն արտահայտելու նպատակով:

Նշենք, որ աղվանից այբուբենի Ի նշանը գործածվել է և ձայնավորի երկագիր գրության համար՝ ՕԻ, ինչը հին հունարենի ՕΥ երկբարբառի պատճենն է՝ նման հայոց ՌԻ և վրաց ՉԿ կապգրություններին, որոնք արտահայտում են պարզ և ձայնավորը՝ չենթադրելով երկբարբառ օս արտասանություն՝ ինչպես հին հունարենում: Նույն տրամաբանությամբ է կառուցված նաև աղվաներենի Կ ձայնավորի ՆԻ երկագիրը (Ն նշանը սինայական մագաղաթում առանձին չի հանդիպում):

Հայկական գրային ավանդույթից աղվանականին է անցել նաև Ի օժանդակ նշանի գործածության սկզբունքը՝ որպես ՋԻ (aw), ԵԻ (ew), ԿԻ (iw) երկբարբառների երկրորդ հնչյունային բաղադրիչի տառանշանի: Հայերենի ուղղագրության նմանությամբ՝ աղվաներենում ևս այն միջձայնավոր դիրքում կիրառվել է Խ (v) հնչյունի փոխարեն: Օտարալեզու կաղապարներում, սակայն, ինչպես, օրինակ, ՋՕԻԻԸԻ (Mowsēs) անվան մեջ, ՕԻ երկագիրն ըստ երևույթին կարդացվել է հենց որպես օw, այլ ոչ ւ: Այսպիսով, Ի նշանն աղվանից գրում առանձին չէր հանդիպում և, ի տարբերություն հայկական զուգահեռի՝ Ի-ի, զուրկ էր երկշրթնային w-ին մոտ սեփական հնչյունային արժեքից:

Տվյալ մոտեցմամբ մենք կիրառվել ենք ձայնավորների արխայիկ երկագիր կաղապարից՝ Ն նշանն ուղղակիորեն համապատասխանեցնելով Կ ձայնավորին: Ի նշանը, իր հերթին, կկիրառվի ուղիներենի և հնչյունի արտացոլման համար:

Ուղիներենում աղվաներենի Ե և Ե ձայնավորների բացակայությունը թույլ է տալիս դրանց համապատասխանող Ը և Ն տառանշաններին վերագրել Ե և Ե հնչյունային արժեքները, որոնք Ը, իրենց հերթին, չեն հանդիպում աղվաներենում: Այսպիսով, մնում է միայն Ե հնչյունը, որին զուգահեռ նշան աղվանից այբուբենի ձայնավորների նշաններում գոյություն չունի: Ուստի, դրա գրառության համար հնարավոր է մի քանի տարբերակ.

ա) *կապգրություն*. կարելի է կիրառել ՕՋ (o+ε), ԸԴ (æ+u) կամ ԸԵ (æ+⁵) կցագրերը, որոնք ժամանակակից ուղիներենում չկան;

բ) *առանձին նշաններ*. կարելի է սահմանել հատուկ կանոն, ըստ որի՝ Ե տառանշանն առանձին գործածվելու դեպքում ընթերցվում է որպես æ, իսկ այլ ձայնավորների հետ զուգորդումներում մատնանշում է դրանց ըմպանայնացումը:

գ) *փոխատեղում*. կարելի է վերցնել աղվանից գրի այն տառանշանները, որոնք բացակայում են ուղիներենում և վերագրել դրանց ձայնավոր հնչյունային արժեք: Այս նպատակով գործածելի են կապճային «քմայնացած» շարքի ողջ նշանակազմը՝ Ի, Շ, Ծ, Կ, Բ, Լ, Դ: Դրանցում առավելագույն պարզությամբ աչքի են ընկնում Ի, Շ և Լ տառերը, որոնցից որևէ մեկին էլ կարելի է վերագրել æ հնչումը:

Վերոնշյալ բոլոր տարբերակներից մեզ առավել տնտեսող է պատկերանում երկրորդը՝ Ե տառանշանի երկակի կիրառումը, ինչի միջոցով էլ ներկայացնում ենք ուղիերենի համար աղվանից գրի հարմարաբերված տարբերակը՝ Երևանի Մատենադարանի MS No. 7117 ձեռագրից հայտնի այբբենական հերթակարգով:

Ուղիերենի այբուբեն (աղվանական հիմք)

Ձ	Ե	Ը	Գ	Ե	Յ	Ը	Ք	Չ
a	b	g	d	e	z	æ	ʒ	tʃ
Խ	Լ	Ղ	Կ	Ե	Դ	Գ	Ձ	Ը
tʃ ^o /tʃ:	j	ʒ ¹ /ʒ:	i	æ, + ⁵	l	χ	ts'	dʒ ¹ /dʒ:
Ճ	Կ	Ի	Ս	Ս	Թ	Ձ	Գ	Կ
k'	h	q	ə	tʃ ^o /tʃ:	tʃ'	m	q'	n
Ժ	Գ	Օ	Դ	Ք	Յ	Գ	Տ	Լ
ʃ	dʒ	o	f	dʒ	tʃ	p'	ɛ	r
Ի	Ե	Ք	Ց	Ս	Դ	Ի	Կ	Է
s	v	f'	ʃ ^o /ʃ:	y	ts	u	p	k

§7. Հաշվարացման սկզբունքները

